



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

41

-50

30934-42

102-42

Լիգուրի ԿԼ

Համալսարանի Կապուցյան

Կոնվուկտի Կ. Ա. Ալֆրեդո

Կոնվուկտի Կ. Ա. Ալֆրեդո

Կ. Ա. Ալֆրեդո

1902.

241

L-51

46



85-50157

Խ Ր Ա Տ Ք

ՔՐԻՍՏՈՆԷԱԿՍՆ ԿԵՆԱՑ

Այսին շաբաթ կամ գիտե՛ տաս
նըհինգ օրը մէջը խոստովանե՛
գիտուն և ըստհայաշտ խոստովա-
նահօր մը, նախ ըմդհանուր խոս-
տովանանք մը ըլլալով և միշտ
խիղճդ ու սիրտդ իրեն բամալով,
նաև արտաքին բաներուն մէջ,
որպէս զի սիրտդ և խիղճդ համ-
դարտ ըլլայ թէ Աստուծոյ կամքը
կը կատարես:

Չմոռնաս առնիրը սուրբ պահի,
ծառայական գործերէն ու մեղքէ
զգուշանալով, քարի գործեր կա-
տարելով, մանաւանդ հիւանդաց
այցելութեան երթալով, եկեղե-
ցական հանդէսներու, քարոզի և
ասոնց մման քաներու:

Առտու անկողնէդ ելածիդ պէս
խաչելութեան կամ սրբոյ պատ-
կերի մը առջև չոքած առաւօտեան
աղօթքն ըսէ:

Սուրբ պատարագը տես, և պա-
տարագի ժամանակ կամ ուրիշ
ատեն կէս ժամ մը կամ քառորդ
մը մտածականով անցուր (—բ—ն
հ—հ—բ' թէ' ըն—ըն թէ' —բ—տ—ն—ըն
թէ' —բ—ն—ըն լե—ի—տ—բ' ներ—ըն—
թէ—ն ին լ—տ—բ' լե—ն —թ—, Բ—ց
ի —թ—ն —նգ—հ—ն—ն հ—ն—ն—բ' ներ—
ըն—թէ—ն):

Ինչ ցամաքութիւն ալ զգաս, ինչ
զբաղանք ալ ունենաս՝ մտածա-
կանը զանց մի՛ ընել, գործիդ
ժամանակն ալ կրնաս ընել, սուրբ
Ալփոնսոս լիգուորի կ'ըսէ թէ,
եթէ մտածականը չթողուս՝ ամ-
շուշտ կը փրկուիս:

Գործի մը ձեռք զարմելէդ առաջ
ըսէ:

“Տէր, քու սիրոյդ համար
կ'ընեմ այս գործս, դու օրհնէ այս
գործս”:

Օրուան մէջ յիշէ միշտ՝ որ Աս-
տուած զքեզ կը տեսնէ, կը լսէ
և պիտի դատէ, ու ըսէ:

“Յիսուս իմ ողորմեա՛. սուրբ
Աստուածածինն ողորմեա՛”:
Նոյնը ըսէ եռանդագին փորձութեանց
ատեն. թէ որ փորձութիւնը չանցնի՝
դու հաւատքով ու վստահութեամբ
առաջ տար աղօթքդ և ապահով
կողի որ կը յաղթես:

Փախիր դատարկութենէ և գէշ
ընկերներէ. ու անհաստատ և եղ-
բայրսիրութեան դէմ խօսակցու-
թենէ:

Զգուշացիր ամենայն զգայարա-
նացդ պահպանութեանը, մանա-
ւանդ աչքիդ, կոկորդիդ և լեզուիդ:

Թէ որ յանկարծ մեղք մը գործես,
մէկէն զղջում ըրէ, և թէ ող ծանր
ըլլայ մեղքը՝ փութա խոստովանիլ:

Չշտացդ մէջ ստէպ ըսէ:

“Ամեն քանի մէջ օրհնած և

միշտ և յաւիտեան փառաւորեալ
ըլլայ Աստուծոյ արդար, գերագոյն
և հանոյական կամքը ,, : (100
օրհան Ներգլխաւորութիւն Վերջաւ
ընդ, և լիւսարժէք՝ արժէ ՚ը ընդը):

Կերակրէն վերջը, գոնէ տօնի
օրեր, կէս ժամ մը կամ քառորդ
մը հոգևոր գիրք մը կամ սրբոց
վարք մը կարդա: Ետքը սրբու-
թեան ու Աստուածածնայ այցե-
լութեան գնա:

Դրիկունը ընտանիքով վարդա-
րանը ըսէ: Պատկելէն առաջ ծաւնի
չոքած շնորհակալ եղիր Աստու-
ծոյ, լոյս խնդրէ, խիղճդ քննէ և
զղջում ըրէ:

Անկողինն որ մտնես, օրհնած
ջրով երեսդ խաչակնքելէդ վերջը՝
ծեռքերդ խաչածև կուրծքիդ վրայ
դնելով ըսէ.

“ Պիտի մեռնիմ. չեմ գիտեր
ո՛ւր ... չեմ գիտեր ինչպէս ... չեմ
գիտեր ե՛րբ ... ”:

“ Յիսուս, Յովսէփ և Մարիամ,
սիրտս ու հոգիս ձեզի կու տամ.
Յիսուս, Յովսէփ և Մարիամ, վերջի
հոգեվարութեանս ատեն քովս

գտնուեցէք. Յիսուս, Յովսէփ և
Մարիամ հաշտ ընդ ձեզ հոգիս
աւանդեմ ,, :

(300 օրհան Ներգլխաւորութիւն - - -):

Միշտ արթուն կեցիր աղօթելու.
առանց աղօթքի բաւական շնորհք
չենք առնուր՝ Աստուծոյ պատուի-
րանքները պահելու և մինչև վեր-
ջը յարատևելու, ուստի ո՛վ որ
կ'աղօթէ՝ կը փրկուի, ով որ
չաղօթէր՝ կը դատապարտուի:

Ամեն կիրակի և խոստովանան-
քէդ առաջ, կարդա աս խրատներս
և քննէ ու շտկէ քու պակասու-
թիւններդ և նշդութեամբ պահէ:
“ Զայս արա և կեցցես ,, :



ԽՐԱՏՔ ԱՌ ԶՐԻՍՏՈՆԵԱՅՍ

Կարճ է կեանքը և մահը ստոյգ,
իսկ մահուան ժամն անստոյգ:
Մէկ հոգի մը միայն ունիմք,
թէ ան ալ կորսուի ի՞նչ կ'ըլլայ:
Կը տեսնէ զիս Աստուած,
Պիտի դատէ զիս Աստուած,
Արքայութիւն և կամ դժոխքն է
իմ բաժինս:
Թէ կորսնցրնեմ այս ժամանակն
որ ունիմ,
Մահուան ատեն չեմ գտներ:
Ամեն բան կը լմնայ և շուտ կը
լմնայ,
Յաւիտեանականութիւնը երբէք չի
լմնար:

Ա Ղ Օ Թ Ք

Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն



Ա Ղ Օ Թ Ք

Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Յամուև չօր և Որդւոյ և Տղայն
սրբոյ, ամէն:

Աստուած իմ, քեզ երկիր պապա
նեմ. շնորհակալ եմ ինձի ըրած
անբաւ բարիքներուդ, և մասնա
ւորապէս զիս այս առտուս չաս
ցընելուդ համար:

Ամէն սրտովս կը սիրեմ զքեզ,

և ինչ որ ընեմ ու կրեմ՝ բողոքն
ալ քեզի կ' ընծայեմ :

Կ' առաջագրեմ ամէն մեղքէ
փախչիլ, և կ' սողաչեմ, ո՛վ Տէր,
որ Յիսուսի սիրոյն համար տաս
ինծի արիութիւն : Կ' առաջա-
գրեմ մասնաւորապէս քու կա-
մացդ հետ միանալ և ինչ նեղու-
թիւն ալ որ խաւրես ինծի՝ միշտ
աս ըսեմ. Տէր, քու կամքդ ըլլայ,
Յիսուս, դու ձեռք տուր ինծի
այսօր, դու պահասպան հրեշ-
տակս և դուք սուրբք ամենայն՝
օգնեցէք ինծի :

Հայր մեր :

ԱՂՕԹՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐՆ

Ո՛վ անարատ կոյս Մարիամ,
սիրուհի և մայր իմ, կը ցանկամ
միշտ Յիսուսինն ու քու կգ ըլլալ :
Գու զիս խնամէ և պահէ ամէն
մեղքերէ : Օրհնէ զիս, ո՛վ դուս-

տըր Հօր յաւիտենականի, և մի՛
թողուր որ ամենաբարի Աս-
տուածս վշտացընեմ իմ խոր-
հուրդներովս :

Օրհնէ զիս, ո՛վ մայր Յիսու-
սի, և մի՛ թողուր որ ամենա-
բարի Աստուածս վշտացընեմ իմ
խօսքերովս :

Օրհնէ զիս, ո՛վ հարսն Հոգւոյն
սրբոյ, և մի՛ թողուր որ ամե-
նաբարի Աստուածս վշտացընեմ
իմ գործերովս, մանաւանդ թէ
ամենայն սրտով սիրեմ միշտ
զինքը, և ուրիշներու ալ սիր-
ցընել տամ, սիրելի մայր իմ
Մարիամ :

Ողջոյն քեզ :

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱՌԱՏՈՅ

Հաստատուն հաւատքով կը
հաւատամ, ինչպէս որ յայտնած
է Աստուած կաթողիկէ եկեղե-
ցոյ, թէ Աստուած մէկ է, ան-

ձինքը երեքս հաւատարբ և զանա-
 զանք, որ Հայր և Արդի և Սուրբ
 Հոգի կը կոչուին. թէ Արդին՝
 մարմնացաւ, մարդացաւ Հոգ-
 ւով սրբովի Մարիամայ կուսէն,
 մեզի համար խաչին վրայ մեռաւ,
 յարեաւ, երկինք վերացաւ, և
 պիտի դայ աշխարհիս ետքը
 կենդանիներն ու մեռեալները
 դասելու. արդարներուն յա-
 շիտենական արքայութիւն աա-
 յով և մեղաւորաց դժոխք: Ար
 հաւատամ դարձեալ այն ամեն
 բաներուն՝ որ կը հաւատայ
 և կը սորուեցընէ սուրբ եկե-
 ղեցին:

ՆՆՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև
 ամենակարող ես և ամենաբարի
 և ամենագութ, Յիսուսի փրկի-
 ճին մերոյ չարչարանաց և մա-

հուան արդեամբք՝ կը յուսամ որ
 կը պարգևես ինձի յաշիտենա-
 կան կեանքըս զոր խոստացար
 բարի քրիստոնէից, ինչպէս որ
 քու սգնութեամբդ ես ալ կ'ա-
 ռաջագրեմ ըլլալ:

ՆՆՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Ո՛վ Աստուած իմ, որովհետև
 գերագոյն բարի ես, ամենայն
 սրտովս կը սիրեմ զքեզ, ամեն
 բանէ վեր. և աւելի յանձն կ'առ-
 նում յամենայնէ զրկուիլ՝ բան
 թէ զքեզ դառնացընել. քու սի-
 րոյդ համար անձիս պէս կը
 սիրեմ նաև զուրիշներն ալ:

ՆՆՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂԶՄԱՆ

Ո՛վ Աստուած իմ, ամենաբարի
 ըլլալուդ, և ամեն բանէ աւելի
 զքեզ սիրելուս, կը զղջամ ու
 կը ցաւիմ ճշմարիտ սրտով զքեզ

դառնացրնեւ լուս, և քու սուրբ
շնորհքովդ հաստատապէս կ'ա-
ռաջագործեմ մէյմ'ալ չմեղանչել
և ամենայն մեղաց առիթներէ
փախչիլ :

Հայր մեր, Ողջոյն քեզ :



ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԱՌԱԾԻ

ՄՏԱԾՈՒԹԻԻՆՔ

ՎԱՍՆ ԱԻՈՒՐՑ ԵՕԹՆԵԿԻ

ԿԻԻՐԱԿԷ

Մարդոշու վախճանիկն վրայ .

Ա. Մտածէ, հոգի իմ, որ այն
էս լծիւնն որ ունիս, Աստուած
տուեր է քեզի, ստեղծելով զքեզ
ի սրտակեր իւր առանց քու ար-

1008
35742

Handwritten notes and a circular stamp at the bottom of the page.

դեանցդ, որգեգրելով մկրտու-
 թեամբ սուրբ աւագանին, ու
 հօրմէ մը աւելի սիրելով զքեզ,
 և անոր համար ստեղծեր է զքեզ,
 որպէս զի սիրես ու ծառայես
 իրեն այս աշխարհիս մէջ, ու
 վայելես զինքը յարքայութեան:
 Անոր համար չես ծնած՝ որ
 ապրիս, զուարճանաս, հարստա-
 նաս, զօրաւոր ըլլաս, ուտես ու
 խմես, քնանաս անբաններու պէս,
 այլ միայն քու Աստուածդ սիրես
 ու յաւիտենական փրկութեանդ
 հասնիս: Եւ Աստուած իր ամեն
 ստեղծածները պարգևեր է քեզի,
 որ անոնց օգնութեամբն այդ
 մեծ վախճանիդ հասնիս: Բայց
 ո՛հ, ես չուռականս ամեն բանի
 վրայ մտածեցի՝ բայց ի վախ-
 ճանէս:

Հայր իմ, Յիսուսի սիրոյն
 համար սուր որ նոր կեանք
 մը սկսիմ, բոլորովին սուրբ և
 համաձայն ըստ ամենայնի քու
 աստուածային կամեացդ:

Բ. Մտածէ թէ ինչպէս մա-
 հուանդ ատեն խիղճդ զքեզ պիտի
 տանջէ, թէ որ Աստուծոյ ծա-
 ռայելու փոյթ չես ունեցեր:
 Ինչպէս սաստիկ պիտի ըլլայ
 սրտիդ կսկիւծը կենացդ վերջի
 վայրկեաններուն, երբ ատենես
 որ այնչափ մեծութիւններէն,
 փառքէն և ի հաճոյից ուրիշ
 բան չէ մնացած քովդ, բայց
 տագնապ ու խայթ խղճի: Զար-
 մանաս պիտի թէ ինչպէս ջնջին
 ու անցաւոր բաներու համար,
 Աստուծոյ շնորհքը ու հոգիդ
 կորսնցուցեր ես, առանց կա-
 րենալու ճար մը ընել եղած
 չարեաց, և ոչ ալ ժամանակ
 մնալով ուղղութեան ճամբան
 նորէն մտնելու: Ո՛հ, բանի
 յուսահատութիւն, բանի տան-
 ջանք: Այն ստեն պիտի ճանչնաս
 ժամանակին յարգը, բայց ուշ,
 արեամբդ իսկ ուզես պիտի գնել
 բայց կարելի չէ: Ո՛վ որ դառ-

նուրթեան, անոր՝ որ Աստուծոյ
չէ ծառայած ու զԱստուած չէ
սիրած:

Գ. Մտածէ՛ թէ որչափ անհո-
գուրթիւն կ'ըլլուի այս մեծ վախ-
ճանիս: Ուտելու, հանդէսներու,
զուարճութեանց վրայ կը մտա-
ծենք, իսկ Աստուծոյ ծառա-
յելու, հոգինիս փրկելու չենք
մտածեր, ու յաւիտենական
վախճաննիս բանի տեղ չենք
դներ: Եւ այսպէս քրիստոնէից
մեծ մասը ուտելով, խմելով,
երգով ու նուագելով դժոխք
կ'երթան: Ո՛հ, թէ գիտնային
ինչ ըսել է դժոխք: Ո՛վ մարդ,
այդչափ կը ջանաս դքեղ դատա-
պարտելու, իսկ փրկելու համար
բան մը գործել չես ուղեր: Փրան-
կիսկոս Անդղիոյ թագաւորին
գրագիրներէն մէկը, երբոր մեռ-
նելու վրայ էր, կ'ըսէր. Եղձկ
ինձ, այնչափ թուղթ փճա-
ցուցի իմ տիրոջս նամակները

գրելու. իսկ իմ հոգւոյս հա-
շիւը տեսնելու համար և ոչ
թերթ մը, որով կարենայի լաւ
խոստովանանք մը ըլլալ: Փի-
լիպպոս Գ. Սպանիոյ թագաւո-
րը մեռնելու ատեն կ'ըսէր: Ո՛հ,
երանի թէ բնաւ թագաւոր
եղած չըլլայի: Բայց ի՞նչ բանի
կու գան այն ատեն այդ հառա-
չանքներն ու ողբերը, եթէ ոչ
յուսահատութիւնն աւելցընե-
լու համար: Ուրիշին փաստովը
գոնէ փոյթ սէնեցիր փրկու-
թեանդ, եթէ չես ուղեր անոնց
պէս յուսահատութեան մէջ իյ-
նալ: Քիտցիր որ ի՞նչ որ կ'ը-
նես, կ'ըսես ու կը մտածես
սուսնց Աստուծոյ հաճութեա-
նը, ամենքն ալ փուճ են:
Վարքդ փոխելու ժամանակն
հիմայ է: Մահուանդ օրուան
կը սպասես, որ աչքդ բացուի
ու սխալմունքդ ճանչնաս: Յաւի-
տենականութեան դրան քով,

դժոխքին բերա՞նը կեյած կ'ուզեա ուղղելքու սխալմունքներդ, երբոր հնար չկայ:

Աստուած իմ, ներէ ինծի: Ամեն բանէ վեր զքեզ կը սիրեմ: Ամեն չարիքներէս աւելի զքեզ վշտացընելուս կը յաւիմ:

ԵՐԿՈՒՇ ԱՒ ԱԹԻ

Մարդոշս վախճանիև

հարկաշորոշքեան վրայ.

Ա. Մասձէ, ո՞վ մարդ, թէ որչափ կարևոր է որ քու մեծ վախճանիդ ետևէն երթաս. ամենակարևոր բան. վասն զի թէ որ զայն փնտռես՝ զքեզ կը փրկես, ու միշտ երանելի կ'ըլլաս, հոգևով ու մարմնով ամեն բարիք կը վայելես: Բայց թէ որ սխալիս՝ հոգիդ ալ մարմինդ

ալ կը կորսնցընես, արքայու թիւնն ու զԱստուած, յաւիտեան թշուառ կ'ըլլաս, ու միշտ դատապարտեալ: Ուրեմն ամենէն մեծ, ամենէն կարևոր ու հարկաւոր տուր-լառնիս է Աստուծոյ ծառայել, և հոգինիս փրկել: Արդ այսուհետև մի՛ ըսեր, ո՞վ քրիստոնեայ, թէ հիմա կամքս կատարեմ, ու վերջը Աստուծոյ կուտամ ինքզինքս և կը յուսամ փրկուիլ: Աս սուտ յոյսը քանիներ դժոխք տարաւ, քանիներ ատանկ կ'ըսէին, ու հիմա դատապարտուած են, և դարման չկայ իրենց շարեաց: Ո՞վ ի դատապարտելոց կ'ուզէր դատապարտուիլ, բայց Աստուած կ'անիծէ զայն որ յուսով թողու թեան՝ մեղք կը գործէ, « Անիծեալ մարդ որ մեղանչէ յուսով »: Այս մեղքս ընեմ, կ'ըսես, ու վերջը խոստովանանք կ'ըլլամ.

ը՛վ գիտէ թէ խոստովանելու
 ատեն պիտի ունենաս: Ո՛վ զքեզ
 կ'սպասուցընէ որ մեղքէն վերջը
 մէկէն պիտի չմեռնիս, թող որ
 ատ մեղքովդ Աստուծոյ շնորհքը
 կը կորսնցընես, և ո՛վ գիտէ թէ
 նորէն պիտի գտնես: Աստուած
 երկիւղածներուն կ'ողորմի՝ ոչ
 թէ արհամարհողներուն. « Եւ
 ողորմու թիւն նորա ի վերայ
 երկիւղածաց իւրոց », Ղկ. Ա.
 50: Մի ըսեր թէ, երկու մեղք
 խոստովաներ եմ կամ երեք,
 նոյն բանն է, չէ՞. վասն զի
 կարելի է որ Աստուած երկուքին
 ներէ, բայց երրորդին ո՛չ. Աս-
 տուած կը համբերէ, բայց ոչ
 միշտ: Երբոր մեղաց չափը լե-
 ցուի, ալ Աստուած չի ներեր.
 կամ մահուամբ կը պատժէ, կամ
 մեղաւորը երեսէ կը ձգէ որ
 մեղքէ մեղք դժոխք գլորարկի.
 պատիժ մը՝ որ մահուընէ ծանր
 է. Ուշ գիր այս կարգացածիդ,

լմնցուր զասիկայ, ու զքեզ ալ
 Աստուծոյ տուր: Վախցիր որ
 այս վերջին ազդարարու թիւնն
 ըլլայ՝ որ Աստուած քեզի կ'ընէ:
 Բաւական է այսչափ զինքը
 վշտացընելդ, բաւական եղաւ
 իրեն ալ քեզի այսչափ համբե-
 րելը. վախցիր որ ուրիշ մահու-
 չափ մեղք մ'ալ որ ընես, Աս-
 տուած ալ շնորհ քեզի: Գիտցիր
 որ հոգւոյդ վրայ խօսիլը յա-
 լիտենականութեան վրայ ըսել
 է: Այս յալիտենականութեան
 մեծ մտածութիւնը քանինէրն
 անսպասաներու, քարանձաւնե-
 րու և վանքերու մէջ տարաւ
 փակեց: Եղովկ ինձ, որչափ
 վշտացած է սիրտս ըրած այն-
 չափ մեղքերուս համար. հոգիս
 ծանրացած, դժոխքն իմ բա-
 ժինս եղած, ու զԱստուածս ալ
 կորսնցուցեր եմ:

Ո՛վ Աստուած իմ, Հայր իմ,
 թող ինձ, և կապէ զիս քու սուրբ
 սիրովդ:

Բ. Մտածէ որ ինչպէս յա-
 շխտե՛նականութեան վրայ խիստ
 քիչ կը մտածենք, բայց ի վրկու-
 թենէ, ամեն բանի վրայ կը
 մտածենք: Ամեն բանի ժամանակ
 կը գտնենք, միայն Աստուծոյ
 համար չենք գտներ: Թէ որ
 աշխարհի մարդու մը զուրցես,
 թէ Խորհրդոց մօտեցիր, օրը կէս
 ժամ մը աղօթք ըրէ, պատասխան
 կու տայ, աղաք ունիմ, քեռորդիք՝
 եղբորորդիք ունիմ, կալուածներ
 ունիմ, ինչ ընեմ: Ո՛վ Տէր, միթէ
 հոգի չունիս: Աստուած չընէ, թէ
 դժոխք դատապարտուիս, ինչ
 օգուտ ունին քեզի որդիքդ,
 եղբորորդիքդ, անդաստաններդ:
 Մի խաբեր զքեզ որ կարենաս
 դո՛հ ընել զԱստուած ու աշխար-
 հըս, արքայութիւնն ու մեղքը
 միանգամայն: Ի՛րկին բան չէ
 վրկուելը, այլ պէտք է բռնա-
 դատենք զմեզ, աշխատինք ու
 ճգնինք, եթէ կ'ուզենք անմա-

հական սրակը ձեռք ձգել: Ո՛ր-
 չափ քրիստոնեայք իրենք զիրենք
 խաբած են, թէ ետք: Աստուծոյ
 կը ծառայեն ու կը վրկուին, և
 հիմա դժոխքն են: Ի՛նչ յիմա
 բութիւն. անցաւոր բանին վրայ
 միշտ մտածել և յաշխտե՛նակա-
 ն ու անանց բանին վրայ բնաւ
 չմտածել: Ա՛հ քրիստոնեայդ,
 մտածէ մէյմը վրադ, մտածէ
 որ քիչ ատենէն պիտի ելնես
 երթաս աշխարհէս յաշխտե՛նա-
 կանութեան տունդ: Վայ քեզ
 եթէ դատապարտուիս, գիտցիր
 որ անկէ ետքը դարման չես
 կրնար ընել:

Գ. Մտածէ, քրիստոնեայդ,
 ու ըսէ. Հոգի մը միայն ունիմ,
 թէ որ ան ալ կորսնցընեմ, ամեն
 բան կորսընցուցած եմ: Թէ որ
 աշխարհք մը վաստըկիմ հոգիս
 կորսնցնելով, ինչ բանի կու գայ:
 Թէ որ մեծ մարդ ըլլամ, բայց
 հոգիս կորսնցընեմ, ինչ բանի

կու գայ: Թէ որ հարստութիւն
 գիգեմ, ընտանիքս փառաւորեմ,
 որդիքս մեծցընեմ, բայց հոգիս
 կորսնցընեմ, ի՞նչ շահ ինձի այս
 ամեն բաներէս: Ի՞նչ օգուտ ըրին
 հարստութիւնները, զուարճու-
 թիւններն ու ընդունայնու-
 թիւններն անոնց, որ աշխարհիս
 մէջ ապրեցան, ու հիմա փոսի
 մը մէջ փոշի դարձած, ու հոգի-
 նին ալ գժոխքին մէջն է:
 Ուրեմն, եթէ հոգին իմն է, ու
 մէկ հոգի մը միայն ունիմ, եթէ
 զայն կորսնցընեմ մի անգամ՝ յա-
 ւիտեան կորսընցուցած եմ, ու-
 րեմն լաւ մտածելու եմ որ
 փրկեմ: Ասիկայ ամենակարեւոր
 խնդիր մ'է. կամ յաւիտեան
 երջանիկ և կամ թշուառ ըլլա-
 լուն վրայ է խնդիրը:

Ո՛վ Աստուած իմ, կը խոս-
 տովանիմ ամօթով որ ինչուան
 հիմա կուրօրէն ապրեցայ, քեզմէ
 շատ հեռու ստորակցայ, և բնաւ

չմտածեցի այս միակ հոգիս փրկ-
 կելը: Յիսուսի համար ըլլայ
 փրկէ դիս, Հայրս գոհ կ'ըլլամ
 ամեն բան կորսնցընելու, միայն
 թէ զքեզ չկորսնցընեմ, Աս-
 տուած իմ: Մարիամ յոյս իմ,
 փրկէ դիս քու բարեխօսու-
 թեամբդ:



ԵՐԵՔՇԱՐԱԹԻ

Մահոռչարի
մեղաց վրայ.



Ա. Մաածէ
թէ Աստուծմէ
ստեղծած ըլ-
լալով զինքը սի-
րելու համար,
դժոխային ա-
պերա խտու-
թեամբ ինչպէս
ապստամբեցար
իրմէ. թշնամ-
ւոյ սէս հետը
վարուեցար,
արհամար հե-
ցիր իր շնորհքն
ու իր բարե-
կամու թիւնը,
Գիտէիր թէ
աս մեղքովդ
զինքը կը վշտա-

ցընես. և սակայն գործեցիր :
Մեղանչողը գիտես ինչ կ'ընէ,
կռնակը առ Աստուած կը դար-
ձընէ, մեծարանքը կը կորսըն-
ցընէ, ձեռքը կը վերցընէ ապ-
տակ մը իշեցընելու համար և
Աստուծոյ սիրտը կը վիրաւորէ :
Մեղանչողը կ'ըսէ Աստուծոյ .
Հեռացիր ինծմէ, չեմ ուզեր
քեզի հնազանդիլ. չեմ ուզեր
ծառայել քեզի. չեմ ձանձնար
զքեզ իբրև իմ տէրս. զքեզ Աս-
տուծոյ տեղ չեմ գներ : Իմ Աս-
տուածս՝ հաճոյքս, շահս, վրէժ-
խընդրու թիւնս է : Այս ըսած էս
սրտովդ, երբոր արարածն Ա-
րարչէն վեր կը սեպես : Սուրբն
Մարիամ Մագդաղենացի Բա-
ցեան չէր կրնար հաւատալ, թէ
ինչպէս բրիստոնեայ մը կրնար
բաց աչքով մահուչարի մեղք մը
գործել : Իսկ դու որ կը կար-
դաս, ինչ կ'ըսես : Ո՞րչափ մա-
հուչարի մեղք գործեր էս :

Աստուած իմ, ներէ՛ս ողորմէ
 ինձ ի: Զքեզ վշտացուցի, անհուն
 բարութիւն. հիմա կ'ատեմ
 զմեղս, կը սիրեմ զքեզ, և կը
 ցաւիմ զքեզ անարգելուս հա-
 մար, ո՛վ Աստուած իմ, արժանի
 անհուն սիրոյ:

Բ. Մտածէ թէ մեղանչելու
 ատենդ ի՛նչ կ'ըսէր Աստուած
 քեզի. Որդեակ իմ, ես քու
 Աստուածդ եմ, որ յոչնչէ զքեզ
 ստեղծեցի, արեամբս զքեզ
 գնեցի, կ'արգելում որ այդ
 մեղքը չգործես, ապա թէ ոչ՝
 կը զրկեմ զքեզ շնորհքէս: Բայց
 դու մեղանչելովդ ըսիր. Տէր,
 ինչ ըլլայ չըլլայ ես այս հաճոյքս
 կ'ուզեմ վայելել. փոյթս չէ
 քեզի անհաճոյ ըլլալս, ու քու
 շնորհքդ կորսնցընելս: « Ասա-
 ցերս ոչ ծառայեմ քեզ »:

Ո՛հ Աստուած իմ, սո բանս
 շատ անդամ ըրի. ինչպէս համ-
 բերեցիր ինձ ի: Ա՛լ աղէկ է որ

մեռնիմ, քան թէ ^{այսուհետեւ}
 զքեզ վշտացընեմ: Չեմ ուզեր
 ասկէ լերջը զքեզ արամեցընել,
 կ'ուզեմ զքեզ սիրել, ո՛ բարու-
 թիւն անբաւ: Տուր ինձ ի յա-
 րասեռութիւն, ու քու սուրբ
 սէրդ:

Գ. Մտածէ որ երբոր մեղքե-
 րուն չափը կը լեցուի, ա՛յ Աս-
 տուած ձեռքէն կը ձգէ զմե-
 ղաւորը. « Երկայնամիտ լինի
 Աստուած, մինչև լըցեն զչափ
 մեղաց իւրեանց և եկեացեն
 հասցեն ի դատաստանս անհը-
 նարինս »: Բ. Մակ. Զ. 14:
 Ուրեմն, սիրեցեալ, եթէ նորէն
 մեղք գործես, մի՛ զուրցեր թէ
 ետքը կը խոստովանիմ. Թէ որ
 Աստուած այն ատեն զքեզ մեռ-
 ցընէ, թէ որ Աստուած զքեզ
 ձեռքէ թողու, ի՛նչ սլիաի ըլլաս
 դու յաւիտեան: Այս կերպով
 շատերը կորսուած են: Անոնք
 ա՛յ յոյս ունէին թողութեան,

բայց մահը հասաւ և դատա-
պարտուեցան: Գողա որ նոյնը
չպատահի քեզի ալ: Գլխութեան
արժանի չէ այն որ Աստուծոյ
բարութիւնը զինքը վշտացը-
նելու կը գործածէ: Իրաւամբ
պէտք է վախնաս, որ յետ այն-
չափ ծանր մեղացդ ներելու,
Աստուած մէյ մ'ալ չներէ ասկէ
ետեւ ընելու մահուչափ մեղացդ:
Շնորհակալ եղիր իրեն՝ որ ին-
չուան հիմա համբերեց քեզի,
ու հաստատուն առաջագրէ
աւելի յանձն առնուլ մեռնիլ,
քան թէ մեղքով մը զինքը
վշտացընել: Ասկէ վերջը միշտ
ըսէ. Տէր, բաւական է այսչափ
զքեզ վշտացընելս: Մնացած
կենացս մէջ չեմ ուզեր վշտա-
ցընել զքեզ. այլ սիրել միայն
ու ըրած անարգանացս վրայ
լալ: Բոլոր սրտովս կը ցաւիմ,
Յիսուս իմ, զքեզ սիրել կ'ուզեմ.
տուր ինձի զօրութիւնս: Մա-
րիամ, մայր իմ, օգնէ ինձի:



ՉՈՐԵՔ ՇԱԲԱԹԻ

Մահոռասն վրայ.

Ա. Մտածէ թէ ինչպէս աս
կեանքս պիտի լմնայ: Վճիռն
արդէն տրուած է, պէտք է որ
մեռնիս: Մահը ստոյգ է, բայց
անստոյգ անոր ժամանակը: Ի՞նչ
պէտք է մեռնելու համար: Բա-
ւական է կաթուած մը սրտիդ,
կամ կուրծքիդ երակներէն մէ-
կուն պատուիլը, արեան կամ հիւ-
թոց առատութիւն մը, թու-
նաւոր կենդանւոյ խածուածք

մը, ջերմ մը, վերք մը, հարուած
մը, ջրհեղեղ մը, երկրաշարժ,
կայծակ, փայլակ մը բաւական է
կեանքդ վերջընելու համար:
Մահը վրագ կը հասնի երբոր
չես մտածեր, քանինէր իրիկունն
անկողին մտան, ու առաւօտը
մեռած գտնուէցան: Միթէ
քեզի ալ նոյնը չի՞ կրնար պա-
տահիլ: Անոնք որ յանկարծական
մեռան, մտքերնէն իսկ չէր
անցներ որ անանկ պիտի մեռ-
նէին, և սակայն մեռան, ու
թէ որ մեղաց մէջ էին՝ ո՞ր
պիտի ըլլան յաւիտեանս յաւի-
տենից: Բայց ինչ կերպով ալ
ըլլայ, ժամանակ պիտի գայ որ
քեզի համար գիշեր պիտի ըլլայ,
որը պիտի տեսնաս, բայց գի-
շերուան պիտի չհասնիս: Գի-
շերուան գողի պէս ծածուկ
պիտի գամ, կ'ըսէ Քրիստոս:
Առաջուց կ'իմացընէ քեզի տէրդ,
փրկութիւնդ ուղեւուն համար:

Ջանա որ գործակից ըլլաս
Աստուծոյ, օգտուէ այս ազգա-
լարու թե՛նէն, լաւ կերպով
մեռնելու պատրաստուէ, քանի
որ մահը չէ եկած. վասն զի այն
տտեն պատրաստուելու ժամա-
նակ չէ: Ստոյգ է որ պիտի
մեռնիս, այս աշխարհիս տե-
սարանը պիտի շիննայ քեզի հա-
մար, և չես գիտեր թէ երբ: Ո՞
գիտէ, արդեօք տարիէ՞ մը, ամսէ՞
մը, թէ վաղը: — Ո՞վ Յիսուս
Տէր իս, ներէ ինձ:

Բ. Մտածէ թէ ինչպէս մա-
հուանդ ատեն անկողնոյ մը վրայ
տարածեալ, ու քահանայն բովդ
կեցած, հոգիդ Աստուծոյ պիտի
յանձնէ, ընտանիքդ չորս կողմդ
առած վրագ կու լան, ձեռքդ
խաչ, ու բովդ նուազ ճրագ մի
վառած և դու յաւիտենակա-
նութիւն անցնելու վրայ ես:
Գլուխդ ջաւ մը, աչքերդ մութ
պատած, լեզուդ ցամքած, բե-

րանդ կժ կած, սիրտդ ծանրացած,
 արիւնդ պաղած, ու մարմինդ
 հալած մաշած: Մահուամբ ա-
 մեն բան պիտի թողուս, և
 աղքատ ու մերկ փոսի մի մէջ
 պիտի նետուիս, հոն փտակելու
 համար. որդերն ու մկներ մար-
 մինդ պիտի կրծեն, ու չոր
 ցամքած ոսկրէ և քիչ մը փոշիէ
 դատ բան մի պիտի չմնայ: Բայ
 գերեզման մի և տես թէ ի՞նչ
 եղեր է այն մեծ հարուստն,
 այն ագահն ու այն սնտոտիա,
 պանծ կիմն: Այդպէս կը լիննայ
 կեանքը: Մահուանդ ատեն
 սատանայք չորս կողմդ առած,
 աչքիդ առջև պիտի բերեն
 բոլոր մեղքերդ, աղայութենէդ
 սկսեալ: Հիմա ղքեղ մեղաց մէջ
 ձգելու համար կը ծածկեն
 քեզմէ մեղքերդ ու իբրև շնչին
 և անձնաս բաներ կ'երեցընեն
 այն ընդունայնութիւնը, այդ
 հաճոյքն, այդ մտերմութիւնն,

ու այդ ոխն, իբրև թէ ատոնց
 մէջ գէշ վախճան մը չկայ. բայց
 մահը մեղացդ ծանրութիւնն
 երեցընէ պիտի քեզի ու յաւի-
 տենականութեան լուսով, որ
 առջևդ կեցած է, պիտի ճան-
 շնաս թէ զԱստուած վշտացնելն
 ի՞նչ մեծ շարիք է եղեր: Շուտ,
 հիմա դարման տար, քանի որ
 կրնաս, վասն զի այն ատեն այլ
 ևս չես կրնար: — Աստուած
 իմ, լուսաւորէ զիս:

Գ. Մտածէ որ մահը վայրկեան
 մ'է, ուսկից կը կախուի յաւի-
 տենականութիւնը: Մարդս միշտ
 մահուան քովերը կը պառտի,
 որով երկու յաւիտենականու-
 թեանց մէկուն մօտ է: Իսկ այն
 վիճակներնուս որոշմունքն՝ բե-
 րաններնուս վերջի բանալ գո-
 ցելէն կախուած է, ուսկից ետքը
 հոգին կամ յաւիտեան փրկեալ
 պիտի ըլլայ, կամ յաւիտեան
 դատապարտեալ: Ո՛վ վայրկեան,

ո՛հ յետին փակել բերանոյ,
 ուսկից կախեալ է յաւիտենա-
 կանութիւն մը կամ փառաց և
 կամ պատժոյ, յաւիտենակա-
 նութիւն մը կամ անվասիճան
 երջանկութեան և կամ անվերջ
 թշուառութեան. յաւիտենա-
 կանութիւն մ'ամենայն բարեաց
 և կամ ամենայն չարեաց. յաւի-
 տենականութիւն մի արքայու-
 թեան կամ դժոխոց: Ըսել է
 որ, եթէ այն միջոցին փրկուիս,
 ա՛լ անկէ ետքը ցաւելու բան
 չունիս. իսկ եթէ դատապար-
 տուիս, միշտ ցաւագին և յու-
 սահատ պիտի ըլլաս, քանի որ
 Աստուած Աստուած է: Մա-
 հուանդ ատեն պիտի ճանչնաս
 թէ ի՞նչ ըսել է եղեր արքայու-
 թիւն, դժոխք, մահացու մեղք,
 Աստուած նախատել, Աստուծոյ
 օրէնքն ոտքի տակ առնել, ի
 խոստովանութեան մեղք ծած-
 կել, դողօնքը չգարձնել: Եղո՛ւկ

ինձ, սխտի ըսէ հողեւարքը. քա-
 նի մը վայրկենէն Աստուծոյ առ-
 ջև պիտի ելնեմ. և ո՛ գիտէ ինչ
 է վճիռս՝ արքայութիւն, թէ
 դժոխք պիտի երթամ: Հրեշ-
 տակաց հետ պիտի վայելեմ,
 թէ դատապարտելոց հետ պիտի
 այրիմ: Աստուծոյ որդի՞ պիտի
 ըլլամ, թէ գերի սատանայի:
 Քիչ ատենէն կ'իմանամ: Առա-
 ջին անգամ գացած տեղս յա-
 ւիտենական տունս պիտի ըլ-
 լայ: Ո՛հ, քանի մը ժամէն, քա-
 նի մը վայրկենէն ի՞նչ պիտի ըլ-
 լայ ինձի. ի՞նչ պիտի ըլլայ ին-
 ծի թէ որ չբժշկեմ մէկուն
 տուած գայթակղութիւնս, մէ-
 կալին համբաւն ու ստացուածքն
 ետ չգարձընեմ, սրտանց թըշ-
 նամւոյս շնորեմ, ու լաւ խոս-
 տովանանք մը չըլլամ: Այն ա-
 տեն, պիտի անիծես այն օրն
 որ մեղանչեցիր, այն վրէժխըն-
 դրութիւնն որ ըրիր, բայց ուշ

և անօգուտս. վասն զի չէ թէ Աստուծոյ սիրոյն համար պիտի ցաւիս, այլ պատժոց վախէն:

Ո՛վ Տէր, ահա այս վայրկենէս առ քեզ կը դառնամ, չեմ ուզեր մահուանս սպասել. այս ժամէս զքեզ կը սիրեմ. ու քեզ կը պըլլուիմ, և այնպէս կ'ուզեմ մեռնիլ: Մայր իմ Մարիամ, քու հովանաւորութեանդ տակ կ'ուզեմ մեռնիլ, օգնէ ինձ այն վայրկենին:

ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Դատաստանիս վրայ.

Ա. Մտածէ որ ի՛նչպէս մեռած չմեռած, հոգիդ Աստուծոյ ատենին առջև պիտի տարուի դատուելու համար: Դատաւորն՝ ամենակարող Աստուած է՝ որ քեզմէ նախատէ. է, ու քեզի դէմ զայրացեր: Ամբաստ-

տանողքն՝ սատանայք էն քեզի թշնամի, դատախազք՝ քու մեղքերդ. վճռոյն դէմ բողոքել չըլլար, պատիժն ալ դժոխքն է: Ոչ ընկեր ունիս, ոչ ազգական, ոչ բարեկամ. Աստուծոյ ու քու մէջդ ամեն բան պիտի լմնայ. այն ատեն մեղքերուդ դարչութիւնը պիտի ճանչնաս, ու չըկարենաս պիտի զքեզ արդարացընել, ինչպէս հիմա կ'ընես: Պիտի քննուիս խորհրդով, բանիւ, հաճութեամբ, գործով, զանցառութեամբ, գայթակղութեամբ ըրած մեղքերուդ վրայ. Աստուծոյ արդարութեան կը շարունայն մէջ այս ամեն բան պիտի կշռուի, և թէ մէկու մը մէջ ալ միայն պակաս գտնուիս, պիտի կորսուիս: Յիսուս իմ, և դատաւոր հոգւոյ իմոյ, դատելէդ առաջ ներէ յանցանացս:

Բ. Մտած թէ ի՛նչպէս աստուածային արդարութիւնն պի-

ան գայ ու գատէ զամեն աղգ
 Յովսափատու ձորն, երբ աշ-
 խարհս լմնցած՝ մարմիններն յա-
 րութիւն առնեն, որպէս զի հո-
 գւով և մարմնով կամ՝ վարձա-
 տրուին և կամ՝ պատժուին ըստ
 իրենց գործոց: Մտածէ թէ
 դատապարտուելու որ ըլլաս,
 նորէն առաջին մարմինդ պիտի
 առնուս, որ թշուառ հոգւոյդ
 յաւիտենական բանտ մը պիտի
 ըլլայ: Այս դառն միութեանս
 ատեն, պիտի անիծէ հոգին ըզ
 մարմինը, մարմինն ալ զհոգին.
 անանկ որ հիմա երկուքն ալ որ
 կը միաբանին անկարգ հաճոյք-
 ներ փնտռելու, մահու ընէ վերջ
 չուղելով՝ պիտի միանան մէկ-
 մէկու գահիճ՝ ըլլալու համար:
 Իսկ եթէ ընդ հակառակն փրկ-
 կուիս, յարութիւն պիտի առնէ
 մարմինդ գեղեցկացեալ, ցաւե-
 րէ ազատ և պայծառացած, և
 այնպէս հոգւով ու մարմնով եր-

ջանիկ պիտի ըլլաս. տ՛հա աշ-
 խարհիս անսարանն ասանկով
 պիտի լմնայ: Պիտի լմնան այն
 ատեն աշխարհիս բոլոր մեծու-
 թիւններն ալ, հաճոյքներն ալ,
 ճոխութիւններն ալ, բոլորն ալ
 պիտի լմնան. ու քեզի կը մնայ
 երկու յաւիտենականութիւն,
 մէկը փառաց, միւսը պատժոյ.
 մէկը երջանիկ, իսկ միւսը թը-
 շուառ. մէկը վայելից և մէկալը
 տանջանաց: Արդարք արքայու-
 թեան մէջ, մեղաւորք ի դը-
 ժոխս: Վայ անոր որ աշխարհս
 սիրեր է, ու անոր ողորմելի
 վայելքներուն համար հոգին ալ
 մարմինն ալ, զարքայութիւն ու
 զԱստուած կորսնցուցեր է:

Գ. Մտածէ յաւիտենական
 վճիռը: Գառաւորն Քրիստոս
 պիտի դառնայ յանցաւորաց ու
 պիտի ըսէ, ուղածնիդ ըրիք, ա-
 պերախաներ, ուղածնիդ ըրիք:
 Եկաւ հիմա իմ ժամս, ժամ

բարկութեան ու վրէժխնդրու-
 թեան: Այս անօրէնք, սիրեցիք
 զանէծս, գլուխնիդ իջնայ, անի-
 ծեալ ըլլաք այժմ և յաւիտեանս:
 Կորսուեցէք երեսէս, ամեն բա-
 րիքներէ զրկուած, և յաւիտե-
 նական հրով և պատժովք լը-
 ցուած: « Երթայք յինէն անի-
 ծեալք ի հուրն յաւիտենական »:
 Մատթ ԻԵ, 41: Եաքն Յիսուս
 ընտրելոց դառնալով, պիտի ը-
 սէ. եկէք օրհնեալ զաւակներ-
 ըրս, եկէք վայելեցէք ձեզ հա-
 մար պատրաստուած երկնից
 թագաւորութիւնը: Եկէք ե-
 տեէս, ոչ խաչով, այլ պսակա-
 զարդ: Եկէք որ իմ հարստու-
 թիւններս ժառանգէք, դուք
 որ իմ փառացս ընկեր էք. ե-
 կէք որ յաւիտեան իմ ողորմու-
 թիւններս երգէք. եկէք յաք-
 սորանայ՝ ի հայրենիս ձեր, ի
 թշուառութեանց՝ ի ինդու-
 թիւն. եկէք յարտասուաց՝ յու-

րախուժիւն, ի վշտաց՝ ի հան-
 գիստ: « Եկայք օրհնեալք հօր
 իմոյ, ժառանգեցէք զպատրաս-
 տեալ ձեզ զարքայութիւն »:
 Յիսուս իմ, կը յուսամ որ ես
 ալ այս օրհնեալներէն մէկն ըլ-
 լամ: Զքեզ ամեն բանէ վեր կը
 սիրեմ, օրհնէ զիս ի ժամուս:
 Եւ դու մայր իմ սիրելի Մա-
 ըիամ, նոյնպէս օրհնէ զիս:



ՈՒՐԲԱԹ

ԳԺՈՒՅՔԻ ՎՐԱՅ .



Ա . Մասձէ
 Թէ ի՛նչպէս դը-
 Ժ ոխքն ողորմելի
 բանտ մ'է կրա-
 կով լեցունն :
 Այս կրակէ ան-
 դունդ իս մէջ կը
 կենան մեղա-
 ւորք ամեն կող-
 մանէ կրակով
 պաշարուած :
 Աչքին մէջ, բեր-
 նին մէջ, ամեն
 կողմը կրակ, և
 իւրաքանչիւր
 զգայ ու թիւն
 իւրապարտութեան
 նի : Աչքերը մու-
 խէն ու խաւա-
 րէն կուրցած, և

գատապարտեալներն ու գեւերը
 տեսնելէն ահաբեկած : Ականջ-
 ները գիշեր ցորեկ ուրիշ բան
 չեն լսեր, բայց եթէ գատա-
 պարտելոց ունալը, լացն ու
 հայհոյութիւնը : Հոտառելիքը
 կը տանջուի, գատապարտելոց
 մարմնոյն գարշահոտութենէն :
 Ճաշակելիքը կը չարչարուի այն
 այրող ծարաւէն ու անյագ անօ-
 թութենէն առանց կաթիլ մը
 ջուր գտնելու, ու պատառ մը
 հաց : Այսպէս այդ խեղճ բան-
 տարգետնները ծարաւէն այրե-
 լով, կրակէն մաշուելով, ու ամեն
 տեսակ տանջանքներով չարչա-
 րուելով կուրան, կ'ոռնան, կը
 յուսահատին, բայց չկայ ու պիտի
 չըլլայ մէկն որ զիրենք մխիթարէ
 ու տանջանքնին թեթեւցնէ : Ո՛հ
 գժոխք, գժոխք . քանիներ կան
 որ չեն ուզեր հաւատալ քեզի,
 ինչուան որ զիրենք չըլլես : Գու-
 ընթերցող ի՛նչ կ'ըսես : Թէ որ

հիմա մեռնելու ըլլաս, ո՛ւր կ'երթաս: Դու որ ճրագի մը կայծին չես գիտնար, կը յուսաս արդեօք գիմանալ այն կրակէ լծին որ զքեզ պիտի լափէ, և անմիտ թար լքեալ թողեալ ամենէն հոն պիտի մնաս յաւիտեան:

Բ. Մտածէ թէ ի՞նչպէս պիտի տանջուին մտաւոր կարողութիւնքդ: Յիշողութիւնդ պիտի տանջուի միշտ խղճիդ խայթէն: Դատապարտելոց ամենէն մեծ որդը պիտի ըլլայ ու զիրենք պիտի կրծէ, մտածելը թէ ի՞նչպէս քանի մը սնտոի հաճոյից համար դատապարտուած են: Ո՛վ Տէր, հարիւրաւոր ու միլիոնաւոր տարիներ տանջուելէ ետեւ, ի՞նչպէս երևնայ պիտի արդեօք մեղաւորին իւր հաճոյից վայրկեաններն: Այն ատեն պիտի յիշէ այն ժամանակն որ Աստուած տուաւ ապաշխարելու համար, փրկութեան հասնելու

դիւրացուցած միջոցները, տեսած բարի օրինակներն ու իրեն բարի առաջադրութիւններն, որոնք ի գործ չէ գրած: Այն ատեն պիտի հասկընայ որ ճար ճարակ չկայ իւր յաւիտեանական կործանման: Ո՛հ Աստուած, ո՛հ Աստուած, և այս հառաչանքն իրեն համար կրկին դժոխք մը պիտի ըլլայ: Ոչ բնաւ կամացն ուղածը պիտի կատարուի, այլ ընդ հակառակն միշտ չուղածները պիտի ըլլան, այսինքն ամեն տեսակ տանջանք: Միտքը պիտի ճանչնայ իւր կորսնցուցած մեծ բարիքը, այսինքն զարքայութիւն ու զԱստուած: — Ո՛վ Տէր, ո՛վ Տէր, ներէ ինձ Յիսուսի սիրոյն համար:

Գ. Մեղաւորդ, որ հիմա բանի տեղ չես գներ զարքայութիւն ու զԱստուած կորսնցնելը, քու կուրութիւնդ պիտի ճանչնաս՝ երբ տեսնես երանելեաց յաղթա-

նաևն ու երկնից թագաւորու
 թեան վայելքը . և դու իբրև
 հոտած շուն մը պիտի վաճառուիս
 այն երանեալ հայրենիքէն, Աս-
 տուծոյ զմայլեցուցիչ երեսէն,
 յընկերութենէ Մարիամու, և
 հրեշտակաց և սրբոց: Այն ա-
 տեն կատղելով պիտի սկսիս պո-
 ալ . ո՞վ արքայութիւն անվերջ
 վայելից, ո՞վ Աստուած անբաւ-
 բարի, չես ու պիտի չըլլաս ի-
 մինս: Հայա, ձեռք զարկ ա-
 պաշխարութեան, մի՛ սպասեր
 որ ժամանակն անցնելով ատեն
 չունենաս: Տուր զքեզ Աստու-
 ծոյ, ու անկեղծութեամբ սկսէ
 սիրել զինքը: Աղաչէ զՅիսուս,
 աղաչէ զՄարիամ, որ զթան
 վրայ:

ՇԱԲԱԹ

Պատժոց յաշխտեանսկասկանքեանս
 վրայ.

Ա. Մտածէ որ դժոխքը վերջ
 չունի. ամեն տեսակ պատժով
 կը տանջուին ու ամենքն ալ յա-
 լիտենական են: Անանկ որ հա-
 ըրիւր, հազար, բիւրտուր, մի-
 լիոնաւոր տարիներ ու դարեր
 անցնին դժոխքը միշտ նոր կը
 սկսի: Եթէ այս վայրկենիս հրեշ-
 տակ մ'աւետիս տանի դատա-
 պարտելոյ մը՝ որ Աստուած զին-
 քը կ'ուզէ դժոխքէն խալըսել,
 բայց էրբ . երբոր այնչափ դա-
 րեր անցնին որչափ են ջրոյ կա-
 թիլները, ծառոց տերեւներն ու
 ծովու և երկրիս աւազի հատիկք.
 կը սարսափիս դու այս զուր-
 ցածիս, բայց այս ստոյգ է որ
 այն դատապարտեալը շատ աւե-

լի կ'ուրախանայ այս լուրիս ,
 քան թէ դու մեծ թագաւո-
 րու թեան մը տէր ըլլայիր : Այս
 վասն զի ասանկ կ'ըսէ դատա-
 պարտեալը . իրաւ է որ այնչափ
 դարեր պիտի անցնին , բայց վեր-
 ջապէս որ մ'ալ պիտի գայ որ
 այն դարերը լիմնան : Իսկ ընդ
 հակառակն հիմա , այս դարերս
 կ'անցնին , բայց դժոխքը միշտ
 նոր կը սկսի . ծովու աւազին , ջրոց
 կաթիլներուն և տերևներու հա-
 ւասար դարեր կը լիմնան , և
 դժոխքը նորէն կը սկսի : Ամէն
 դատապարտեալ սիրով այս դա-
 շինքս Աստուծոյ հետ կը դնէր .
 Տէր , որչափ որ կ'ուզես պա-
 տիժներս սասակացուր , երկըն-
 ցուր որչափ որ կ'ուզես , բաւա-
 կան է որ վերջանայ , ես գոհ եմ .
 բայց այս վերջը ոչ երբէք պիտի
 ըլլայ : Գոնէ այս խաբէական յոյ-
 սըն ունենային , թէ ո՞ գիտէ ,
 թերևս Աստուծո զորովի ու խա-

լըսէ զիս որ մը . բայց ոչ , դա-
 տապարտեալը միշտ իր ճակատին
 վրայ գրած պիտի տեսնէ իր
 յաւիտենական դատապարտու-
 թիւնն ու պիտի ըսէ . ուրեմն
 այս ամէն պատիժներս որ հիմա
 կը կրեմ , այս կրակն , այս տխրու-
 թիւնս , այս գոռում գոչու մներս
 լիմնալիք չունի՞ն : Այս պատաս-
 խան պիտի տեսնէ . ոչ , ոչ բնաւ :
 Ո՞րչափ պիտի տեսն . միշտ : Ա՛հ .
 ոչ բնաւ . ո՛հ միշտ . ո՛վ յաւիտե-
 նականութիւն . ո՛վ դժոխք : Ի՛նչ
 պէս մարդիկ կը հաւատան այս
 բանիս , և դարձեալ կը մեղանչեն
 ու մեղքի մէջ կ'ասլորին :

Բ . Եղբայր իմ , լաւ ուշ գիր .
 մտածէ որ քեզի ալ դժոխքը բաց
 է , եթէ մեղանչես : Ատքիդ տա-
 կը կը ծխայ արդէն այդ ասագին
 հնոցը , և այս կարգալու միջոցիդ
 քանիններ մէջը չեն գլորիր : Մտա-
 ծէ որ եթէ մէյ մը հոն իյնաս ,
 ալ խալըսում չունիս : Եւ թէ որ

երբեմն արժանի եղեր ես դժո-
 խոց, շնորհակալ եղիր Աստուծոյ,
 որ զքեզ հոն չէ խաւրած, և շու-
 աով նայէ որ կրցածիդ չափ
 դարման տանիս. լայ մեղքերդ
 և ձեռքէդ եկած միջոցները բա-
 նեցուր փրկուելու համար :
 Ստէպ խոստովանէ, ամէն օր ան-
 կամ ուրիշ հոգևոր գիրք մը
 կարդա. սուրբ Աստուածածնայ
 ջերմեռանդ եղիր՝ ամէն օր պը-
 սակ կուսին ըսելով, շաբաթ օ-
 րերը ծով պահելով. փորձու-
 թեանց դէմ դիր, յօգնու թիւն
 կանչելով զՅիսուս և զՄարիամ :
 Մեղաց առիթներէն փախիր, ու
 թէ որ ազդէ քեզի Աստուած
 զաշխարհք ալ թողուլ, թող ա-
 ռանց մտածելու. յաւիտենա-
 կան պատիժներէն խալըսելու
 համար ի՞նչ ալ որ ընէ մարդս,
 դեռ քան մը ըսել չէ, դեռ ոչ-
 ինչ է : Ուր յաւիտենականու-
 թիւնը վտանգի մէջ է՝ ասպա-

հովու թիւն չկայ, կ'ըսէ սուրբն
 Բեռնարդոս : Յաւիտենականու-
 թիւնն ապահով ցընելու համար,
 բնաւ զգուշու թիւն մը բաւա-
 կան չի կրնար սեպուիլ : Տես
 որչափ անաստաւորներ դժոխ-
 քէն փախչելու համար՝ քարան-
 ձաւներու մէջ ու անաստաներն
 առանձնացան : Իսկ դու ի՞նչ
 կ'ընես, յետ այնչափ անգամ
 դժոխքի արժանի ըլլալէդ ետ-
 քը : Ի՞նչ կ'ընես. ի՞նչ կ'ընես :
 Տես որ զքեզ կը դատապարտես :
 Տուր զքեզ Աստուծոյ, ու ըսէ.
 Ահաւասիկ ես, Տէր, պատրաստ
 եմ ընելու ինչ որ ինձմէ կ'ու-
 ղես : Կոյս Մարիամ, օգնէ ինձի :



ՅԻՍՈՒՍԻ

ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐ

Թե ինչ սեր ցոռց Յիսուս՝
մեզի համար քաշած ներովը :

Ա. Յիսուսի գալատենէն ետ-
քը, ալ վախի ժամանակ չէ,
հասպա սիրոյ, վասն զի Աստը-
ւած մըն է մեզի համար մեռնո-

ղը : Հին օրինաց ատեն, քանի
որ Յիսուս աշխարհք չէր եկած,
կրնար մարդս տարակուսիլ թէ
արդեօք Աստուած կը սիրէ՞
զինքն ամեն սիրով, բայց զՅի-
սուս մեռած, արիւնջուայ, ա-
նարգ խաչի մը վրայ կատուած
տեսնելէն ետքը՝ չենք կրնար
Աստուծոյ սիրոյն վրայ տարա-
կուսիլ : Ո՞վ կրնայ ըմբռնել Յի-
սուսի ամբաւ սիրոյն սասակու-
թիւնը, որով քաւել ուզեց մեր
մեղաց պատիժը : Սակայն ի
հաւատոյ է թէ՛ «Նա զմեղս
մեր բառնայ և վասն մեր չար-
չարի» . Եւ. ԾԳ. 4 : Ամեն բան
քաշեց՝ միայն զմեզ անհուն կեր-
պով սիրելուն համար : Մեր մե-
ղաց սղտեղութենէն զմեզ մա-
քրելու համար, ինքն ուզեց
մեռնիլ, և իր արեամբը սրբել
զմեզ : Ո՞վ անչափ գթութիւն,
անբաւ բարութիւն և անհուն
սէր Աստուծոյ :

Ո՛վ Փրկիչ իմ, շատ պարտա-
կան եմ զքեզ սիրելու, և մե-
ծապէս ապերախտ կ'ըլլամ, թէ
որ բոլոր սրտովս չսիրեմ զքեզ:
Յիսուս իմ, քու սէրդ մոռնա-
լով անարգեցի ես զքեզ, իսկ
դու բնաւ չմոռցար զիս. ես
քեզի երես դարձուցի, իսկ դու
ինձի մօտեցար, ես զքեզ դառ-
նացուցի, և դու ինձի ներեցիր.
Ես դառնացրնելէն չդադրեցայ,
դու ալ ներելէն: Ո՛հ, Տէր իմ,
այն սիրոյդ համար ըլլայ որով
զիս խաչին վրայ սիրեցիր, քու
սուրբ սիրոյդ կասկովը զիս քե-
զի հետ կասէ, բայց անանկ որ
ա՛լ քեզմէ չկարենամ բաժնուիլ:
Զքեզ կը սիրեմ, ով անհուն բա-
րութիւն, և միշտ սիրել կ'ու-
զեմ:

Բ. Ոչ այնչափ Յիսուսի մա-
հր, ցաւերն ու նախատինքները,
զորոնք մեզի համար քաշեց,
պէտք է վառեն զմեզ իր սիրով:

որչափ այն քաշածներուն վախ-
ճանը, որ է մեզի իր սէրն
յայտնել և մեր սիրտը շահիլ:
«Աստուծի գիտացաք զսէրն, զի
նա զանձն իւր եդ վասն մեր».
Ա. Յովհ. Գ. 16: Զմեզ փրկե-
լու համար հարկ չէր որ Յիսուս
այնչափ չարչարանք քաշէր ու
ինչուան մեռնէր, այլ բաւական
էր մէկ արեան կաթիլ մը կամ
մէկ արցունք մը թափէր. մար-
դացեալ Աստուծոյն արեան կամ
արտասուաց մէկ թափած կա-
թիլը՝ բաւական էր բիւրաւոր
աշխարհքներ փրկելու. բայց ին-
քը բոլոր արիւնն ուղեց թա-
փել. ուղեց՝ ցաւոց և անար-
դու թեանց ծովու մէջ ընկղմել
ինքզինքը, որպէս զի մեր վրայ
ունեցած անհուն սէրն իմացրնէ
մեզի եւ փոխադարձ ստիպէ
զմեզ զինքը սիրելու. «Սէրն
Քրիստոսի ստիպէ զմեզ», կ'ըսէ
Պողոս առաքեալ. Բ. Կոր. Ե.

14. չըսեր Քրիստոսի չարչարանքները՝ մահը կը ստիպեն զմեզ զինքը սիրելու, հասլա սէրը: Եւ ո՛վ էինք մենք, ո՛վ Տէր, որ այդչափ թանկագնի ուղեցիր գնել մեր սէրը: « Ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ որ ի վերայ նոցայն մեռաւ » . Բ. Կոր. Ե. 15: Ուրեմն Փրկիչ իմ, դու մեզի համար մեռար, որպէս զի մենք ալ քեզի ու քու սիրոյդ համար ապրինք: Բայց դու, Տէր, որ այսչափ սիրելի ես, դու որ այսչափ չարչարանք քաշեցիր մարդկանց սիրելի ըլլալու համար, արդեօք քանի՞ հոգի կը գանուին որ զքեզ սիրեն: Քրեթէ զամենքը կը տեսնեմ որ մէյմէկ բան կը սիրեն, ո՛րը հարստութիւն, ո՛րը պատիւ, ո՛րը զուարճութիւն, ուրիշն ազգականները, մէկն ալ բարեկամները,

կայ ալ որ կենդանիները կը սիրէ: Բայց քանի՞ հոգի են առնուք որ ճշմարտապէս սիրեն զքեզ, դու որ սէր ես անհուն: Ո՛վ Տէր, խիստ քիչ են: Բայց այս քիչերուս մէջ ես ալ կ'ուզեմ ըլլալ ասկէ ետքը, ես՝ որ երբեմն դառնացուցի զքեզ՝ հողը քեզմէ աւելի սիրելով. բայց հիմա ամէն բանէ վեր զքեզ կը սիրեմ: Ո՛վ Յիսուս իմ, այն կսկիծներն որ ինձի համար քաշեցիր, կը ստիպեն զիս սիրել զքեզ և սուելի սէրս կը վառի ու կը բորբոքի՝ մտածելով որ այնչափ չարչարանք կրեցիր, առ իս ունեցած սէրդ յայտնելու համար, որպէս զի ես ալ փոխադարձ զքեզ սիրեմ: Ո՛վ Տէր իմ՝ սիրեցեալ, սիրոյդ համար դու զքեզ բոլոր ինձի տուիր, ես ալ սիրոյս համար բոլոր քեզի կուտամ. դու իմ սիրոյս համար մեռար, ես ալ քու սիրոյդ

համար մեռնիլ կ'ուզեմ, երբ և
ի՛նչ կերպով որ կ'ուզես: Ըն-
դունէ ուրեմն սէրս և օգնէ ինձի
շնորհքովդ:

Գ. Յիսուսի չարչարանքները
մտածելէն լաւագոյն միջոց
չկայ զմեզ իր սիրովը վառելու:
Մէկն որ Յիսուսի չարչարանաց
կը հաւատայ և անոնց վրայ կը
մտածէ, անկարելի է որ դառ-
նացընէ զինքն ու չսիրէ, մանա-
ւանդ թէ չբորբոքի անոր սի-
րովն, ինչպէս ինքը մեր սիրով:
Անոր համար կ'ըսէ Առաքեալը,
թէ՛ երբ հեթանոսք կը լսէին
խաչեցելոյն Յիսուսի չարչարան-
քները՝ խենթութիւն կը կար-
ծէին: «Մեք քարոզեցուք զխա-
չելեալն Քրիստոս՝ Հրէից գայ-
թակողութիւն և հեթանոսաց յի-
մարութիւն»): Ա. կոր Ա. 23:
Ի՛նչպէս կարելի է, կ'ըսէին, որ
ամենակարող և երջանիկ Աս-
տուած մը, ինչպէս որ ինքն է,

ուզենայ արարածներու համար
մեռնիլ:

Ո՛վ Տէր, դու որ այս աստի-
ճան մարդկանց սիրով լեցուած
ես, ի՛նչպէս կարելի է ըմբռնել
որ այսչափ ըրած բարիքներդ ու
այսչափ ցըցուցած սէրդ՝ մարդ-
կանցմէ ասանկ ապերախտու-
թեամբ փոխարինուի: Կ'ըսուի
սովորաբար թէ սիրոյ՝ փոխա-
դարձ սէր կը հատուցուի. բայց
քու սիրոյդ ի՛նչ սէր կրնայ փո-
խարինուիլ: Քու սիրոյդ փոխա-
րինելու համար, որ մեռնելովդ
ցըցուցիր մեզի, պէտք էր ու-
րիշ Աստուած մը մեռնէր, քեզի
համար: Ո՛վ խաչ, ո՛վ վերք, ո՛վ
մահ Յիսուսի, կը սախակք զիս
սիրել զՅիսուս: Ո՛վ Աստուած
յաւելտենական, սիրելի և ան-
սահման, կը սիրեմ զքեզ ու
քեզի համար միայն կ'ուզեմ ա-
պրիլ և քեզի սիրելի ըլլալ: Ըսէ
ի՛նչ որ կ'ուզես, պատրաստ եմ

ու կ'ուզեմ ամէն ուզածդ ընել:
Դու յոյս իմ Մարիամ, ազաջէ
Յիսուսի ինձի համար:



ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Յիսուսի արիւն քրտնեղոշն և
պարտիզին մեջ կրած տագ-
նապնեղոշն վրայ:



Ա.

իսուսի մեռնելու
Ժամը մօտեցած ըլ-
լալով՝ Գեթսեմա-
նիի սարսէզը կ'եր-
թայ, ուր ինքիրմէ
իր դառն չարչա-
րանքները կը սկսի
զգալ. թող կու տայ որ վախ
նեղութիւն եւ տրտմութիւն
գան զինքը չարչարեն: Սկսաւ
մեծ վախ մը ու նեղութիւն
մը զգալ մահուընէ եւ ա-
նոր հետ գալիք չարչարանքնե-

րէն: Ան առեն ձողկանքները, փշերը, դամերը, խաչը աչքին առջև կու գային զինքը չարչարելու համար. և շէ թէ ետևէ ետև, հապա ամէնը մէկտեղ մանաւանդ կ'երևակայէր այն մահն որ ամենէն պիտի թողուի, ու ոչ մարդիկներէ ոչ Աստուծ մէ միտթարուծիւն մը պիտի ունենայ: Անանկ որ, այնչափ չարչարանքներն ու նախատինքները տեսնելէն գետին ինկած, կ'աղօթէր առ Հայրն երկնաւոր որ աղատէ զինքն այն վայրկեանէն. «Հայր իմ եթէ հնար իցէ անցանել յինէն բաժակիս այս միկ): Մտ. ԻԶ. 42: Բայց ի՞նչ Յիսուս չէ՞ր որ այնչափ կը փափաքէր չարչարուիլ ու մարդկանց համար մեռնիլ, ըսելով. «Մկրտութիւն մի ունիմ մկըրտել, և զիսորդ փուծամ մինչև կատարեցի): Ղկ. ԺԲ. 50: Ի՞նչ պէս ուրեմն հիմա չարչարանք-

ներէ և մահուընէ ասանկ կը վախէ: Ո՛հ, շատ խակ կ'ուզէր ինքը մեզի համար մեռնիլ, բայց որպէս զի չկարծէնք թէ իր աստուածային կարողութեամբը մեռաւ, առանց նեղութիւն մը զգալու, անոր համար այն աղօթքն ըրաւ առ Հայր որպէս զի ցուցնէ մեզի, որ շէ թէ միայն մեր սիրոյն համար կը մեռնէր, այլ և այնպիսի դառն մահուամբ կը մեռնէր, որ զինքը մեծապէս կը զարհուրեցընէր:

Բ. Յիսուսի տագնապները աստակացընելու համար մեծ տրտմութիւն մ'ալ վրան կու գայ, անանկ որ կ'աղաղակէր, թէ այն խակ բաւական է իր մահուանը. «Տրտում է ոգի իմ, մինչև 'ի մահ): Մտ. ԻԶ. 38: Բայց, ս'վ Տէր, այն մահն որ մարդիկ քեզի կը սրատրաստեն, քու ձեռքդ է անկից աղատիլը՝ թէ որ կ'ուզես. ինչո՞ւ կը տագ-

նապիս: Ո՛հ, ոչ այնչափ չար-
 չարանաց ցաւերը կը կըտըրտէին
 սիրեցեալ Փրկչին սիրտը, որ-
 չափ մեր մեղքերը: Ինքը, մեղ-
 քերն աշխարհքէս ջնջելու հա-
 մար եկած էր. բայց տեսնելով
 որ իր այնչափ չարչարանքներ
 քաշելէն ետքն ալ՝ աշխարհքիս
 վրայ անթիւ անհամար անօրէ-
 նու թիւններ պիտի գործուին,
 այն զինքը մեանելէն սուաջ մա-
 հուան կը մօտեցընէր, և այն-
 չափ արեան քրտինք թափել կու-
 տար՝ մինչև գետինը կը թըլէր.
 «Հոսէին ի նմանէ քրտունք իբրև
 զկայլակս արեան՝ ոլոռն ոլոռն
 հեղեալ՝ ի յերկիր»): Ղկ, ԻԲ. 44:
 Այս վասն զի կը տեսնէր այն
 ատեն Յիսուս աչքին առջև իր
 մահուընէն վերջ մարդկանց ը-
 նելու մեղքերը, անոնց մէկմէ-
 կու գէմ տակելութիւնները, ա-
 նամօթութիւնները գողութիւն-
 ները, հայհոյութիւնները, ըս-

պանու թիւնները, եւ ամենայն
 յանցանք բոլոր իրենց գէշու-
 թիւններով իբրև անգութ գա-
 զան կու գային իւր սիրտը պա-
 տըռտելու: Ուստի կ'ըսէր. Այս
 է ուրեմն ձեզմէ, ով մարդիկ,
 սիրոյս փոխարէնը: Ո՛հ թէ ե-
 րախտագէտ տեսնէի զձեզ ինձ,
 որչափ ուրախութեամբ ի մահ
 կը վազէի: Բայց իմ այնչափ
 չարչարանքներէս ետքն այսչափ
 մեղք տեսնել, այնչափ սիրոյս
 փոխարէն՝ այսչափ ապերախտու-
 թիւն՝ այս զիս ինչուան ի մահ
 կը արտմեցնէ և ինձ արիւն քըր-
 տնել կու տայ:

Ուրեմն, սիրելիդ իմ Յիսուս,
 իմ մեղքերս էին այն ատեն որ
 զքեզ այնչափ արտմեցուցին:
 Թէ որ ես քիչ մեղանչած ըլլայի,
 դու ալ քիչ կը կրէիր: Որչափ
 ախորժ առի զքեզ վշտացնելուս,
 այնչափ աւելի քու տագնասու-
 ներդ շաացուցի: Եւ ինչպէս

Հիմա ցաւէս չեմ մեռնիր մտա-
 ծելով որ տրամուծիւնդ եւ
 ցաւերդ աւելցուցի սիրոյդ փո-
 խարէն: Ե՞ս ուրեմն դառնացու-
 ցի այն սիրան, որ զիս այնչափ
 սիրեր է: Արարածներու երախ-
 տագէտ եղած եմ, և քեզի միայն
 ապերախտ: Յիսուս իս, տուր
 ինձ թողուծիւն, վասն զի բո-
 լոր սրտովս կը զղջաս:

Գ. Տեսնելով Յիսուս ինքզին-
 քը մեր մեղքերով ծանրացեալ,
 « Անկաւ 'ի վերայ երեսաց իւ-
 րոց »: Մտ. ԻԶ. 39: Երեսը դե-
 տին կը խոնարհեցնէ, իբրև թէ
 կ'ամաչէ աչքերը երկինք վեր-
 ցնել: Եւ մահուան հոգեվարքի
 մէջ, երկայն կ'աղօթէր: « Եւ էր
 'ի տագնասպի, եւ մտադիւրու-
 թեամբ ևս կայր յաղօթս » Ղկ.
 ԻԲ. 43: Դու, Տէր իս, փոխա-
 նակ իմ մեղքերուս յանձն առ-
 նելով մեռնիլ, կ'աղօթէիր ինձ
 համար առ Հայր Աստուած, որ

Թողու ներէ անօրէնուծեանցս:
 Հոգի իմ, ինչպէս ինքզինքդ
 այսպիսի սիրոյ մի չես նուիրեր,
 ինչպէս անոր հաւատալով՝ ու-
 ընչ բան կրնաս սիրել բաց 'ի
 Յիսուսէն: Հայա, ընկիր հոգե-
 վարք Յիսուսիդ ոտքն ու ըսէ.
 Ա՛վ փրկիչ իմ սիրեցեալ, ինչ-
 պէս կրցար սիրել՝ զքեզ չարա-
 չար դառնացնողը: Ինչպէս կըր-
 ցար ինձ համար մեռնիլ, տես-
 նելով իմ ապերախտուծիւնս:
 Տուր գոնէ ինձ ալ այն ցաւէդ,
 զոր կրեցիր ի պարտիզին իմ մե-
 դացս համար. կը զղուիմ արդ
 անոնցմէ. ո՛վ սէր Յիսուսի դու
 ես իմ սէրս: Տէր, ես զքեզ
 կը սիրեմ, զքեզ կը սիրեմ,
 զքեզ կը սիրեմ և քու սի-
 րոյդ համար ամեն նեղու-
 թեան և ամեն կերպ մահուան
 պատրաստ եմ: Այն տագնասպ-
 ներն որ 'ի պարտիզին կրեցիր,
 անոնց արդեամբք տուր ինձ յա-

բատեռթեան սուրբ շնորհքը:
Մարիամ յոյս իմ, աղաչէ զՅի-
սուս ինձ համար:



ԵՐԵՒՇԱԲԱԹԻ

Յիսուսի Հրե-
իցսէ մատնուե-
լուսն և բանտը-
նելուսն վրայ.

Ա. Կը հասնի
Յուդա ձիթե-
նեաց պարտէզն
ու պագնելով կը
մատնէ իւր վար-
դապետը. իսկ
յանդուգն պաշ-
տօնեայք կը յար-
ձակին Յիսուսի
վրայ եւ աւա-
ղակի մը պէս
կը կապեն զին-

քը. « Կալան զՅիսուս և կապե-
ցին »: Յովհ. ժԸ. 12: Աստուած

մ'է կապուածը. ինչո՞ւ, եւ ուրոնցմէ. նոյն իսկ իւր արարածներէն: Հրեշտակք երկնից, ի՞նչ կ'ըսէք: Եւ դու Յիսուս իմ, ինչու կը թողուս որ զքեզ կապեն: Գերեաց եւ յանցաւորաց չուաններն ի՞նչ ունին թագաւորաց թագաւորին և սրբոյն սրբոց հետ: Բայց եթէ կը յանդըգնին մարդիկ կապել զքեզ, դու որ ամենակարող ես, ինչո՞ւ զքեզ չես քակեր ու ազատեր այն բարբարոսաց առած չարչարանքներէն: Ա՛հ, այն չուաններն ոչ են, այլ առ մեզ ունեցած սէրդ է որ զքեզ կը կապէ և 'ի մահ կը դատապարտէ:

Տես, ո՞վ մարդ, կ'ըսէ Ս. Բռնավենաւորայ, տես թէ ի՞նչպէս գէշ կերպով կը վարուին Յիսուսի հետ. ոմանք կը բռնեն, ոմանք կը նեղեն, ոմանք կը կապեն, ոմանք ալ կը հրեն: Յիսուսին ալ նայէ, ի՞նչպէս հեղ

դառնուկի մը պէս, առանց գէմ գնելու կը թողու զինքը որ մահուան տեղը տանին: Ի՞նչ առաքեալք, ի՞նչ կ'ընէք. ինչո՞ւ չէք վազեր ու թշնամեաց ձեռքէն զինքը ազատեր, կամ գոնէ ինչո՞ւ հետը չէք երթար ու դատաւորին դիմաց իւր անմեղու թիւնը պաշտպաներ: Բայց ո՞վ Տէր, հազիւ թէ աշակերտներն զինքը բռնած կապած կը տեսնեն՝ կը թողուն ու կը փախչին: « Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենեքին՝ եւ փախեան »: Մրկ. ԺԴ, 50:

Ո՞վ Յիսուս իմ, երեսէ ծըգուած, ո՞վ զքեզ պիտի պաշտպանէ, թէ որ ամենէն սիրելիներդ զքեզ կը թողուն: Աւա՛ղ, այն եղած նախատինքը չարչարանքներովդ միայն չլինեցաւ: Ա՛րչափ հոգիք յետ արդեամբքդ սրբւելու ու մասնաւոր շնորհքներդ ալ վայելեւու՝ անարգ շահու մը,

կամ մարդկային նկատման մը
 և կամ անարգ հաճոյից համար
 զքեզ կը թողուեն: Ափսոս ինձ,
 որ ես ալ այս ապերախտներէն
 մէկն եմ: Յիսուս իմ թողու-
 թիւն տուր ինձ, ա՛յ չեմ ուզեր
 զքեզ թողուլ, կը սիրեմ զքեզ,
 և աւելի յանձն կ'առնում մեռ-
 նիլ՝ քան քու շնորհքդ կորսըն-
 ցընել:

Բ Երբոր զՅիսուս կայիափայլի
 առջև հանեցին, հարցուց իւր
 աշակերտաց և իւր վարդապե-
 տու թեան վրայօք: Պատասխա-
 նեց Յիսուս, թէ ծածուկ քան
 խօսած չունի՝ հապա ամենուն
 առջև, ուստի չորս կողմի կեցող-
 ներն աղէկ գիտէին իւր քարո-
 ղածները: « Ես յայտնապէս խօ-
 սեցայ, ահաւասիկ նոքա գիտեն
 զինչ խօսեցայ »: Յովհ. ԺԸ. 20:
 Բայց այս պատասխանիս պաշ-
 տօնեաներէն մին, իբրև լրբեն-
 ւոյ ծանր ապտակ մի կ'իջե-

ցընէ, ըսելով. « Ա՛յդպէս պատաս-
 խանի տաս քահանայապետիդ »:
 Ա՛յ համբերու թեանդ, Աստուած
 իմ, Ի՞նչպէս այնպիսի հեզ պա-
 տասխան մը, ասանկ նախատա-
 նաց արժանի սեպուեցաւ այն-
 շափ բազմութեան՝ և նոյն իսկ
 քահանայապետին առջև, որ փո-
 խանակ այն անօրէնն յանդիմա-
 նելու՝ լռութեամբն ըրածին կը
 հաւնի:

Ա՛յ Յիսուս իմ, ամեն քանի
 կը համբերես, քեզի դէմ ըրած
 անօրէնութիւններս քաւելու
 համար: Սէր իմ, շնորհակալ եմ,
 այս քանիս: Հայր երկնաւոր,
 Յիսուսի արդեամբք թողութիւն
 տուր ինձ Փրկիչ իմ, զքեզ քան
 զիս աւելի կը սիրեմ:

Ետքն հարցուց իրեն քահա-
 նայապետը թէ՛ իրաւցնէ Աս-
 տուծոյ որդի՞ն է: Յիսուս աս-
 տուածային անուանէն պատկա-
 սելով, հաստատեց թէ իրաւ է:

այն ատեն Աստուծոյ պատանեց
 զգեամենեք, ըսելով թէ հայ-
 հոյեց Յիսուս, և ամենքը կան-
 ջեցին թէ մահուան արժանի է:
 «Նոքա պատասխանի ետուն և
 ատեն, մահապարտ է»: Մտ.
 ԻԶ. 65:

Այո, փրկիչ իմ, մահուան յան-
 ցաւոր ես, վասն զի իմ յան-
 ցանքներս վրագ կ'առնուս, որ
 յաւիտենական մահուան արժա-
 նի եմ: Բայց որովհետև դու քու
 մահուամբդ իմ կեանքս փրկե-
 ցիր, սէտք է որ ես ալ քեզի
 համար կեանքս տամ: Ես զքեզ
 կը սիրեմ, և ուրիշ բանի չեմ
 փափաքիր, բայց եթէ սիրել
 զքեզ: Եւ դու որ թագաւոր ես
 թագաւորաց և ուղեցիր իմ սի-
 րոյս համար քան զամեն մարդ
 աւելի նախատուիլ, ես ալ քու
 սիրոյդ համար ամեն նախատինք
 կ'ուզեմ քաշել, ինչ ալ որ ըլ-
 լայ: Միայն կը խնդրեմ քու

նախատանացդ արդեամբք՝ տաս
 ինձ շնորհք համբերուածեան:

Գ. Քահանայից ժողովքը մա-
 հապարտ վճռելով զՅիսուս, չա-
 րագործներու բազմութիւն մի
 բոլոր գիշեր կը ծեծեն, կը կռփեն
 զինքը ու երեսը կը թքեն ի-
 բրև անօրէն դատաստարաւոյ մը:
 «Յայնժամ թքին ընդ երեսս
 նորա, և կռփեցին զնա, եւ ո-
 մանք ապտակեցին»: Մտ. ԻԶ.
 67: Եւ ապա ծաղր ընելով կ'ը-
 սէին. «Մարգարեաց մեզ Քրիս-
 տոսդ, ս'վ է որ եհարն զքեզ»:
 Անդ: Ո վ սիրեցեալդ իմ Յիսուս,
 անոնք աստակ կ'իշխեցնեն քեզ,
 երեսդ կը թքեն և դու լուս
 կը կենաս, և գառնուկի մը սէս
 առանց ձայն հանելու ամեն բա-
 նի կը համբերես, մեր տեղն հա-
 տուցանելու համար: «Իբրև ոչ
 իսար ի սպանդ վարեցաւ, եւ ի-
 բրև որոշ առաջի կարչի անմուռնչ
 կայ, այնպէս ոչ բանայ զքերան

իւր » : Ես. ԾԳ. 7 : Բայց եթէ
անոնք զքեզ չեն ճանչնար, ես
զքեզ իմ տէրս և Աստուածս կը
դաւանիմ, կը ճանչնամ անմե-
ղութիւնդ և գիտեմ որ բոլոր
ինձ համար կը կրես : Շնորհա-
կալ եմ Յիսուս, եւ կը սիրեմ
զքեզ բոլոր սրտովս :

Երբոր լուսցաւ՝ Պիղատոսի
տարին զՅիսուս, որպէս զի մա-
հուան դատապարտէ . Պիղատոս
անմեղ դատեց զինքը, բայց Հը-
րէից ձեռքէն ազատելու համար՝
որ ազազակ կը վերցնէին, Հե-
րովդեսի խաւրեց՝ որ անոր հը-
րաշք ընելը կ'ուզէր տեսնել .
պարզ հետաքրքրութեան հա-
մար քանի մի հարցմունք հար-
ցուց Յիսուսի . բայց Յիսուս
արժանի չսեպելով այն չարա-
գործը պատասխանի, լուռ կե-
ցաւ ու պատասխան չտուաւ :

Ասոր վրայ այն հպարտը՝ շատ
նախատինքներ ըրաւ Յիսուսի,

և մասնաւորապէս խենթի ճեր-
մակ զգեստ հագցնել տուաւ :

Ո՛վ յաւիտենական իմաստու-
թիւն, ո՛վ Յիսուս իմ, խենթ սե-
պուելու նախատինքը կը պակ-
սէր քեզ : Ո՛վ Տէր, ես ալ ան-
ցեալ կենացս մէջ Հերովդեսի
պէս նախատեցի զքեզ, բայց մի՛
Հերովդեսի պէս պատժեր զիս,
ձայնէդ զիս զրկելով : Հերովդէս
զքեզ չէր ճանչնար, ես զքեզ իմ
Աստուածս կը խոստովանիմ :
Զզղջաց Հերովդէս իւր զքեզ
նախատելուն, ես բոլոր սրտովս
կը զղջամ : Հերովդէս զքեզ չսի-
րեց, ես ամեն բանէ վեր զքեզ
կը սիրեմ : Մի՛ զրկեր զիս ձայ-
նէդ, ըսէ ինչ որ կ'ուզես ինձ-
մէ, բու շնորհքս : լդ ամեն բան
կ'ուզեմ ընել : Մարիամ, յոյս
իմ, միջնորդ եղիր առ Յիսուս ինձ
համար :

ԶՈՐԵՔՇԱԲԱԹԻ

Չաղկաւեր .



Ա .

Եսնելով Պիղատոս թէ Հրէայք չեն գաղտնի Յիսուսի մահը պոռակէն, կը մատնէ զինքը

գահիճներու ձեռքը որ ծեծեն . « Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս և գան եհար » : Յովն . ժԹ . 1 : Կը կարծէր անիրաւ գատաւորը , թէ ասով անոր թըշնամինէրը կը լռեցնէ . և զինքը մահու անէ կը խալըսէ : Բայց այս գիւտը՝ շատ ցաւագին եղաւ Յիսուսի . երբ խմացան Հրէ .

այք թէ Պիղատոս այն պատժէն ետքը պիտի թողու զինքը , ինչպէս որ ըսաւ , « Խրատեցից զգաւ արձակեցից » , Ղկ . ԻԳ . 23 , կաշառեցին զգահիճները , որ անանկ զինքը ծեծեն՝ որ այն ատնջանքին մէջ մեռնի : Մտիր , հոգի իմ , Պիղատոսի պալատը , այն օրն որ Փրկչին ցաւոց և նախատանաց օրն էր . տես թէ ինչպէս Յիսուս հոն հասած , ինքն իր զգեստները կը հանէ , սեանը կը պլլուի , ցուցնելով մարդկանց իւր չարչարանքներն ու սէրը : Տես թէ ինչպէս անմեղ Քառնը , գլուխը խոնարհած , ամչնալէն կարմրեցած՝ տանջանաց կը սպասէ : Եւ ահա գահիճները , կատաղի շանց պէս վրան կը յարձակին : Տես՝ մէկը կուրծքը կը ծեծէ , մէկն ուտը , մէկալը կողերը . անանկ որ և ոչ իսկ սուրբ գլուխը ծեծերէ ազատ մնաց : Ահ , իւր աստուածային արիւնն

ամեն կողմէն կը վաղէ, դահիճ-
ները՝ սիւնը՝ գետինը՝ բոլոր իւր
արեամբ թաթխելով:

Ո՛վ Տէր, դահիճներն ալ ու-
րիշ առողջ կողմ չգտնելով, վերք
վերքի վրայ կ'աւելցնեն, և այն
սրբազան մարմինը պատառ պա-
տառ կ'ընեն: « Ի վերս ցաւոց
խմոց յաւելին »: Սղ. ԿԸ. 27:
Ո՛վ անձն իմ, ի՞նչպէս կրցար
դառնալ այն Աստուածն, որ
քեզի համար ծեծուեցաւ: Եւ
դու տէր իմ Յիսուս, ի՞նչպէս
այդչափ ցաւոց համբերեցիր ա-
պերախախտ մը համար: Ո՛վ վերք
Յիսուսի, դուք էք իմ յոյս:
Ո՛վ Յիսուս իմ, դու ես հոգւոյս
միակ սիրելին:

Բ. Եստ չարատանջ եղաւ այն
ծեծն Յիսուսի համար, որովհե-
տեւ դահիճները վաթսուեն հոգի
էին (ինչպէս որ Ս. Մարիամ
Մագդաղենացի Բացեանին յայտ-
նուեցաւ) մէկմէկու տեղ ան-

ցնելով: Վայրենասիրաքն ընտրե-
ցան այս պաշտօնին. անով ա-
մեն հարուած վերք կը բանար.
Ծեծերուն թիւն հաղարաւոր,
անանկ որ Յիսուսի կողերը բա-
ցուեցան (ինչպէս որ յայտնուե-
ցաւ Ս. Պրիծիտայի): Եւ յիրաւի
այնպիսի վերքեր բացին, որոնց-
մով Պիղատոս իսկ կը կարծէր
թէ կը գորովէ Յիսուսի թշնա-
մեաց սիրտը. ուստի զինքն ա-
նոնց կը հանէ ու կ'ըռէ. « Ահա
այրդ ձեր »: Բայց Եսայի մար-
գարէն առաջուց գուշակեր էր
Յիսուսի կրելու խեղճ ցաւերը
ծեծուելու ժամանակ, ըսելով թէ
բոլոր սուրբ մարմինը պիտի պա-
տրուաի, և բորոտի մը պէս՝ բո-
լոր վերք պիտի ըլլայ:

Ո՛վ Յիսուս, շնորհակալ եմ
այնչափ սիրոյդ. կը ցաւիմ որ ես
ալ դահիճներուն հետ միացայ
զքեզ չարչարելու: Անխիճեմ իմ
չար հաճոյքներս, որ քու այն-

չամի ցաւոցդ պատճառ եղան :
 Յիշեցուր միշտ ինձ , ո՛վ Տէր ,
 վրաս ցուցած սէրդ , որպէս զի
 ես ալ զքեզ սիրեմ ու ոչ եր-
 բէք զքեզ դառնացնեմ : Ինչպի-
 սի՛ դժոխոց արժանի պիտի ըլ-
 լամ , թէ որ յետ քու այնչափ
 աւ իս ցուցած սէրդ ճանչնա-
 լուս , ու յետ այնչափ անդամ
 ինձ ներելուդ , ես ողորմելիս
 դառնամ նորէն զքեզ վշտացնեմ
 ու զիս դատապարտեմ : Ա՛հ , այդ
 սէրդ և այդ ներելդ՝ դժոխքին
 մէջ ինձ ամենէն սաստիկ պա-
 տիժը պիտի ըլլայ . չէ , սէր իմ ,
 մի՛ թողուր զիս : Ես զքեզ կը
 սիրեմ , ո՛վ ամենաբարի , և բոլոր
 սրտով կը սիրեմ , և միշտ սիրել
 կ'ուզեմ :

Գ. Մեր յանցանքներուն և մաս-
 նաւորապէս անմաքրութեանցը
 առջ , ուզեց Յիսուս այս ծանր
 չարչարանքները քաշել իւր ան-
 մեղ մարմնով : « Բայց նա վիրա-

ւորեցաւ վասն մեղաց մերոց , և
 պատժեցաւ վասն մերոց անօ-
 բէնութեանց » : Ես . ԾԳ . 5 :
 Ուրեմն ո՛վ Տէր , մե՛նք զԱս-
 տուած դառնացուցինք , և դու
 ուզեցիր պատիժը հասուցանել :
 Օրհնեալ ըլլայ միշտ քու անբաւ
 ողորմութիւնդ : Ի՛նչ պիտի ըլ-
 լար ինձ , ո՛վ Յիսուս , թէ որ դու
 իմ տեղս չփոխարինէիր : Ա՛ւր էր
 թէ ոչ երբէք դառնացուցած
 ըլլայի զքեզ : Բայց թէ որ մե-
 ղանչեղովս սէրդ արհամարհեցի ,
 հիմա ուրիշ բան չեմ ուզեր՝ բայց
 եթէ զքեզ սիրել և քեզմէ սի-
 րուել : Դու ըսիր՝ թէ զձեզ սի-
 րողը սիրեցէք : Ես զքեզ կը սի-
 րեմ ամեն հոգւովս , արժանի ըրէ
 զիս սիրոյդ : Կը յուսամ որ ար-
 դէն թողութիւն տուած ես մե-
 ղացս և ողորմութեամբ ալ սի-
 րոյդ մէջ առած : Ա՛վ փրկիչ իմ
 սիրեցեալ , օրէ օր աւելի զիս
 սիրոյդ հետ կապէ , եւ մի՛ թո-

զուր որ ասկէ վերջ կարենամ
 քեզմէ բաժնուիլ: Ահա զիս բու-
 լորովին ձեռքդ կը յանձնես.
 պատժէ զիս ինչպէս որ կ'ուզես,
 բայց 'ի սիրոյդ մի՛ մերժեր:
 Տուր որ զքեզ սիրեմ, եւ ապա
 ինչ որ կ'ուզես ըրէ ինձի: Մա-
 ըիամ յոյս իմ, միջնորդ եղիր
 առ Յիսուս ինձի համար:



Հ Ի Ն Ք Շ Ա Բ Ա Թ Ի

Փշով պսակոշիր.

Ա.



արբարոս գահիճ
 ները գոհ չըլլալով
 Յիսուսի տուած
 քսամներէ չար-
 ւածներով և սա-
 տանաներէն ու
 Հրեաներէն գըր-
 գըռուած, ծաղրա-
 կան թագաւոր մը
 զինքը ձեացնել

ուզելով՝ կարմիր ուղորմելի զգեստ
 մը վրան ձգեցին՝ թագաւորական
 վերարկուի տեղ. գաւազանի տեղ
 եղէգ մը ձեռքը տուին, և թա-
 գի տեղ՝ փշէ պսակ մը գլուխն
 անցուցին. և որպէս զի այն

փուշալսակը՝ միայն նախատա-
 նաց համար չըլլայ, հասցա նաև
 սաստիկ ցաւոյ սրամձառ, նոյն
 եղեգով ծեծելով փշերը՝ գլխուս
 մէջ կը խօթէին: Այս պսակման
 սանջանքը խիստ սաստիկ եղաւ
 և երկայն քշեց, վասն զի այն
 փշերն ինչուան 'ի մահ գլխուն
 մէջ մնացին. ու ամեն անգամ
 որ սրակը գլխուն կը հանդիպէր,
 ցաւերը կը նորոգէին:

Ո՛վ ապերախտ փշեր, ի՞նչ կ'ը-
 նէք. այդպէս կը շարժրկէք ձեր
 արարիչը: Բայց ի՞նչ փշերը. դու
 հոգի իմ դու էիր որ անօրէն
 մեղքերովդ տիրոջդ գլուխը վի-
 րաւորեցիր: Յիսուս իմ սիրե-
 ցեալ, դու որ թագաւոր ես եր-
 կնից, հիմա ցաւոյ ու անար-
 դանաց թագաւոր եղեր ես: Տես
 թէ ոչխարացդ վրայ ունեցած
 սէրդ զքեզ ո՛ւր հասոյց: Ո՛վ Տէր
 իմ, ես զքեզ կը սիրեմ, բայց
 քանի որ կ'ապրիմ միշտ զքեզ

կորսնցնելու՝ սէրդ արհամար-
 հելու վասնդի մէջ եմ, ինչպէս
 անցեալ կէնացս մէջ: Յիսուս իմ,
 եթէ տեսնես որ զքեզ նորէն
 պիտի դառնացնեմ, հիմակուրնէ
 առ կեանքս, հիմա որ կը յու-
 սամ թէ շնորհացդ մէջն եմ: Մի՛
 թողուր զիս որ ա՛լ զքեզ մեղ-
 քերովս կորսնցնեմ. թէպէտ
 շատ արժանի եմ ես այս պատ-
 ժոյս, բայց դու արժանի չես:
 Ձէ, Յիսուս իմ, ա՛լ զքեզ չեմ
 ուզեր կորսնցնել:

Ի, Այն անօրէն բազմութիւ-
 նը բարբարոսաբար զՅիսուս պը-
 սակելէն յետոյ, ծունկ չոքած
 դիմացը ծաղրելով բարև կու-
 տային ըսելով. « Ողջ եր ար-
 քայդ Հրէից » . ու երեսը կը
 թքնէին, ապտակ կը զարնէին,
 ու ծաղրելով կանչուըռտելով կը
 նախատէին. « Ի ծունր իջեալ
 առաջի նորա՝ կատակէին և ա-
 սէին. Ողջ եր՝ թագաւոր Հրէ-

ից: Եւ հանէին նմա ապտակս: Մտ. Իկ. 29: Յովհ. ԺԹ. 5: Ո՛վ Տէր իմ, ի՞նչ վիճակի հասեր ես. Աստուած իմ, թէ որ պատահմամբ մէկն անկէ անցնէր, եւ տեսնէր զքեզ այդպէս կերպարանափոխ, կարմիր պատուած զդէստով մի ծածկեալ, այն ձեռաց դաւազանովդ, այն փշով պսակուած, այդպէս ծաղրուած ու անարգուած այն խառնազանձէն, ի՞նչ պիտի կարծէր զքեզ, եթէ ոչ աշխարհիս ամենէն մեծ անօրէնն ու եղեռնագործը: Ահա որդին Աստուծոյ բոլոր Երուսաղէմի խաղաղիկ եւ ծաղր եղած:

Ո՛վ Յիսուս իմ, թէ որ արտաքին մարմնոյդ նայիմ, բաց ի վիրաց եւ յարեմէ բան չեմ տեսներ. Թէ որ սիրտդ մտնեմ, ուրիշ բան չեմ գտներ՝ բայց եթէ վիրա եւ դաւնութիւն, որ զքեզ հոգեվարքութեան կը հաս-

ցընեն: Ո՛վ Տէր իմ ողորսութիւն ամբաւ, քեզմէ դատ ո՞վ կրնար իւր արարածներուն համար այսչափ խոնարհիլ ու այսչափ բան քաշել: Բայց որովհետեւ Աստուած ես աստուածաբար կը սիրես: Իւրաքանչիւր վէրքերդ որ կը տեսնեմ՝ ամեն մէկը սիրոյդ նշաններն են: Ո՛հ, եթէ նկատէին մարդիկ աչքերնուն առջև Երուսաղէմայ մէջ կրած ցաւոցդ և նախատանաց տեսարանը, ո՞վ սիրոյդ վրայ չէր զարմանար: Տէր, ես զքեզ կը սիրեմ, և դիս բոլոր քեզ կ'ընծայեմ: Արիւնս եւ կեանքս ահա քեզի համար կուտամ: Ահա պատրաստ եմ չարչարուելու և մեռնելու, ինչպէս որ ուզես: Եւ ի՞նչ կրնամ ժըխտել քեզ, դու որ ինձ համար կեանքդ ու արիւնդ տուիր. Ընդունէ խեղճ մեղաւորի մը անձնանուէր զոհը, որ հիմա բոլոր սրտով զքեզ կը սիրէ:

Գ. Երբ զՅիսուս Պիղատոսի առջև հանեցին, բեմի մը վրայ նստած ժողովրդեան հանեց զինքը ըսելով, « Ահա այրդ » • ըսել ուղեւորով, ահա ձեզի այն մարդն որ ինձ բերիք, ամբաստանելով թէ թագաւոր կ'ուզէ ըլլալ • ահա վախն անյաւ, հիմա որ զինքը այս խեղճ վիճակին հասուցիք, ինչպէս կը տեսնէք, ակերկայն կեանք չունենար • թողէք երթայ իւր տունը մեռնի, մի' ստիպէք զիս անմեղ մը մահուան դատասարտել: Բայց Հրեաները աւելի գրգռուած կը կանչուըռտէին, « Խաչեացի, խաչեացի • Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց »: Մտ. Իէ. 25: Բայց ինչպէս որ Պիղատոս բեմին վրայէն ցուցուց զՅիսուս ժողովրդեան, այսպէս Հայրն երկնաւոր յերկնից կը ցուցնէ մեզ իւր որդին, նոյնպէս ըսելով, ահա այն մարդն

որ ձեզի փրկիչ խոստացայ, որուն այնչափ կը սպասէիք • ահա այն մարդն որ իմ մէկ հատիկ զաւակս է, զոր ինձ պէս կը սիրեմ • ահա ձեր սիրոյն համար ամենէն թշուառ ու ամենէն նախատեալ մարդը դարձեր է: Ի՛հ, նայեցէք իրեն, ու սիրեցէք զինքը:

Ո՛վ Տէր իմ, այո՛ կը նայիմ որդւոյդ ու կը սիրեմ զինքը • բայց դու ալ նայէ անոր, եւ իւր ցաւոց ու նախատանացն համար, թողու թիւն տուր քեզի դէմ գործած բոլոր յանցանացս: « Արիւն դորա ՚ի վերայ մեր » • Որդւոյդ արիւնը մեր հոգւոյն վրայ իջնայ և ողորմութեանդ արժանի ընէ զմեզ: Կը ցաւիմ, ամբաւ բարի, զքեզ դառնացնելուս, և զքեզ կը սիրեմ բոլորով սրաիւ: Բայց դու գիտես իմ տկարութիւնս, դու օգնէ ինձ • Աստուած իմ՝ ու

դորմէ ինձ: Մարիամ յոյս իմ,
միջնորդեա առ Յիսուս վասն
իմ:

ՈՒՐԲԱԹ

Յիսուսի դատաւարտոռչիւն ու
Գողգոթա ելնելը.

Ա. Վերջապէս Պիղատոս Օ-
գոստոսի աչքէն լւյնալու վա-
խով, յետ այնչափ անգամ զՅի-
սուս արդար գտնելուն, կը գա-
տաւարտէ որ խաչին վրայ մեռ-
նի: Ո՛վ Աստուածս դատաւար-
տուած, ինչ յանցանք գտաք
վրան, կամ դու ո՛վ Տէր, ըսէ,
ի՞նչ յանցանք ըրիր մահուան
արժանի: Գիտեմ, գիտեմ Տէր,
ըրած յանցանքդ, քու յանցանքդ
զմեզ շատ սիրելի է: Պիղատոսէ

աւելի այս զքեզ մահուան կը
դատաւարտէ:

Կը կարգան անօրէն վճիռը,
Յիսուս մտիկ կ'ընէ, և ամե-
նայն սիրով յանձն կ'առնու,
հնազանգելով երկնաւոր Հօր կա-
մաց, որ մեր մեղաց համար, ա-
նոր մեռնիլը կ'ուզէր, և զայն
խաչի վրայ. «Խոնարհեցոյց զան-
ձրն, լեալ հնազանգ մահու շափ
և մահու խաչի»: Փիղ. Բ. 8:
Ո՛վ Յիսուս իմ, դու անմեղ ըլ-
լալովդ յանձն առիր մեռնիլ իմ
սիրոյս համար, ես մեղաւորս՝
քու սիրոյդ համար յանձն կ'առ-
նում մեռնիլ, երբ ու ինչպէս որ
ուզելու ըլլաս:

Վճիռը կարգացուած ին պէս
կատաղաբար բռնեցին անմեղ
Գառնը, իւր զգեստները հա-
գուեցուցին, և երկու աձև փայ-
տերէ խաչ մը շինած իրեն բե-
րին: Չսպասեց Յիսուս որ ի-
րենք զայն իւր կռնակը տան,

ինքը գրկեց զայն, սպառաւ, ու վիրաւոր ուսերուն վրայ առաւ, ըսելով. Եկուր սիրելի խաչս. երեսունուհրեք տարուընէ ի վեր է՝ որ զքեզ կը փնտռեմ, քու վրադ կ'ուզեմ մեռնիլ, իմ ոչխարացս սիրոյն համար:

Ո՛վ Յիսուս իմ, դեռ ի՞նչ կըրնայիր ընել զիս ստիպելու համար՝ որ զքեզ սիրեմ: Թէ որ մէկ ծառաս ինքզինքն ինձ համար նուիրէր, բոլոր սէրս կը գրաւէր. ի՞նչպէս ուրեմն այսչափ ատեն աւանց զքեզ սիրելու կրցեր եմ ապրիլ, գիտնալով որ դու ինձ համար մեռեր ես. բայց դու ինձ թողուծիւն տալու համար մեռար: Զքեզ կը սիրեմ, ո՛վ ամենաբարի, և որովհետեւ զքեզ կը սիրեմ, կը ցաւիմ զքեզ դառնացնելուս:

Բ. Ելան ատենէն դատաւորք ու դատաւարտեալք, որոց մէջ էր նաև թագաւորն երկնից խա-

չը ուսը. «Եւ բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ՚ի անդին՝ որ անուանէր գագաթան, և կոչէր եբրայեցերէն Գողգոթայ» 1: Յովհ. ԺԹ. 17: Ելէք եկէք յարքայութենէ սերովքէք եւ քերովքէք ընկերելու ձեր տիրոջն՝ որ լեռ կ'ելնէ խաչուելու: Ո՛վ տեսիլ, Աստուած մարդկանց համար կը խաչուի: Տես հոգի իմ, տես Փրկիչդ որ քեզի համար մեռնելու կ'երթայ. տես թէ ի՞նչպէս գլուխը ծռած կ'երթայ, դողդոջուն ծունկերով, բոլոր մարմինը սաւառնած վերքեր, ամեն կողմէն արիւնը կը վազէ, փշէ պսակը գլուխը, եւ ծանր փայտն ալ ուսը: Ո՛վ Տէր, անանկ նեղութեամբ կը քալէ, որ կարծես թէ ամեն մէկ քայլին հոգին պիտի տայ: Ո՛վ գառն Աստուծոյ, ըսէ ո՛ւր կ'երթաս: Քեզի համար մեռնելու կ'երթամ, կը սպասա-

խանէ: Երբոր զիս մեռած տես-
նես՝ յիշէ, կ'ըսէ, այն սէրս որ
ունեցայ առ քեզ. յիշէ զիս, ու
սիրէ զիս: Ո՛վ Փրկիչ իմ, ի՞նչ-
պէս կրցայ այսչափ առեմն ա-
պրել քու սէրդ մոռցած: Ո՛վ իմ
մեղքերս, դուք դառնացուցիք
իմ սիրոշու սիրտը, այն սիրան
որ զիս այնչափ կը սիրէր:

Յիսուս իմ, կը զղջամ քեզի
ըրած անիրաւութեանցս. շնոր-
հակալ եմ ինձ ցուցած համբե-
րութեանդ. և զքեզ կը սիրեմ,
զքեզ կը սիրեմ բոլոր հոգւովս
և զքեզ միայն սիրել կ'ուզեմ:
Բայց դու յիշեցո՛ միշտ առ իս
ունեցած սէրդ, որպէս զի զքեզ
սիրել չմոռնամ:

Գ. Յիսուս Գողգոթա կ'ելնէ,
և զքեզ իւր ետեւէն կը կանչէ:
Այո՛, Տէր իմ, դու անմեղու-
թեամբդ առջիկս կ'երթաս իս-
չովդ. քալէ, ես զքեզ չեմ թո-
ղուր, կու գամ ետեւէդ: Տուր

ինձ ինչ խաչ որ կ'ուզես, կը
գրկեմ զայն, և ինչուան մահ
անով կ'ուզեմ ետեւէդ գալ:
Քեզի հետ կ'ուզեմ մեռնիլ, քե-
զի հետ որ ինձ համար մեռար:
Կը հրամայես որ զքեզ սիրեմ,
ես ալ զքեզ սիրելէն զաս ուրիշ
բանի չեմ փափաքիր: Յիսուս
իմ, դու ես ու դու պիտի ըլ-
լաս միշտ իմ մէկ հատիկ սի-
րելիս: Օգնէ ինձ որ քեզի հա-
ւատարիմ մնամ: Մարիամ յոյս
իմ, միջնորդ եղիր առ Յիսուս
ինձի համար:





ՇԱԲԱԹ

Խաչելոցքիչն.

Ա. Ահա Գողգոթայի վրայ աստուածային սիրոյն հանգէս կայ, ուր Աստուած կը մեռնի մեզի համար ցաւոց ծովու մէջ: Հոն հասած չհասած, կը քաշեն կը հանեն բռնի Յիսուսի զգեստներն՝ որ վերաւոր մարմնոյն կալած էին, և զինքը խաչին վրայ կը նետեն: Գառնն Աստուծոյ կը տարածուի այն մահուան ան-

կողնին վրայ, կ'երկնցնէ ձեռքերը դահճաց, և յաւիտենական Հօրը կը նուիրէ իւր կեանքը մարդկանց փրկութեան համար: Ահա կը գամեն զինքը, և խաչին վրայ կը բարձրացնեն. տես անձն իմ, բու Տէրդ երեք գամերով այն փայտէն կախուած, ուր հանգստեան տեղ մը չունի: Երբեմն ձեռաց վրայ կը կռթընի, երբեմն ոտից, բայց ուր որ ալ կռթնի, ցաւերը կը սաստկանան: Ա՛վ Յիսուս, ի՞նչ դառն մահուամբ կը մեռնիս: Ար տեսնեմ խաչին վրայ գրուած. Յիւտոս Նագրովրեցի քագաւոր Հրրեից. բայց այս ծաղրական սատուէն զատ, ի՞նչ ուրիշ թագաւորի նշան կայ վրայ: Ահ, այդ չարչարանաց գահոյքն, այդ գամուած ձեռքերդ, այդ խոցոտեալ գլուխդ, այդ արիւնլուայ մարմինդ, աղէկ կ'իմացնեն թագաւոր ըլլալդ, բայց

սիրոյ թագաւոր: Ար մօտենամ
 ահա կարտած սրտով այդ վի-
 րաւոր ռաբերդ պագնելու: Ար
 դրկեմ այդ խաչը, որուն վրայ
 սիրոյ զոհ եղած, մեռնիլ ու զե-
 ցիր ինձ համար: Ո՛վ Յիսուս իմ,
 ինչ պիտի ըլլար ինձ արգեօք,
 թէ որ դու իմ տեղս ասաւա-
 ծային արգարու թեան փոխարի-
 նած չըլլայիր: Շնորհակալ եմ,
 Տէր կը սիրեմ զքեզ:

Բ. Յիսուս խաչին վրայ չունի
 զօք որ զինքը մխիթարէ: Բոլոր
 իւր չորս կողմն անոգները՝
 որը կը հայհոյէ զինքը, որը կը
 ծաղրէ, որը կ'ըսէ: «Եթէ որդի
 ես Աստուծոյ, էջ ի խաչէդ».
 որն ալ թէ «Զայլս ապրեցոյց
 զանձն ոչ կարէ ապրեցուցա-
 նել»: Աստուածածին ալ իրաւ
 խաչին տակ իւր հոգեվարք որ-
 դւոյն քովն էր սիրով, բայց այն
 ցաւագին Մօրը կերպարանքն,
 ոչ միայն զՅիսուս չէր մխիթա-

րէր, այլ աւելի կը վշապնէր,
 տեսնելով իրեն համար անոր
 կրած ցաւերը: Ուստի Փրկիչն
 առ Հայրն Աստուած կը դառ-
 նայ. բայց Աստուած մարդկանց
 մեղքերով զինքը ծանրացած տես-
 նելով, որոնց փոխարէնը պիտի
 հատուցանէր. Չէ, որդեակ իմ,
 կ'ըսէ անոր, չեմ կրնար մխի-
 թարել զքեզ. սէտք է որ դեռ
 թողում զքեզ չարչարանացդ
 մէջ, թողում որ անմխիթար
 մեռնիս: Այն ստեղծն էր որ կան-
 չէց Յիսուս. «Աստուած իմ,
 Աստուած իմ, ընդէր թողեր
 զիս»: Մտ. Իէ, 46:

Ո՛վ Յիսուս իմ, ինչպէս ցա-
 ւագին կը տեսնեմ զքեզ ու
 արտում ախուր: Ո՛հ շատ ի-
 րաւունք ունիս մտածելուդ, որ
 այդչափ կը չարչարուիս մարդ-
 կանց սիրելի ըլլալու համար,
 ու ետքն այսչափ քիչ հոգի զքեզ
 պիտի սիրեն: Ո՛վ գեղեցիկ հաւր

սիրոյ. դու որ Աստուծոյ մը
կեանքը մաշեցիր, հասա կեր
մաշէ բոլոր իմ երկրաւոր փա-
փաքներս, և վառէ զիս միայն
այն սիրոջս սիրով, որ իմ սի-
րոյս համար անարդ խաչի մը
վրայ ուղեց իւր կեանքը տալ:
Բայց դու, Տէր, ինչպէս կըր-
ցար ինձ համար մեռնիլ, գիա-
նալով քեզի դէմ ընելու նա-
խատինքներս: Հասա, առ ինձ-
մէ վրէժդ, տալով ինձ այնպի-
սի ցաւ մը, որ միշտ տրտում
ըլլամ զքեզ դառնացնելուս հա-
մար: Եկէք փշեր, գամեր եւ
խաչ որ այնչափ իմ Տէրս շար-
չարեցիք, եկէք իմ սիրտս ծա-
կելու և յիշեցնելու միշտ Յի-
սուսի ինձ ցուցած սէրը: Փրկէ
զիս, Յիսուս, և զքեզ սիրելու
շնորհք տալդ, զիս փրկելը ըլ-
լայ. զքեզ սիրելը իմ փրկու-
թիւնս է:

Գ. Փրկելը վերջի շունչերուն

մօտեցած նուազ ձայնով մի
կ'ըսէ. «Ամենայն ինչ կատա-
րեալ է»՝ իբրև թէ ըսէր, մար-
դիկ՝ ամեն բան լմնցաւ. ձեր
փրկութիւնը կատարուեցաւ,
ուրեմն սիրեցէք զիս, վասն զի
ձեզի սիրելի ըլլալու համար ալ
բան չմնաց որ չընեմ: Վեր նա-
յէ, հոգի իմ ահա Յիսուսդ կը
մեռնի, տես անոր մթնցած աչ-
քերը դեղնած դէմքը, և մարմինը
մահուան մօտեցած, տես ան հո-
գին՝ որ մօտիկ է իւր սուրբ
մարմնէն բաժնուելու: Երկինք
կը խաւարի, երկիրս կը դողայ,
գերեզմանները կը բացուին,
նշաններ՝ թէ կը մեռնի աշխար-
հիս արարիչը, Ահա հուսկ ու-
րեմն, Յիսուս՝ յետ իւր Հօրն
յանձնելու իւր սուրբ հոգին
ու մեծ հառաչանք մը ցաւագին
սրակն արձակելու՝ գլուխը խո-
նարհեցնելով, ի նշան իւր կե-
նաց նուիրման, վերջապէս ցա-

ւոյ սաստկու թենէն կ'աւանդէ
հոգին, և իւր սիրական Հօր
ձեռքը կ'աւանդէ:

Մօտեցիր այն իրաչին, ո՞վ անձն
իս, պլլուէ մեռեալ տիրոջ
ոտքն ու մտածէ թէ զքեզ սի-
րելուն համար մեռեր է: Ո՞վ
Յիսուս, ո՞ւր հասոյց զքեզ վրաս
ունեցած սէրդ: Եւ ո՞վ ինծմէ
աւելի քու մահուանդ պտուղը
վայելեր է: Հապա, ըմբռնել
տուր ինձ թէ ինչ աստիճանի
եղած պիտի ըլլայ Աստուծոյ
սէրն՝ որ ինձ համար մեռեր է.
որպէս զի ասկէ յետոյ քեզմէ
զատ ուրիշ բան չսիրեմ: Ես
զքեզ կը սիրեմ, ո՞վ ամենաբա-
րիգ և քու ձեռքդ կը յանձնեմ
հոգիս. քու մահուանդ ար-
գեամբը՝ ցամքեցուր սրտէս ամեն
երկրաւոր սէր, որ զքեզ միայն
սիրեմ, վասն զի դու միայն
արժանի ես բոլոր սիրոյս: Մա-

րիամ յոյս իմ, միջնորդ եղիր
առ Յիսուս ինձ համար:

Կեցցէ սէր մեր Յիսուս.

Կեցցէ յոյս մեր Մարիամ:





Ա Ղ Օ Թ Բ

Պ Ա Տ Ա Ր Ա Գ Ի

Տէր իմ և Աստուած, ահա-
ւասիկ Սեղանիդ առջև եկեր
եմ, քահանային հետ մեկտեղ
գթած Փրկչիս ու Յիսուս որդ-
ւոյդ մարմնոյ և արեան պա-
տարագը քեզ ընծայելու: Այս
պատարագով կը յուսամ պա-
տուել զքեզ եւ անբաւ ողոր-
մութեանցդ շնորհակալ ըլլալ
որով թէ ես և թէ բոլոր հա-
ւատացեալք արժանի ըլլանք
դժուութեանդ, մեղքերնուս թո-
ղութեան, պատիժներնուս քա-

կը համբերէ: Տես թէ ինչպէս
Երուսաղէմ կը տանին զինքը
նախաանկնքներով ու չարչարան-
քներով: Նայէ թէ հպարտու-
թեանդ ու մեղքերուդ համար
ինչ գին կու տայ, ի՞նչ գնով
քեզի շնորհք կը ստանայ. ըստ
այնմ խոնարհ ու սուրբ եղիբ:

Գիրք և Աշտարակ կարդայո՞ւ
ատեն.

Յիսուս Երուսաղէմ կը մտնէ.
տես, անձն իմ, ոչ ծափահա-
րութեամբ իբրև թագաւոր
կ'ընդունին զինքը, այլ իբրեւ
չարագործ մը ծաղրով եւ ա-
նարգելով: Արչափ գիւրափո-
փոխ են մարդուս զգացմուն-
քներն. ուրախութենէ բարկու-
թեան կ'անցնին, գովեստներէ
Պարտաւանաց, պատուէ անար-

գուժեան: Եւ գու, անձն իս
կը վստահիս մարդկանց... սո-
րուէ անոնց գատաստանը բանի
տեղ չգնել:... Բայց ուշագրու-
թեամբ նայէ նորէն մէյ մը ու
գիտէ զՅիսուսդ, չուաններով կա-
սրուած այն անորէններէն գա-
տաստանի կ'եղնէ, ուր կ'ամբաս-
տանուի կը ծաղրուի, կը ծե-
ծուի, և օգնութիւն մը չունի:
Ինչ գեղեցիկ գասեր կու տայ
լուելու և թողութիւն տալու, համ-
բերութեան և մահացուցման:
Կը հասկընաս, անձն իմ. երբ
պիտի սորուիս զասոնքս ո՞վ խեղճ
ողորմելի. երբ կամաւոր մա-
հացուցմամբքս կամ գոնէ ի՞նչ
վիշտ որ հանգիստի կենացդ մէջ,
առաքինական համբերութեամբ
տանելով պիտի պատժես ապրու-
տամբ, մեղաւոր մարմինդ, միշտ
մեղանչել, ու ո՞չ երբեք ասլաշ-
խարել, միշտ զԱստուած գառ-
նացնել, ու ո՞չ երբեք փոխա-

րէնը հասուցանել... Հայր
յաւիտենական, ահա պատրաստ
եմ ամեն վիշտ, ամեն ցաւ կրել
մեղացս փոխարէն, որոնք միշտ
աչացս առջին են: Մի՛ թողուր
զիս տէր Աստուած իմ, եւ մի՛
ի բացեայ առնիր յինէն:

Վերաբերոչքեկե միևնչև ցՍոչրք
սոչրք:

Ահա Փրկիչս սեան կասրուած,
ուր վայրենաբար կը ծեծուի և
փշով կը արտակուի: Ա՛վ կրնայ
տեսնել զինքն ու շլալ սիրտն
ելած: Հրեշտակք երկնից, եկէք
տեսէք փառաց թագաւորը թէ
ինչպէս ուժով կասկըպած, բո-
լոր մարմինը վէրք ու գլուխը
վիրաւոր: Եթէ թոյլ տրուած
չէ ձեզի փրկել զինքը այն չար-
չարանքներէն, գոնէ եկէք ինձի

հետ դառնապէս ողբալու : Հայր
 յաւիտենական , ընդունէ այս
 անարատ նշխարքը , անբաւ ու
 զորմութեանցդ փոխարէն՝ որ
 ըրեր ես ինձի , և ի քաւու
 թիւն անթիւ մեղացս , որ քեզի
 դէմ գործեր եմ : Տէր , գթա
 վրաս , հասիր կարօտութեանցս ,
 և մասնաւորապէս սարգէէ ինձ
 վերջին շնորհքը : Անարժան եմ ,
 իրաւ է , այս խնդիրքս ընելու ,
 ես որ այնչափ շար հաւանու
 թեամբք Յիսուսի սատուական
 գլուխը փշով սրակեր եմ : Բայց
 Յիսուսի արդիւնքները կ'ընծա
 յեմ քեզի , Աստուած , իմ , եւ
 իւր բացուած վերքերը կ'աղա
 դակեն ինձի համար , ու գթու
 թիւն եւ ողորմութիւն կը խըն
 գրեն :

Սոչրք սոչրքէն ինչոչան Սքեք
 կերեք .



այա , անձն
 իմ , ի գութ
 շարժէ տի
 ըրող վրայ .
 չէս տեսներ
 քանի՛ սիրով
 ու փափա
 քով կը գրկէ
 Յիսուս ըզ
 խաչը , որուն

այնչափ ատենէ ի վեր կը փա
 փաքէր : Արչափ ծանրացուցիր
 դու զայն քու մեղքերովդ , տես
 ու զարմացիր անոր սիրոյն եւ
 շնորհակալ եղիր : Սորուէ գուն
 ալ նոյն փափաքով զխաչը գրկել :
 Ծանրութիւնն զքեզ գետին չձգէ ,
 ոչ մարդկանց դատաստաններն
 ու ոչ ամօթը , թէ որ Յիսուսի

հետ համբերես, Յիսուսի հետ
 ալ կը թագաւորես: Քնն
 անձն իմ, գնա Յիսուսի ետեւէն
 որ Քողզոթա կ'ելնէ: Ո՛վ ահա,
 լոր տեսարան, ո՛վ ցաւագին
 ճամբորդութիւն. Յիսուսս 'ի
 մահ կը տանին, դառան մը պէս
 մորթելու: Ո՛վ Տէր, ի՞նչ ցաւ
 լալի վիճակ է իւր վիճակը:
 Տես զինքը բոլոր վերք կտրած,
 փշէ պսակ մը գլուխը, ծանր
 խաչ մ'ալ կոնակը: Տես թէ
 ի՞նչպէս ծրուած մարմնով կ'եր-
 թայ. դողդոջուն ծունկերով,
 արիւն քրտինք մտած, և անանկ
 նեղութեամբ կը քալէ, որ կ'ար-
 ծես թէ ամեն մէկ քայլին հո-
 գին պիտի աւանդէ: Եւ դու
 անձն իս, չէս օգնէր իրեն: Քնն,
 ձեռք տուր, վերցուր զինքն իւր
 տառապանաց մէջէն, մխիթարէ
 իւր վշտացեալ հոգին: Ո՛վ Յի-
 սուս իմ, ո՛վ Աստուած իմ
 տառապեալ, հիմա կ'իմանամ

հետզհետէ մեղացս դէշութիւ-
 նը: Կը զղուիմ անոնցմէ, եւ
 կու լամ դառնապէս: Երանի
 թէ բնաւ զքեզ վշտացուցած
 չըլլայի: Որչափ նախատանաց,
 որչափ անարգանաց, որչափ
 ցաւոց համբերեցիր ինձ համար,
 ո՛վ Յիսուս իմ: Ա՛մբընամ աւ-
 ջի կենացս մէջ պատիւ ու զը-
 լարձութիւն սիրելուս. որոնց
 պատճառաւ շատ անգամ շնորհ-
 բներդ ու սէրդ արհամարհե-
 եմ. մեծապէս կը ցաւիմ ու
 կ'աւաջադրեմ քեզի նմանիլ, ո՛վ
 սիրեցեալդ իմ Յիսուս:

Առեք կերեքեկ միևեկ.

Հայր մեր.

Ահա բարձրացած Փրկիչն աշ-
 խարհի: Անձն իմ, տես քու
 Տէրդ, ահա խաչին վրայ է. ա-
 նարգ փայտէ մը կախուած ու

դառնակսկիծ չարչարանաց մէջ:
 Մասածէ իւր նեղութիւնները:
 Երբեմն ձեռաց վրայ կը կռթնի
 երբեմն ոտից, բայց ո՛ւր ալ որ
 կռթնի՝ ցաւերը կը սաստկա-
 նան: Ախրալից գլուխն երբեմն
 այս, երբեմն այն գին կը դար-
 ձնէ. դէպ ի դիմաց որ ձգէ,
 ձեռքերը ծանրութենէն աւելի
 կը պատռտին. եթէ ուսերուն
 վրայ ձգէ, ուսերը փշերէն կը
 վիրաւորուին. թէ որ խաչին վրայ
 կռթնցնէ, փշերն աւելի խոր
 գլխուն մէջ կը մտնեն: Ո՛վ
 Փրկիչ իմ Յիսուս, այդ ինչ
 դառն մահ է՝ որ ինձ համար կը
 կրեն: . . . Ո՛րչափ առատ է Աս-
 տուած առ իս. իսկ ես որչափ
 ազահ էմ առ նա, որ այնչափ
 թափած արեանց տեղ և ոչ կա-
 թիլ մ'արցունք կը թափեմ: Ո՛վ
 խաչեալդ իմ Յիսուս, այդ նա-
 խատանաց ու ցաւոց գահոյիցդ
 վրայ, քեզ երկիր պագանեմ.

և խոնարհութեամբ ու լալով
 կը մօտենամ ու կը պագնեմ
 իմ սիրոյս համար գամուած
 սուրբ օտքերդ. կը գրկեմ այդ
 խաչը, որուն վրայ սիրոյ զոհ
 եղար, ու արիւնդ տուիր իմ
 տեղս Աստուծոյ արդարու-
 թեան: «Հնազանդ լեալ մահու
 չափ, և մահու խաչի»: Ո՛վ ար-
 դիւնաւոր հնազանդութիւն, որ
 մեր մեղաց թողութիւնը վաս-
 արկեցաւ: Ի՞նչ պիտի ըլլար
 ինձի, ո՛վ Տէր, թէ որ դու
 ինձի համար կեանքդ նուիրած
 ըլլայիր: Ենորհակալ եմ, սէր իմ,
 և այս գերազանց հնազանդու-
 թեանդ արդեամբք՝ կ'աղաչեմ
 սուր ինձ շնորհք որ ամեն բանի
 մէջ հնազանդիմ քու փոխանորդ-
 ներուդ, և սրտանց թողութիւն
 տամ անոնց՝ որ ինձ չարիք մ'ըրած
 են: Կը յուսամ որ ալ զքեզ չվը-
 տացնեմ, հասա ամենայն սրտով
 սիրեմ, ու միշտ սիրեմ:

Հայր սերեկն միևնչև Եւ սոչրք
արիշն.

Ահա վերջապէս կը մեռնի
Յիսուս: Տես զինքը, անձն իմ,
տես թէ ինչպէս կենացը վերջի
շուէնէրը կու տայ. տես իր
խաւարած աչքերը, գեղնած
գէմքը, սիրան որ ծանր ծանր կը
զարնէ, մարմինն ի մահ մօ-
տեցած, և սուրբ հոգին որ մօտ
է վիրալից մարմնէն բաժնուե-
լու: Ահա կը մթննայ երկինք,
երկիրս կը գողայ, գերեզման-
ները կը բացուին. ա՛հ, ինչ
նշաններ են սասնք, նշաններ
են թէ աշխարհիս Արարի-
չը կը մեռնի: Ալ, անձն իմ,
մօտեցիր այն սուրբ փայ-
տին ոտքը, որուն վրայ մեռեր
է: ... Մօտեցիր, ու մտածէ թէ
քու սիրոյդ համար մեռեր է
Յիսուս: Խնդրէ ինչ որ կ'ուզես
մեռեալ Փրկչէդ և ամեն բան

կ'առնուս: Տես զինքը այն խա-
չին վրայ, ուր բոլոր իւր կեր-
պարանքը սէր կը շնչէ և զինքը
սիրելու կը հրաւիրէ. դու ինք
խոնարհեցուցեր է՝ խաղաղու-
թեան համբոյր տալու քեզ.
ձեռուընէրը տարածեր՝ զքեզ
գրկելու, սիրաբ թացեր՝ զքեզ
սիրելու: Ո՛վ Փրկիչ աշխարհի,
ո՛վ սիրեցեալդ իմ Յիսուս, ես
զիս բոլորովին քեզ կը յանձնես,
ու քեզ կը նուիրեմ: Ընդունէ
զիս. Յիսուս փրկիչ իմ, գորո-
վագութ սրտիդ մէջ, և գլծա
վրաս, որ այսչափ ցուրտ եմ քու
սիրոյդ: Դու աւուղջացուր հո-
գւոյս վերքերը, դու վառէ զիս
քու սիրովդ, որպէս զի ասկէ
ետքը մնացած կենացս վայր-
կեանները զքեզ սիրելու և քու
սուրբ սիրոյդ մէջ յաւաջագի-
մելու գործածեմ:

Եւ սոչրք արիւնիսն .

Ո՛վ Յիսուս Աստուած իմ ,
 հոգւոյս միակ եւ գերազոյն
 բարին , ո՛ւր էր թէ ես ալ այն
 հոգիներուն երշանիկ վիճակն
 ունենայի , որ լի սրբութեամբ
 և հաւաստով ամեն օր ջերմե-
 ուանդաբար կը մերձենան առ
 քեզ և կը ճաշակեն արքայու-
 թեան սեղանէդ : . . . Ի՛նչ շահ ,
 ի՛նչ մխիթարութիւն էր ինձ ,
 թէ որ այս վայրկենիս կարե-
 նայի ես ալ սրբոց եռանդեամբ ,
 ո՛վ Տէր , միանալ ընդ քեզ , ըն-
 գունել զքեզ այս սիրոյ Հաղոր-
 դութեամբ , եւ քուկդ ըլլալ
 յաւիտեան : . . Անբաւ արգեանցդ
 համար , ազատէ զիս յանցան-
 բներէս , որոնց վրայ սրտանց կը
 ցաւիմ , և արժանի ըրէ զիս
 քեզ : Այն ատեն անարժան չեմ
 ըլլար քեզ , ո՛վ Տէր , անարժան

չեմ ըլլար որ իմ սիրտս գաս .
 բայց արդ գոնէ խօսք մը միայն
 ըսէ . քաղցրագուծ Յիսուս , եւ
 սուրբ կ'ըլլայ հոգիս : Ի քեզ
 յուսամ , առ քեզ հառաչեմ ,
 զքեզ սիրեմ ի բոլոր անձնէ :
 Յիսուս , փրկութիւն իմ եւ
 յոյս եւ սէր եւ կերակուր
 քաղցր :

Յետ ճաշակման .

Սրբէ զիս ամենասուրբ մար-
 մնովդ . . . Զօրացուր զիս անգին
 արեամբդ . . . Զարչարանացդ ար-
 դեամբք վրկէ զիս : Ո՛վ Յիսուս ,
 հոգւոյս սիրական հիւրն . . . Ի՛նչ
 հատուցանեմ քեզ այսչափ բա-
 րեացդ փոխարէն որ ըրիր ինձ :
 Պիտի սիրեմ , պիտի սիրեմ զքեզ ,
 Տէր իմ , զօրութիւն իմ , և հրա-
 մաններդ պիտի պահեմ : Պիտի
 սիրեմ զքեզ , Յիսուս , ուրա-


խուժիւն իմ, առաքինութիւն
 և երջանկութիւն: Հրեշտակաց
 և սերովբէից հետ քեզ երկիր
 պաղանեմ, զքեզ օրհնեմ, շնոր-
 հակալ կ'ըլլամ, և զիս բոլոր
 քեզ կը նուիրեմ, քեզ կը զոհեմ, և
 ինձ հետ բոլոր ախտերս, և այն
 մանաւանդ որ ախտած է վրաս...
 ողորմութեամբդ քաւէ մտքրէ
 զանոնք: Հաղորդ ըրէ զիս ար-
 դեանցդ և առաքինութեանցդ,
 մանաւանդ անոր որ աւելի պէտք
 ունիմ... վերջուր ինձմէ աշխար-
 հային զուարճութիւններն ու
 երկրաւոր զբաղմունքները: Հա-
 լապքս և յոյսս վառէ յաւիտե-
 նական բարեաց հասնելու, և
 սէրս ալ օրէ օր բորբոքէ: Սիրաս
 և խիղճս անարատ ըլլան պա-
 տուիրանացդ պահպանութեանն
 ու իմ պարտուցս կատարմանը,
 որպէս զի ոչ այսօր և ոչ ուրիշ
 օր մեղաց մէջ իյնամ, այլ սերտ
 միացեալ ըլլամ ամենասուրբ կա-

մացդ ու քեզի հետ, Յիսուս
 իմ գթած: Ի քեզ կ'ուզեմ ա-
 պրիլ ու մեռնիլ: Ա՛հ ո՛ւր էր թէ
 հիմա ալ հաղորդ ըլլայի ամե-
 նասուրբ խորհրդոցդ, համբու-
 րէի ջերմեւանդութեամբ սուրբ
 մարմինդ, զքեզ, և սուրբ օրհ-
 նութեանդ արժանի ըլլայի, զոր
 կը պաղատիմ:

Որ օրհնէս զայնոսիկ.

Հայր յաւիտենական, ընդու-
 նէ այս սուրբ պատարագն ի
 նշան իմ ծառայութեանս եւ
 հպատակութեանս քու երկրը-
 պաղելի աստուածութեանդ, ի
 շնորհակալութիւն ամբաւ ողոր-
 մութեանցդ և ի փոխարէն մե-
 ղացս: Օգտէ այս սուրբ պա-
 տարագը բոլոր հաւատացելոց
 և քաւարանի խելձ հոգւոց: Ա՛վ
 Տէր, աճեցո՛ առ իս շնորհքներդ

սլիաոյնցս համար զիս մի թո-
ղուր ի ձեռաց: Կը խոստանամ
երկնից և երկրի առջև՝ որ պա-
արաստեմ աւելի կեանքս տալ՝
քան թէ զքեզ վշտացնել. միայն
դու միշտ հետս եղիր ու առաջ-
նորդէ ուղիդ այն ճամբան՝ որ
առ քեզ կը հանէ: Աստուած
խմ, օգնեա ինձ:



ԱՂՕԹԻՔ

Խ Ո Ս Տ Ո Վ Ա Ն Ո Ի Թ Ե Ա Ն

Ե Ի

ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Պատրաստոքիչն խոստովա-
նոքեան.

Խոստովանանքէն առաջ զքեզ սըր-
տանց Աստուծոյ յանձնէ՝ որպէս զի
լոյս տայ մեղքերդ ճանչնալու և անոնց
ծանրութիւնն ըմբռնելու, և միան-
գամայն ցաւ մը և ատելութիւն ա-
նոնց դէմ և հաստատուն առաջա-
դրութիւն ալ ոչ ևս մեղանչելու. միջ-
նորդ բռնելով սուրբ Աստուածածի-
նը, Պահապան հրեշտակը և պաշտ-
պան սուրբերը:

Հայր մեր. Ողջոյն. Փառք Հօր.

Քննութիւն ընելու համար՝ նայէ
Աստուծոյ եւ Եկեղեցւոյ պատուի-
րաններն՝ որ ետեը դրուած են քրիս-
տոնէականին մէջ, մտածէ վիճակիդ
պարտքերը, ամբաստանէ զքեզ ինչ
որ մեղանչեր ես խորհրդով, բա-
նիւ, դործով եւ անհոգութեամբ,
ետքն ըսէ հետեւեալը:



Նախ քան զխաւտովանոչքիւն

Ո՛վ Աստուած իմ, անհուն բարի, ահա ոտքդ ինկած զքեզ մասնողն ու վշտացնողը, խոնարհաբար թողու թիւն կ'ուզէ: Մի՛ վերնաւեր զիս, Տէր, գիտեմ թէ խոնարհ սիրտ մը չես արհամարհեր. « Զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ »: Սղ. 50: Ենորհակալ եմ որ ուշացուցիր մահս ինչուան այսօր, ու չմեռուցիր զիս մեղացս մէջ ու դժոխք չխաւրեցիր, ինչպէս որ արժանի էի: Կը յուսամ, Աստուած իմ, որ ինչպէս դարձիս սպասեցիր,

այսպէս Յիսուսի արդեամբք թողու թիւն կու տաս այս խոնարհանութեամբ բոլոր ըրած մեղացս՝ որոնցմով արժանի եղայ դժոխոց ու կորսնցուցի արքայութիւնը, որոնց վրայ կը ցաւիմ ու կը զղջաս: Բայց դժոխոց արժանի ըլլալն այնչափ դառն չէ ինձ՝ որչափ զքեզ վշտացնելս, անբաւ բարիդ: Ես զքեզ կը սիրեմ, ո՛վ գերադոյն բարի. և որովհետեւ զքեզ կը սիրեմ, կը ցաւիմ քեզի դէմ գործած բոլոր նախատանացս վրայ: Ես քեզի կոնակ դարձուցի, զքեզ նախատեցի, բարեկամութիւնդ անարգեցի, եւ ուղեւորս զքեզ կորսնցուցի: Յիսուսի սիրոյն համար թողու թիւն աուր մեղացս, որոնց վրայ բոլոր սրտանց կը զղջամ, կը գարշիմ անոնցմէ ու կը զգուսիմ, ոչ միայն մահու չափներուն վրայ, այլ և ներե-

լինեցուն. որովհետև անոնք ալ
 անախորժ են քեզ: Ա՛տուաջա-
 դրեմ ասկէ ետքը շնորհքովդ
 մէյմ՝ ալ կամաւորապէս զքեզ
 չվշտացնել: Այո՛, Աստուած
 իմ, աւելի յանձն կ'առնում
 մեռնիլ քան թէ մեղանչել:

Թէ որ այնպիսի մեղք մը խոս-
 տովաներ ես՝ որուն մէջ աւելի կ'իյ-
 նաս, պէտք է մասնաւոր առաջա-
 դրութիւն դնել ալ ան մեղքին մէջ
 չիյնալու, առիթներէ զգուշանալով ու
 խոստովանա՛նք սորվեցուցած միջոց-
 ները ի գործ դնելով. նաև քու կող-
 մանէդ թէ որ ուրիշ միջոց կրնաս
 գտնել չմեղանչելու՝ նայէ որ զանց
 չընես:



Խոստովանութեան ետքը.



Իրեցեալդ իմ
 Յիսուս, ո՛ր-
 շափ պար-
 տական եմ
 քեզ: Քու
 արեանդ ար-
 դեամբք յու-
 սամ որ բո-

ւոր մեղացս թողութիւն ա-
 ռի: Մեծապէս շնորհակալ եմ
 քեզմէ. յուսամ թէ որ մ՛ալ
 երկինք կու գամ միշտ յաւի-
 տեան ինձ ըրած ողորմութիւն-
 ներդ օրհնելու: Աստուած իմ,
 թէ որ ինչուան հիմա շատ ան-
 գամ զքեզ կորուսի, ալ ասկէ
 ետքը կորսնցնել չեմ ուզեր:

Այս օրու ընէս իրաւց ընէ կ'ու-
 զեմ կեանքս փոխել: Արդարեւ
 բոլոր սիրոյս արժանի ես, ես
 ալ բոլոր սրտովս զքեզ կ'ուզեմ
 սիրել. ալ ասկէ ետքը չեմ ու-
 զեր զիս բաժնուած տեսնել. քեզ-
 մէ: Շատ անգամ այս խօսքս
 տուեր եմ քեզ, հիմա նորէն կը
 խոստանամ որ ասկէ վերջ ա-
 ւելի կ'ուզեմ մեռնիլ՝ քան թէ
 զքեզ վշտացնել: Ար խոստանամ
 նաև մեղաց առիթներէն ալ
 փախչիլ որ մեղաց մէջ չիջնամ:
 Բայց ո՛վ Յիսուս, գիտես դու
 իմ տկարութիւնս, տուր ինձ
 շնորհք որ ինչուան ի մահ հա-
 ւատարիմ մնամ քեզ: Ամենա-
 սուրբ կոյս Մարիամ, օգնեա
 ինձ, բոլոր յոյսս բու վրագ է:

Պատրաստութիւն հաղորդու-
 քեան.

Մեղքերէ ազատելու և Աստուծոյ
 սիրոյն մէջ առաջ երթալու համար՝
 Հաղորդութենէ յարմարագոյն միջոց
 չկայ: Բայց ինչո՞ւ անթիւ մարդիկ
 այնչափ հաղորդուելէն ետքը նոյն
 պակասութեանց մէջ կը մնան: Վասն
 զի ինչ պատրաստութիւն որ պէտք
 է չեն տեսներ: Լաւ պատրաստուելու
 համար երկու բան պէտք է. առա-
 ջինն է՝ հանել սրտէն այն փափաք-
 ներն որ Աստուծոյ սիրոյն դէմ են.
 երկրորդն է՝ մեծ փափաք ունենալ
 զԱստուած սիրելու: Ինչպէս սուրբ
 Փրանկիսկոս Սալեզացին կ'ըսէ, թէ
 Սրբութիւն առնելուն առաջին վախ-
 ճանը պիտի ըլլայ Աստուծոյ սիրոյն
 մէջ դարդանալ: Միայն զինքը սի-
 բելնուս պէտք է ընդունինք զինքը
 սրտերնիս, ինչպէս ինքն ալ միայն
 զձեզ սիրելուն զինքը մեզի կը
 պարզուէ.



ՀԱՂՈՐԴՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋ

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՏԱԻԱՏՈՅ



Վամենա-
սիրելի
Փրկիչ իս,
գուն որ-
պէս զի
այսամե-
նասուրբ

Հազորդութեամբ գաս միանաս
ընդ իս, քանի՛ քանի զժուարին

և խիստ լեռներէ պէտք եղաւ
որ անցնիս: Պէտք եղաւ որ աս-
տուածութենէդ իջնաս մարդ
ըլլաս, անբաւութենէդ՝ ծա-
ռայ, Հօր Աստուծոյ ծոցէն՝
կուսի մը ծոց, երկնքէն՝ ախոռի
մը մէջ, փառաց ակնունդ՝ նա-
խասանաց խաչի վրայ, և այսօր
երկնային ակնունդ պիտի գաս
իմ սիրտս քնակիս: Ո՛ր հասաւ
քու ողորմութիւնդ:

Ահա, անձն իմ, քու սիրելի
Յիսուսդ նոյն սիրով վառուած,
որով խաչին վրայ սիրեց զքեզ՝
քեզի համար մեռնելով, հիմա
ալ սրբութեան մէջ ծածկուած,
ի՛նչ կ'ընէ, սիրելւոյ մը պէս,
փոխարէն կ'ուզէ սիրուիլ. սրբ-
ութեան նշխարքին մէջէն կը
գիտէ զքեզ, որ այսօր իւր աս-
տուածային մարմինը պիտի ճա-
շակես, կը գիտէ թէ ի՛նչ կը
սիրես, ի՛նչ բանի կը փափաքիս,
ի՛նչ կը փնտռես, և ի՛նչ ընծա-
ներ կը տանիս իրեն:

Հայա, անձն իմ, պատրաստուէ ընդունել զՅիսուս. վառէ հաւասարդ ու ըսէ. Ուրեմն, Փրկիչ իմ սիրեցեալ, քանի մը վայրկեանէն իմ սիրտս պիտի դաս: Ո՛վ Աստուած անյայտ և ծածկեալ անթիւ մարդիկներէ, ես կը հաւատամ քեզ, զքեզ ներկայ կը դաւանիմ այս ամենակեցոյց Սրբութեան մէջ, իբրև իմ Տէրս և Փրկիչս՝ խորին խոնարհութեամբ քեզ երկիր պագանեմ. և այս ճշմարտութեանս վրայ կեանքս ալ կուտամ: Ե՛կ ուրեմն հարստացուր զիս շնորհքներովդ, և բոլորովին ընդ քեզ միացուր: Ի՛նչ վստահութիւն պէտք է ունենամ առ քեզ, ասանկ սիրով սիրտս գալուդ:

ՆԵՐԴՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒՍՈՅ

Անձն իմ, բայ սիրտդ. Յիսուս ամէն բարեք կրնայ ընել քեզ՝ որ զքեզ շատ կը սիրէ. ամէն բան կրնաս յուսալ այս սիրովդ, որ ՚ի սիրոյ շարժեալ ու բոլորովին սէր կարած առ քեզ կու գայ: Այո՛, սիրելիդ իմ Յիսուս, յոյս իմ, բու գթութեանդ կ'ապաւինիմ, կը յուսամ որ այս առաւօտ կը վառես իմ աղքատ սիրտս քու սուրբ սիրոյդ ջերմ բույով, կու տաս ինձ ճշմարիտ փափաք՝ քեզ հաճոյ ըլլալու, որպէս զի այս օրէն սկսեալ ուրիշ բան չուզեմ, բայց եթէ ինչ որ դու կ'ուզես:

ՆԵՐԴՈՐԾՈՒԹԻՒՆ ՍԻՐՈՅ

Ո՛վ Աստուած, Աստուած իմ, միակ և ճշմարիտ սիրող հոգւոյս, միայն ճշմարիտ բարութիւն,

ալ ինչ կրնայիր ընել ինձ սիրելի
 ըլլալու համար: Ո՛վ Տէր իմ
 ինձի համար մեռնելը միայն
 բաւական չի սեպելով, սուրբ
 Հաղորդութեան խորհուրդն ալ
 հաստատեցիր՝ որպէս զի ինձի
 պէս անմաքուր եւ ապերախ
 արարածոյ մը տաս բոլորովին
 զքեզ եւ մէկ սիրտ ըլլաս ինձի
 հետ: Ասկէ զատ, կը հրաւիրեմ
 զիս զքեզ ընդունելու, եւ
 կը փափաքիս ալ որ ընդունիմ:
 Ո՛վ սէր անհուն, սէր անըմբռնելի,
 սէր յաւիտենական: Աստուած
 բոլորովին ինքզինքն ինձ
 կ'ուզէ տալ:

Անձն իմ, որ կը հաւատաս
 ասոր, ինչ կ'ըսես: Ո՛վ Տէր անհուն
 սիրելի, դու միայն արժանի ես
 ամենայն սիրոյ, ամեն սրտովս
 զքեզ կը սիրեմ, ամեն բանէ
 վեր զքեզ կը սիրեմ, ինձմէ
 ալ՝ կեանքէս ալ աւելի զքեզ
 կը սիրեմ: Երանի՛ թէ տեսնէի

որ ամենքն ալ զքեզ կը սիրեն:
 Երանի՛ թէ ամեն սրտերու կարենայի
 սիրցնել տալ զքեզ, որչափ
 որ արժանի ես: Ես զքեզ
 կը սիրեմ, ո՛վ Աստուած իմ
 սիրեցեալ, եւ զքեզ սիրելու
 համար՝ իմ խեղճ սիրտս սերով
 բէից եւ բու սրտիդ հետ
 միացուցած, ո՛վ Յիսուս, անով
 խոնարհաբար քեզ երկիր պապանեմ:
 Զքեզ կը սիրեմ, ո՛վ անհուն
 բարի, այն սիրով՝ որով բոլոր
 երկնից հրեշտակք զքեզ կը
 սիրեն, որով կը սիրէ զքեզ
 քաղցր մայրդ Մարիամ. այն սիրով՝
 որով դու ինքն Յիսուս զքեզ
 կը սիրես, եւ զքեզ միայն կը
 սիրեմ, որովհետեւ արժանի ես:
 Ելէ՛ք սրտէս ամենայն երկրաւոր
 իղձք եւ ցանկութիւնք, որ Աստուծոյ
 համար չէք: Սըրբուհի Մարիամ
 մայր սիրոյ, դու օգնէ ինձի որ
 սիրեմ զԱստուած՝ զոր դու
 այնչափ կը

սիրես և կը փափաքիս ուրիշ-
ներէն ալ սիրուած տեսնել:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՈՆԱՐՅՈՒԹԵԱՆ

Ուրեմն, անձն իմ, կ'երթաս
ահա Յիսուսի ամենասուրբ
մարմինը ճաշակելու: Արժանի
ես: Տէր իս, ո՞վ եմ ես, և դու
ո՞վ: Ես լաւ կը ճանչնամ ու
կը դաւանիմ ով ըլլալդ, որ
ինքզինքդ ինձ կը պարգեւես.
դու ալ լաւ գիտես զիս, որ
զքեզ ընդունելու կու գամ:

Ի՞նչպէս կարելի է ուրեմն,
ո՞վ Փրկիչ իմ, որ դու անհուն
մաքրութիւն ըլլալովդ, փափա-
քիս իմ սիրտս դալ բնակիլ, որ
չատ անգամ քու թշնամիդ ըն-
դուներ և բիւրաւոր մեղքերով
աղակեր է: Ար ճանչնամ, Տէր,
քու անբաւ մեծութիւնդ եւ
իմ խեղճութիւնս, ու կ'ամչնամ

իսկ առջեզ երեւելու: Պատկա-
ռելէս մէկդի երթալս կու գայ
քեզմէ. բայց թէ որ քեզմէ
հեռանամ, կեանք իմ, ո՞ւր եր-
թաս, որո՞ւ գիտեմ, ի՞նչ կ'ըլ-
լայ ինձ: Ա՛չ, ո՛չ երբէք հեռա-
նալ կ'ուզեմ քեզմէ, մանաւանդ
թէ միշտ աւելի մօտենալ: Գու
դո՛հ կ'ըլլաս որ զքեզ ճաշակեմ,
մանաւանդ թէ դու զիս կը
հրաւիրես: Կու գամ ուրեմն,
Փրկիչ իմ սիրեցեալ, կու գամ
այս առաւօտ զքեզ ընդունելու
խոնարհեալ, ցաւած և տագնա-
պեալ՝ ըրած մեղացս համար,
բայց լի յուսով՝ վրաս ունեցած
գթոյդ և սիրոյդ համար:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂԶՄԱՆ

Արչափ կը ցաւիմ, ո՞վ Տէր
հոգւոյ իմոյ, որ անցեալ կե-
նացս մէջ զքեզ հեմ սիրած. և
փոխանակ զքեզ սիրելու, իմ

փափաքներս լեցնելու համար՝
 քու անբաւ ողորմութեանդ
 դէմ անիրաւեր եմ, շատ ան-
 դամ զքեզ դառնացուցեր եմ,
 քեզմէ երես դարձուցեր, քու
 շնորհքդ եւ բարեկամութիւնդ
 արհամարհեր եմ. վերջապէս,
 ո՛վ Տէր, ես խեղճ ողորմելիս
 զքեզ ոչնչութեան հետ փոխեր
 եմ: Ար ցաւիմ, կը զղջամ, Տէր.
 յամենայն սրտէ: Ամեն գեշու-
 թեանէ աւելի քեզի դէմ ըրած
 անիրաւութիւններս կ'ատեմ,
 թէ՛ ծանր եւ թէ՛ թեթեւ. որով-
 հետեւ անոնցմով զքեզ ամե-
 նաբարիզ վշտացուցեր եմ: Ար
 յուսամ որ արդէն իսկ թողու-
 թիւն տուած ես ինձ, բայց թէ
 որ դեռ չես ներած, հիմա նե-
 րէ, ո՛վ Յիսուս, քանի որ դեռ
 զքեզ չեմ ընդունած. անգին
 արեամբդ լուա հոգիս, ուր որ
 քիչ տատենէն դաւ բնակիլ կ'ու-
 ղես:

Ի Ղ, Զ

Հա՛պա, անձն իմ, հասեր է
 այն երջանիկ վայրկեանն, որ
 Յիսուս դայ ու աղքատ սրտիդ
 մէջ բնակի: Ահա երկնից թա-
 դաւորն, ահա Փրկիչդ ու Աս-
 տուած առ քեզ կու գայ: Պա-
 տաստուէ սիրով զինքն ընդու-
 նելու. փափաքով մը զուրցէ ի-
 րեն. Եկ, Յիսուս իմ, եկ ի հո-
 գի իմ որ քեզ կը փափաքի: Դեռ
 դու զքեզ ինձ ի չի սրբաբեւոյժ,
 ես կ'ուզեմ ու կ'ընծայեմ քեզ
 իմ ողորմելի սիրտս, ընդունէ
 ու փութա եկուր ժառանգէ
 զայն:

Եկուր շուտով, Աստուած իս,
 ա՛յ մի ուշանար, միակ եւ ան-
 վախճան արքայութիւն իմ եւ
 ամենայն ինչ, այն սիրով զքեզ
 ընդունիլ կը փափաքիմ, որով
 ընդուներ են զքեզ ամենասուրբ

հոգիներն ու զքեզ շատ սիրող-
ներն, որով ընդունեիք է զքեզ
սուրբ Աստուածածին: Իրենց
հետ ես ալ հաղորդակից կ'ըլ-
լամ:

Ամենասուրբ Աոյս և մայր իմ
Մարիամ, ահա կը մերձեանամ
քու որդիդ ընդունելու. քու
սիրտդ և սէրդ ունենալ կ'ու-
զէի, որով դու կը հաղորդէիր.
սուր ինձ այս առաւօտ Յի-
սուսդ, ինչպէս որ հովիւներուն
և սուրբ մոգերուն սուիր: Քու
ամենամաքուր ձեռքէդ կը ըս-
տասեմ զինքն ընդունիլ: Ըսէ
իրեն, որ ես քու ծառայդ եմ
և քեզի ջերմեանդ, որով ա-
ւելի քաղցր աչքով նայի վրաս
և աւելի սիրով ընդգրկէ:

ԳՈՏՈՒԹԻՒՆ

Հաղորդուելէն ետքը.

Հաղորդուելէն ետքի ատենը շնոր-
հաց գանձեր վաստըկելու անգին ա-
տեն է. որովհետև այն ատենուան ե-
ղած աղօթքներն, հոգին Յիսուսի
հետ միացեալ ըլլալով, ուրիշ ատե-
նի եղածներէն աւելի արժանաւո-
րութիւն և զօրութիւն ունին: Այն
ատեն Աստուած հոգւոյն մէջ, իբրև
ողորմութեան գահոյից վրայ բազ-
մեալ է և կ'ըսէ. Որչեակ, ուզէ
ինձմէ ինչ որ կ'ուզես. անոր համար
ես քու սիրտդ եկեր եմ, որ քեզի
բարիք ընեմ: Ո՛հ ինչ առանձնաշնոր-
հութիւններ շին ընդունիր անոնք,
որ հաղորդուելէն ետե երկայն բա-
րակ Յիսուսի հետ կը խօսակցին:
Հայրն Աւելի հաղորդուելէն ետե
միշտ երկու ժա. աղօթքով կ'անցնէր:
Ս. Լուիճի կոնձակա երեք օր շնոր-
հակալութեամբ կ'անցնէր: Ետեւի

ներգործութիւններն ընէ սերիմն հա-
ղորդութեան, և ջանայ բոլոր օրը ըղ-
ձով և աղօթքով միացեալ ըլլալ Յի-
սուսի հետ, զոր առաւօտն ընդու-
նեցաւ:



ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

ՀԱՂՈՐԴՈՒԵԼԷՆ ԵՏԵԻ



ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՀԱԽԱՏՈՅ

Ահա Աստուածս ինձի այցե-
լութեան եկաւ, ահա Փրկիչս
եկաւ սիրտս բնակեցաւ, ահա
ի նեքքս յիս է Յիսուս: Եկեր
է ընդ իս միանալու, անանկ
որ Յիսուս իմս է և ես իրեն:
Ո՛վ անհուն բարի, անհուն
ողորմութիւն, անհուն սէր: Աս-
տուած եկեր է ինձ հետ միա-
նալու եւ ինքզինքը բոլորովին

ինձ տալու: Անձն իմ, հիմա
 որ ասանկ միացեր ես Յիսու-
 սի հետ, ի՞նչ կ'ընես, բան մը
 չե՞ս ըսեր: Չե՞ս խօսիր Աս-
 տուծոյդ հետ, որ քեզի հետ
 է: Հայտա նորոգէ հաւատքդ,
 մտածէ որ հրեշտակք չորս կողմդ
 երկրպագութիւն կ'ընեն իրենց
 Աստուծոյն, որ քու սիրտդ է:
 Մէկդի ըրէ ամեն մտածմունք,
 և բոլոր ըղձովդ ու սրտով
 Աստուծոյ հետ միացեալ, ըսէ
 առ նա:

ՆԵՐԴՈՐԾՈՒԹԻՒՆ ԸՆԴՈՒՆՆԵ-
 ԼՈՒԹԵԱՆ

Ո՛վ Յիսուս, սէր իմ, անհուն
 բարիս եւ ամենայն ինչ, ող-
 ջամբ եկար իմ աղքատ սիրտս:
 Ո՛վ Տէր իս, ինչուան ո՞ւր հա-
 սար: Իմ սիրտս եկար՝ որ
 ծնած մարէդ աւելի գէշ է,

կըքերով, անձնասիրութեամբ
 և անկարգ ախորժակներով լե-
 ցուն: Ի՞նչպէս եկար ուրեմն
 յիս բնակելու: Կ'ուզեմ սրբոյն
 Պետրոսի հետ ըսել. Ի բաց
 գնա յինէն, զի այր մեղաւոր
 եմ ես: Հեռացիր ինձմէ, Տէր,
 որ անարժան եմ զԱստուած
 զանհուն բարիդ յիս ընդու-
 նելու: Այն մաքուր սրտերուն
 մէջ գնա բնակէ, որ ամենայն
 սրտանց քեզ կը ծառայեն: Բայց
 չէ՛, Փրկիչ իմ, ի՞նչ կ'ըսեմ,
 մի հեռանար ինձմէ, վասն զի
 թէ որ հեռանալու ըլլաս՝ ես
 կորսուած եմ, կը գրկեմ զքեզ,
 կեանք իմ, քեզ կը պլլուիմ:
 Ի՞նչ խենթութիւն ու ապե-
 րախաութիւն էր ըրածս, որ
 քեզմէ բաժնուեցայ զքեզ վաճա-
 րեցի զարարածս սիրելու հա-
 մար: Ա՛լ չեմ ուզեր քեզմէ բաժ-
 նուիլ, գանձդ իմ, կ'ուզեմ ընդ
 քեզ միացեալ միշտ ապրիլ ու
 մեռնիլ:

Սուրբ Աստուածածին, սերով-
բէք և ամենայն հոգիք՝ որ
սուրբ սիրով զԱստուած կը սի-
րէք, ապաւորեցէք յիս ձեր
խղձերը, որպէս զի ես ալ միշտ
աղէկ ըլլամ սիրելի տիրոջս
հետ:

ՆՆՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԳՈՏՈՒԹԵԱՆ

Ամենաբարի Տէր իմ, շնոր-
հակալ եմ այս առաւօտ ինձ
ըրած շնորհքիդ՝ որ եկար ու
սիրաս բնակեցար. բայց այս
ըրած մեծ շնորհքիդ համար,
քեզ արժանի շնորհակալութիւն
կ'ուզէի մատուցանել. այլ, ո՛վ
Տէր, ի՞նչ արժանի շնորհակա-
լութիւն կրնամ մատուցանել
խեղճ ողորմելիս:

Կ'ըսէ Հայրն Սէնտէրի. Հա-
ղորդուողին պատշաճագոյն խղձն
է վախը՝ երբ կը մտածէ ու
կ'ըսէ. Աստուած առ իս է.

Աստուած բովս: Կ'ըսէր Դաւիթ.
Ձի՞նչ տաց արխաուր Տեառն
ընդ ամենայնի զոր և ետ ինձ:
Բայց ես ի՞նչ տամ քեզ, Յի-
սուս իմ, որ յետ այնչափ բա-
րիքներդ ինձ պարգեւեւելու, այս
առաւօտ ինքզինքդ ալ պար-
գեւեցիր: Օրհնէ ապա, անձն
իմ, ու գոհացիր որչափ որ
կրնաս Աստուծմէդ: Եւ դու
մայր իմ Մարիամ, պաշտպան
սուրբերս, Հրեշտակդ իմ պա-
հապան, ամենայն հոգիք՝ որ
Աստուծոյ սիրովն էք բորբո-
քեալ, եկէք, մտիկ ըրէք ինչ
որ ըրաւ ինձ Աստուածս:

Եկէք օրհնեցէք ու գոհացէք
Աստուծմէս՝ ինձ ըրած ամե-
նամեծ շնորհաց համար, եւ ըս-
բանչացած փառաւորեցէք զինքը:

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԸՆԾԱՅՄԱՆ

Սիրելիև

իմ ինձ եւ ես նմա.

Եթէ թագաւոր մը խեղճ հովուի մը հիւղներթայ անոր այցելու, ինչ կրնայ հովիւն ընծայել անոր բայց եթէ բոլոր բովանդակ իւր հօտը Աստուծոյ, ո՛վ երկնաւոր թագաւորդ իմ Յիսուս, որովհետեւ հոգւոյս խեղճ տանն այցելուութեան եկար, քեզ կ'ընծայեմ ու կը պարգեւեմ հոգւոյս տունն ու զիս բոլոր բովանդակ, հանդերձ ազատութեամբս ու կամօքս: Սիրելին իմ ինձ և ես նմա: Գու զքեզ բովանդակ ինձ տուիր, ես ալ զիս բովանդակ քեզ կու տամ: Չեմ ուզեր Վրկիչ իմ, ալ ես իմս ըլլալ. այս օրէս բուկդ կ'ուզեմ ըլլալ և բովանդակ քուկդ: Եւ

ինչ աւելի ախորժ կրնայ ըլլալ, կ'ըսէր Ս. Պետրոս Ալկանդարացին, քան ախորժելի ըլլալ քեզ՝ Աստուած իմ ամենասիրելի, փափաքելի և ամենաբարի: Բոլոր կարողութիւններս քեզ կը պարգեւեմ, եւ կ'ուզեմ որ ամենքն ալ բուկդ ըլլան, կ'ուզեմ որ յիշողութիւնս ուրիշ բանի չծառայէ, բայց եթէ բարեբարութիւններդ և սէրդ յիշելու: Միայն ուրիշ բանի չծառայէ, բայց քեզ միայն մտածելու, որ միշտ իմ բարիքս կը մտածես: Եւ կամքս զքեզ սիրելու ծառայէ միայն, Աստուած իմ, ամենայն ինչ իմ և այն ուզէ միայն՝ զոր դու կ'ուզես:

Քեզ կը նուիրեմ ուրեմն և քեզ կը պատարագեմ, ո՛վ ամենաբարձր Փրկիչ իմ, այս առաւօտ ինչ որ ունիմ, եւ ինչ որ եմ, զգացմունքներս, մտա-

ծուլթիւններս, իղձերս, փա-
փաքներս, ախորժներս, հակամի-
տուլթիւններս, ազատուլթիւնս,
վերջապէս քու ձեռքդ կ'աւան-
դեմ բոլոր մարմինս ու հոգիս:

Ընդունէ՛, ս'վ անհուն Տէր,
այն զոհն՝ որ քեզի կը մատու-
ցանէ աշխարհիս վրայ եղած
ամենէն ապերախտ մեղաւորն,
բայց հիմա բովանդակ զինքը
քեզ կ'ընծայէ ու կը նուիրէ:
Ի՞նչ որ կ'ուզես ըրէ ինձ, ս'վ
Տէր, ու կարգաւորէ վրաս
ի՞նչպէս որ կ'ուզես:

Մ'կ, ս'վ հուր ծախիչ, ս'վ սեր-
երկնային, և այրէ յիս ինչ որ
իմս է և քու ամենամաքուր
աչքերուդ անախորժ է, որպէս
զի այս օրէս սկսեալ ես միշտ
քուկդ ըլլամ, և ապրիմ միայն
կատարելու համար, ոչ միայն
պատուէրներդ, այլ և փափաք-
ներդ և ինչ որ քեզ ախորժելի
է. Ամէն:

Ով ամենասրբուհի Մարիամ,
մատո՛ ձեռքերովդ առ ամենա-
սուրբ Երրորդուլթիւնն այս իմ
նուէրս, և ընդունելի ըրէ՛, եւ
մինչև ի մահ հաւատարիմ մնա-
լու շնորհքը պարգևէ ինձ. Ա-
մէն:

ՆՆՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԽՆԴՐՈՒՄՄՍՑ

Անձն իմ, արդ կրնաս ընդու-
նիլ ամենայն շնորհք զոր կը
խնդրես: Չէս տեսներ երկնա-
ւոր Հայրդ որ քաղցրահայեաց
քեզ կը նայի, քու առ նա սէրդ
տեսնելով: Հեռացո՛ բոլոր ու-
րիշ մտածուլթիւնքդ, վառէ հա-
ւատքդ, ընդարձակէ սիրտդ, և
խնդրէ ի՞նչ որ կ'ուզես:

Չէս լսեր Յիսուսիդ որ կ'ըսէ.
Ձի՞նչ կամիս զի արարից քեզ:
Հոգի՛, ըսէ ի՞նչ կ'ուզես ինձմէ:
Ձքեզ հարստացնելու և գոհ ը-
նելու համար միայն եկեր եմ.

խնդրէ համարձակ, և ինչ որ
կ'ուզես կ'ընդունիս:

Ո՛վ ամենաքաղցր Փրկիչ իմ,
որովհետև եկար յիս՝ ինձ շը-
նորհք պարգեւելու համար, եւ
կը փափաքիս որ ես քեզմէ խըն-
դրեմ. ես երկրաւոր բարիք չեմ
փնտուեր, ոչ հարստութիւն, ոչ
պատիւ, ոչ զուարճութիւն,
տուր ինձ, կ'աղաչեմ, մեծ ցաւ
մը՝ զքեզ այնչափ վշտացնելուս:
Մեծ լոյս մը պարգեւէ, որ ճանչ-
ցընէ ինձ աշխարհիս ունայնու-
թիւնը, և քու սիրելի ըլլալուդ
արժանաւորութիւնը: Փոխէ
սիրաս, և զատէ ամեն երկրա-
ւոր իղձերէ, և քու կամայց
բոլորովին նման սիրտ մը տուր
ինձ, որ ուրիշ բան չփնտուեմ
բայց զքեզ հաճեցնել. ուրիշ
բանի չփափաքիմ, բայց եթէ
քու սուրբ սիրոյդ:

Թէպէտ ես արժանի չեմ այս
բանիս, ո՛վ Յիսուս իմ, բայց

դու արժանի ես, որովհետև
սիրաս օթեւանելու եկեր ես,
կը խնդրեմ զասոնք քեզմէ քու
և ամենասուրբ սորդ արդեանց
և առ երկնաւոր Հայրդ ունե-
ցած սիրոյդ համար:

Հոս քիչ մը կեցիր մասնաւոր խըն-
դիրքներդ ընելու Յիսուսէն՝ թէ քեզի
և թէ ընկերացդ համար, շնորհաս
նաև մեղաւորներն ու քաւարանի հո-
գիները և այս զրբոյկս շինողը:

Հայր երկնաւոր, Յիսուս Քրիս-
տոս միածին որդիդ խոստացաւ
մեզ, թէ ինչ որ իւր անուամբ
խնդրենք քեզմէ կը պարգեւես:
«Ամէն ամէն ասեմ, զի եթէ
խնդրեցէք ինչ ի Հօրէ յանուն
իմ, տացէ ձեզ»: Այս ուրեմն
որդւոյդ սիրոյդ համար՝ որ
սիրաս ընդուներ եմ, լսէ ինձ
և տուր խնդրուածքներս:

Ա Ղ Օ Թ Ք

Առաջի խաչելոռքեան.

Լիակատար ներողութիւն ունի ով
որ խաչելութեան պատկերի մ'առ-
ջև զղջացեալ սրտով Հաղորդութենէ
ետքը զուրցէ:

Ահաւասիկ, ո՛վ սիրելի իմ
բարի Յիսուս, ես քու ամենա-
սուրբ ներկայութանդ առջեւ
իյնալով, մեծաւ շերմեռանդու-
թեամբ կը խնդրեմ՝ որ սրտիս
մէջ տպաւորես հաւատքս յոյս,
սէր, ու ցաւ՝ իմ մեղացս հա-
մար, և առաջադրութիւն որ
ասկէ ետքը ոչ երբէք քեզի
դէմ մեղանչեմ: Արովհետև ես
ամեն սիրով ու սաստիկ ցա-
ւակցելով, մտածելու հետ կ'ըլ-
լամ քու հինգ վերքերդ, սկսե-
լով անկէ, որ կ'ըսէ քեզի հա-

մար, ո՛վ Յիսուս, սուրբ մար-
գարէն Գաւիթ. «Ծակեցին ըզ-
ձեռս իմ և զոտս իմ, [Թուեցին
զամենայն ոսկերս իմ]»:

Հայր մեր. Աղջոյն քեզ Փառք հօր
մը զուրցէ եկեղեցւոյ պիտոյից համար:





ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Առ ամենասուշրբ Հաղորդութիւնն .



Ա. Ղ. ՕԹ. Բ.

Տէր իմ Յիսուս Քրիստոս ,
մարդկանց վրայ ունեցած մեծ
սիրոյդ համարս գիշեր , ցորեկ
այս սուրբ Հաղորդութեան մէջն
ես լի գթով և սիրով , ու կը
սպասես , կը կանչես և կ'ընդու-
նիս զանոնք՝ որ քեզ այցելու-
թեան կու գան , կը հաւատամ
որ ներկայ ես խորանին վրայի

Հաղորդութեան մէջ , ես որ
բոլորովին ոչնչութիւն եմ , քեզ
երկիր պագանեմ , և շնորհակալ
կ'ըլլամ այնչափ ըրած բարեացդ
մասնաւորապէս այս Հաղորդու-
թեամբ զքեզ ինձ պարգևելուդ ,
Աստուածածին մայրդ ինձ փաս-
տաբան տալուդ , և զիս այս ե-
կեղեցին քեզ այցելութեան կան-
չելուդ : Կ'ողջունեմ այսօր քու
ամենասիրելի սիրտդ , երեք վախ-
ճանաւ : Մէյմը՝ ի շնորհակալու-
թիւն այս մեծ շնորհաց . եր-
կրորդ՝ ի փոխարէն այն ամէն
անարգանաց , որ սուրբ Հաղոր-
դութեան պատճառաւ ընդու-
ներ ես անհաւատներէ , հեր-
ձուածողներէ և գեշ քրիստո-
նեաներէ , և երրորդ՝ կ'ուզեմ
այս այցելութեամբս երկրպա-
գել քեզ աշխարհիս ամէն կողմն ,
ուր որ քիչ պատիւ կու տան
Սրբութեան և առանց այցելու-
թեան կը ձգեն : Յիսուս իմ ,

ամեն սրտովս զքեզ կը սիրեմս
կը ցաւիմ որ անցեալ կենացս
մէջ շատ անգամ քու անհուն
բարութեանդ գէմ գործեր եմ.
կը խոստանամ շնորհքովդ ալ
ասկէ վերջ զքեզ չվշտացնել, և
հիմա խեղճութեամբս հանդերձ
զիս բոլորովին քեզ կը մատու-
ցանեմ, քեզ կը պարգևեմ և կը
հրաժարիմ բովանդակ կամքէս,
խղճերէս, փափաքներէս և ամեն
բաներէս: Այս օրէս՝ զիս ալ,
ունեցածներս ալ ի՛նչ որ կ'ու-
ղես ըրէ: Զքեզ միայն կը փնտ-
ռեմ, քու սուրբ սէրդ, յետին
յարաատելութիւն, և կամացդ
անթերի կատարումն միայն կ'ու-
ղեմ: Քեզ կը յանձնեմ քաւա-
րանի հոգիքը և մասնաւորապէս
ամենասուրբ Հաղորդութեան և
սուրբ Աստուածածնայ ջերմե-
ռանգները: Քեզ կը յանձնեմ
բոլոր խեղճ մեղաւորները: Եւ
ի վերջէ, Փրկիչ իմ սիրելի,

բոլոր խղճերս քու ամենասիրով
լցեալ սրտիդ ըղձից հետ միաց-
նելով՝ կ'ընծայեմ քու յաւիտե-
նական Հօրդ, և քու անուամբդ
կը խնդրեմ, որ քու սիրոյդ
համար ընդունի և հաճի ընդ
նոսա:

Հոս ետեի դրած հոգևորական Հա-
ղորդութեան ներգործութիւնը ըրէ:



ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ

Շատ օգտակար է ո՛վ որ հաւատով,
խոնարհութեամբ ու սիրով ստէպ
կ'ընէ:

Ար հաւատամ քեզ, Փրկիչ իմ,
ամենասուրբ Հաղորդութեան
մէջ, կը սիրեմ զքեզ և կը ցան-
կամ ընդունել զքեզ խեղճ սրբ-
տիս մէջ: Եկ զղջացեալ ու խո-
նարհ սրտիս մէջ: . . . Իբրև ար-
դէն իսկ եկած, քեզ կը պըւը-
ւիմ և զիս բոլորանուէր քեզ
կը մատուցանեմ, ա՛նք ինձ քու
սէրդ եւ յարատեւութիւն եւ
ինձմէ մի՛ բաժնուիր: Զիս ալ
մի՛ թողուր որ բաժնուիմ քեզմէ:

Ն Ո Ւ Է Ր

Սրտիկ Յիսուսի պատկերի մը

առջև ընկնու.

Ես Ա. Ա. քեզի երախտագէտ
ըլլալու և առաջին անհաւա-
տարմութիւններս քաւելու հա-
մար, քեզ կը մատուցանեմ
սիրտս, և զիս բովանդակ քեզ
կը նուիրեմ, Յիսուսգ իմ ամենա-
սիրելի, և քու շնորհքովդ կ'ա-
ռաջագրեմ ա՛լ չմեղանչել:

Ներողութիւն մէկ անգամ ըսողին,
և լիակատար՝ ամիս մը ըսողին,
խոստովանելով և հաղորդուելով:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԱՂՕԹՔ

(Այս աղօթքները իւրաքանչիւր օր ըսողին 500 օրուան ներողութիւն՝ իսկ ամիս մը ըսողին լիակատար ներողութիւն) :

ԿԻԻՐ ԱԿԻ

Աղօթք առ սուրբ Աստուածածին
մեղաց քողոքիչն գտնելոյն
համար.

Ահաւասիկ, մայր Աստուծոյ,
մէկ խեղճ մեղաւոր մ'առքդ ին-
կած՝ առ քեզ կը դիմէ առ քեզ
կ'ապաւինի. ես չեմ արժանի

որ լքաս նայիս, բայց գիտեմ
որ դու տեսնելով որդիդ որ
մեռաւ զմեղաւորս փրկելու հա-
մար՝ շատ կ'ուզես օգնել ա-
նոնց: Ա՛վ մայր ողորմութեան,
նայէ մէյմը իմ խեղճութեանս
վրայ, ողորմէ ինձ: Ես կը լսեմ
որ ամենն ալ քեզի համար կ'ը-
սեն Ապաստան մեղաւորաց և
Յոյս յուսահատելոց և Օգնական
անկելոց, եթէ անանկ է՝ դու ես
իմ ապաստանս, իմ յոյսս, իմ
օգնութիւնս, սէտք է որ դու
քու բարեխօսութեամբդ զիս
փրկես, հասիր ինձ Յիսուսի սի-
րոյն համար, առը ձեռքդ մէկ
խեղճ ընկածի մը, որ քեզ է
յանձնուած: Եւ գիտեմ որ քեզ
մխիթարութիւն է մեղաւորի
մ'օգնել երբոր կրնաս, եթէ
անանկ է հիմա որ կրնաս՝ օգնէ
ինձ, ես իմ մեղօքս կորսընցու-
ցի աստուածային շնորհքը ու
իմ հոգիս, հիմա ես զիս քու

ձեռքդ կը յանձնեմ. ըսէ ինչ
 ընեմ որ նորէն Աստուծոյ շնոր-
 հաց մէջ ըլլամ, շուտ մը կ'ու-
 զեմ այն բանն ընել: Տէրն իմ
 զիս քեզ կը խրկէ որ ինձ օգ-
 նութեան հասնիս. կ'ուզէ որ
 ես քու գթութեանդ ապաւի-
 նիս. որպէս զի չէ թէ միայն
 քու որդւոյդ արդիւնքն՝ այլ
 նաև քու բարեխօսութիւնդ իմ
 փրկութեանս օգնական ըլլայ:
 Անանկ է նէ ես առ քեզ կը դի-
 մեմ. դու ինձի համար աղաչէ
 Յիսուսի. ճանչցուր այն բարիքն
 որ առ քեզ ապաւինողաց կ'ը-
 նես: Ասանկ կը յուսամ, ա-
 սանկ ըլլայ:

Երեք Ողջոյն քեզ Մարիամ ըսէ
 այն հայհոյանքներուն տեղ որ իրեն
 դէմ կ'ընեն:

ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

Աղօթք առ արեւաստորք Կոյսև
 զստորք յարատեռնաքիշև ըն-
 դռնէշոռ հարևար.

Ո՛վ երկնաւոր թագուհի, ես
 որ տանն մը գերի եղած էի
 սատանայի, հիմա քեզ ծառայ
 կ'ըլլամ մշանչեհաւոր, կը նուր-
 րեմ զիս քեզ սրատուելու, քեզ
 ծառայելու բոլոր կենացս մէջ.
 Ընդունէ զիս ու մի՛ մերժեր,
 ինչպէս որ արժանի եմ: Ո՛վ
 մայր իս, բոլոր յոյսս քու վրադ
 եմ դրած: Կ'օրհնեմ շնորհակալ
 կ'ըլլամ Աստուծոյ՝ որ իրեն
 ողորմութեամբ կը շնորհէ ինձ
 առ քեզ ապաւինիլ: Իրաւ է որ
 անցած ատենները մեղաց մէջ
 ընկայ չարաչար, բայց կը յու-
 սամ որ անոնց թողութիւնն

առի Յիսուսի Քրիստոսի ար-
 դեամբ ու քու բարեխօսու-
 թեամբդ, բայց այս հերիք չէ,
 մայր սուրբ, մէկ մամտութեք մը
 զիս կը տանջէ, երբ կը մտա-
 ծեմ որ՝ կրնամ նորէն իյնալ,
 աստուածային շնորհքը կորսըն-
 ցընել. վաանգները չեն սրահսիր,
 թշնամիք չեն քնանար, նոր նոր
 փորձութիւնք վրաս կ'ելլան:
 Ա՛յ տիրուհի, դու ապա սաշտ-
 պանէ զիս, դժոխային յարձակ-
 մանց դէմ օգնէ ինձ. մի՛ թո-
 դուր որ նորէն կորսնցնեմ հո-
 գիս, արքայութիւնն ու զԱս-
 տուած: Այս շնորհքս քեզմէ կը
 խնդրեմ, ո՛վ սուրբ կոյս Մա-
 ըիամ, այս կ'աղաչեմ, ասոր
 համար դու բարեխօս եղիր ինչ-
 պէս որ կը յուսամ. Ամէն:

Երեք Ողջոյն քեզ ըսէ, ինչպէս որ
 վերն ըսինք:

ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

Աղօթք առ արեւաստորք կոյսն
 Մարիամ, քարի մահ ոշնեւաշոռ
 համար.

Ա՛յ ամենասուրբ կոյս Մա-
 ըիամ, ի՞նչ պիտի ըլլայ իմ մահս.
 Ես միտքս բերելով իմ մեղքերս,
 միտքս բերելով մեռնելու վայր-
 կեանս եւ իմ յաւիտենական
 փրկութիւնս կամ գատապար-
 տութիւնս կը դողամ կը սար-
 սափիմ. իմ յոյսս դրեր եմ
 միայն Յիսուսի արեան և քու
 բարեխօսութեանդ վրայ, ո՛վ
 մայր քաղցրագութ, մխիթարիչ
 վշտացելոց, զիս երեսէ մի՛ ձգեր
 այն ատեն. մի՛ թողուր զիս ա-
 ւանց մխիթարելու այն սոսկա-
 լի նեղութեանս ատեն: Թէ որ
 հիմա ասանկ կը տանջէ զիս

խղճմտանքս, միտքս բերելով
 ըրած մեղքերս, որոց համար
 թողու թիւն գտե՛ր եմ արդեօք
 չեմ գիտեր, նորէն իյնալու
 վտանգն, աստուածային արդա-
 րութեան խստութիւնն, ի՞նչ
 պիտի ըլլայ ինձ այն ատեն: Ո՛վ
 տիրուհի, մահս վրայ չհասած
 տուր ինձ շնորհք սաստիկ ցա-
 ւելու գործած մեղացս համար:
 զիս իրաւցնէ շտկելու, մնացած
 կենացս մէջ հաւատարիմ մնա-
 լու Աստուծոյ: Իսկ երբ մեռ-
 նելուս ատենն հասնի, ո՛վ յոյսդ
 իմ սրբուհի Մարիամ, օգնական
 եղիր ինձ այն սաստիկ նեղու-
 թեանս ատեն՝ որուն մէջ պի-
 տի գանուիմ. սիրտ տուր ինձ
 որ չյուսահատիմ մեղքերս տես-
 նելով՝ որոնք սատանան աչքիս
 առջև պիտի գնէ: Տուր որ այն
 ատեն շատ հեղ կարենամ քու
 անունդ կարգալ, որպէս զի քու
 քաղցր անունդ բերանս առնե-

լով՝ և քու որդւոյդ ամենա-
 սուրբ անունն Յիսուսի՝ անանկ
 հոգիս աւանդեմ: Քու այնչափ
 ջերմեռանդներուդ այս շնորհքն
 ըրեր ես. ես ալ կը փափաքիմ
 ու կը յուսամ որ կ'առնում.
 Ամէն:

Երեք Ողջոյն:





ՉՈՐԵՔ ՆԱԲԱԹԻ

Ա Ղ Օ Թ Բ

Առ ամենասուշրք կոչսն Մարիամ,
դժոխքէ ազատելոռ հարնար.


Ո՛վ մայր Աստուծոյ ամենա-
սուրբ կոյս Մարիամ, շնորհա-
կալ եմ որ այնչափ անգամ զիս
դժոխքէ ազատեցիր, որչափ ան-
գամ որ ես իմ մեղքերովս անոր
արժանի եղայ: Կարելի է որ
առաջին մեղք ընելուս դատա-
պարտութեան վճիռս կարուած

կ'ըլլար ու ես խեղճ ողորմելիս
այն բանտին մէջ հիմա դատապար-
տուած կ'ըլլայի, թէ որ դու գը-
թութեամբդ օգնութեան չհա-
մնէիր ինձ: Առանց իմ աղաչանացս,
այլ միայն քու ողորմութեամբդ
բռնեցիր աստուածային արդա-
րութիւնը. ետքն ալ իմ խըս-
տասրտութիւնս կոտորելով՝ սիր-
տըս շարժեցիր առ քեզ ապաւի-
նելու: Արդեօք քանի՛ քանի ու-
րիշ մեղաց մէջ ալ պիտի իյնայի՛
թէ որ դու, մայր սիրելի, չը-
պահէիր զիս շնորհօք որ ինձ
համար առիր. բայց, ո՛վ թա-
գուհի Երկնաւոր, բոլորովին
զիս դժոխքէն ազատէ. ի՞նչ օ-
գուտ կ'ընէ քու գթութիւնդ
ու օգնութիւնդ որ ինձ ըրիր,
երբ ես զիս կորսնցնեմ: Ատեն
մը թէ որ ես զքեզ չսիրեցի՛
հիմա յետ Աստուծոյ ամեն բա-
նէն վեր զքեզ կը սիրեմ. ու-
րեմն թող մի՛ տար որ ես քեզ-

մէ ու Աստուծմէ բաժնուիմ,
 որ քու միջնորդութեամբդ այն-
 չափ ողորմութիւն ըրած է ինձ:
 Ով ախրուհի սիրելի մի՛ թո-
 ղուր որ դժոխաց մէջ իյնալովս՝
 զքեզ միշտ առող ու անիծող
 ըլլամ: Ի՞նչպէս կրնայ դիմանալ
 սիրտդ դատապարտած տեսնե-
 լով մէկ ծառայդ որ զքեզ կը
 սիրէ: Մայր սուրբ Մարիամ,
 ի՞նչ կ'ըսես ինձ համար, ար-
 դեօք ես զիս պիտի կորսնցը-
 նե՞մ, իրաւցնէ կը կորսնցնեմ
 թէ որ զքեզ թողում, բայց
 ասկէ յետոյ որո՞ւն սրտէն
 կ'անցնի զքեզ թողուլ, ո՞վ կըր-
 նայ մոռնալ այն սէրն որ ինձ
 ցուցիր: Չէ՛, ով որ հաւատար-
 մութեամբ առ քեզ կ'ապաս-
 տանի առ քեզ կը դիմէ՝ չի-
 կորսուիր: Ապա՛յ ի՞վ մայր իմ
 սիրելի, զիս իմ ձեռքս մի՛ թո-
 ղուր, եթէ թողուս՝ ես զիս կը
 կորսնցնեմ, այլ տուր որ միշտ

առ քեզ դիմեմ, փրկէ զիս ո՞վ
 յոյս իմ, փրկէ զիս ի դժոխաց
 և ամենէն առաջ ի մեղաց՝ որ
 կրնայ զիս ի դժոխս դատա-
 պարտել:

Երեք Ողջոյն:



ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

ԱՂՕԹՔ

Առ ամեկնստոչրք կոյսն Մա-
րիամ, արքայոչրիչն
ստանաչոչ համար .

Ո՛վ թագուհի երկնից արքա-
յուլթեան, որ հրեշտակաց դա-
սերէն վեր կը նստիս, աւելի
մօտիկ Աստուծոյ, ես սղորմելի
մեղաւորս այս խեղճ աշխարհիս
մէջ կեցած՝ քեզի ողջոյն կու-
տամ, զքեզ աղաչեմ. ինձ դար-
ձուր միանգամ քու գթու-
թեան աչուրներդ, որոնք ս'ւր
նային շնորհք կը սփռեն հոն .
տե՛ս նայէ՛ք քանի՛ քանի՛ վտան-
գաց մէջ ընկած եմ և պիտի
գտնուիմ քանի՛ որ ողջ եմ այս
աշխարհիս վրայ . անանկ վտանգ-

ներ, որ կրնամ կորսնցնել հո-
գիս ալ, արքայուլթիւնն ալ .
Աստուած ալ . բոլոր յոյսս քու
վրայ դրած եմ, ո՛վ տիրուհի .
ես զքեզ կը սիրեմ, կը հաւա-
չեմ շուտով քովդ դալուս, զքեզ
տեսնելու, զքեզ փառաւորելու
արքայուլթեան մէջ : Ե՞րբ պի-
տի ըլլայ այն օրը, մայր սուրբ,
կոյս Մարիամ, որ ես զիս փըր-
կուած տեսնեմ սաքիդ սուշե-
նստած . ե՞րբ պիտի համբուրեմ
այն ձեռքն որ այնչափ շնորհք-
ներ տուեր է ինձ : Իրաւ է
մայր սուրբ, որ ես իմ կե՛նացս
մէջ շատ ապերախտ եղեր եմ
քեզի դէմ, բայց թէ որ ար-
քայուլթիւն հասնիս, հոն զքեզ
պիտի սիրեմ ամեն վայրկեան
մինչև յաւիտեան, հոն հասու-
ցում ընեմ, իմ ապերախտու-
թեանս տեղ՝ միշտ օրհնելով ու
շնորհակալ ըլլալով : Ես հիմա
շնորհակալ կ'ըլլամ Աստուծոյ՝

որ ինձ ասանկ յոյս, համար-
 ձակուժիւն կու տայ Յիսուսի
 Քրիստոսի արեանն ու քու հզօր
 բարեխօսուժեանդ վրայ, ասանկ
 յոյս գրած ունէին քու ճշմա-
 րիտ ջերմեռանդներդ և անոնց-
 մէ մէկն ալ չխաբուեցաւ. ա-
 սլա ուրեմն ես ալ պիտի չխա-
 բուիմ: Ո՛վ սուրբ կոյս Մարիամ,
 բարեխօս եղիր քու որդւոյդ
 Յիսուսի, որ հաստատուն պա-
 հէ ու աւելցնէ այս իմ յոյսս,
 ինչպէս որ ես ալ կը խնդրեմ
 իրեն քաջածներուն արդեանց
 համար. Ամէն:

Երեք Ողջոյն:

Ո Ի Ր Բ Ա Թ

ԱՂՕԹՔ

Առ ամեկաստորք կոյսն Մա-
 րիամ, իրեն և Յիսուսի սիրով
 բորբոքելոռ համար.

Ո՛վ սուրբ կոյս Մարիամ, դու
 ես ստեղծուածոց մէջ ամենէն
 ազնիւն, ամենէն գերազանցն,
 ամենէն մաքուրն, ամենէն գե-
 ղեցիկն և ամենէն սուրբ: Ինչ
 աղէկ կ'ըլլար, ո՛վ տիրուհի,
 թէ որ ամենն ալ զքեզ ճան-
 չնային զքեզ սիրէին ինչպէս
 որ արժանի ես. բայց ասով
 կը մխիթարուիմ որ այնչափ
 երանելեաց հոգիք երկնից
 մէջ, այնչափ արդարք եր-
 կրիս վրայ կ'ապրին սիրելով
 զմայլելով քու ազնուուժեանդ
 ու փառաւորուժեանդ վրայ:

Ամենէն աւելի ինձ ուրախու-
 թիւն այն է՝ որ նոյն ինքն Աս-
 տուած ալ զքեզ միայն աւելի
 կը սիրէ՝ քան թէ ամեն մար-
 դիկ ու հրեշտակները միանգա-
 մայն: Ո՛վ թագուհի սիրելի, ես
 ողորմելի մեղաւորս ալ զքեզ
 կը սիրեմ, բայց այս իմ սէրս
 շատ քիչ է, կ'ուզեմ շատ աւել-
 ի ու սրտանց սէր ունենալ առ
 քեզ, այս շնորհքը դու պիտի
 առնուս, որովհետեւ զքեզ սի-
 րելը մեծ նշան է նախասահմա-
 նութեան, և շնորհք մ'է որ
 Աստուած փրկելոց կը պար-
 գեւէ: Կը ճանչնամ ալ, մայր
 սուրբ, որ մեծ պարտաւորու-
 թիւն ունիմ քու որդւոյդ, կը
 տեսնեմ որ արժանի է ինքն
 անհուն սիրոյ, դու որ ուրիշ
 բանի չես բաղձար՝ բայց եթէ
 տեսնել իրեն սիրելի ըլլալն՝
 այս շնորհքն է ահա որ դու
 պիտի առնուս ինձ համար, ա՛ռ

ապա մեծ սէր մը առ Յիսուս
 Քրիստոս, ա՛ռ այս շնորհքն ինձ
 համար, դու որ կ'առնուս Աս-
 տուծմէ ինչ որ կ'ուզես: Ես
 չեմ խնդրեր քեզմէ երկրաւոր
 բարիք, ոչ պատիւ, ոչ հարըս-
 տութիւն, այլ կը խնդրեմ այն
 բանն՝ որ քեզի աւելի բաղձալի
 է, որ է միայն սիրել զԱս-
 տուածն իմ, կրնայ ըլլալ որ
 չհասնիս չկատարես այս իմ
 բաղձանքս՝ որ այնչափ քու իսկ
 ուզածդ է, գիտեմ թէ կը հասնիս
 ու կը խնդրես: Կ'աղաչեմ սուրբ
 կոյս Մարիամ, խնդրէ ու խըն-
 դրելէ մի գաղբիր ինչուան որ
 զիս արքայութեան մէջ չտես-
 նես, ուր ապահով կ'ըլլամ ժա-
 ոանգել ու սիրել միշտ զԱս-
 տուածն իմ քեզի հետ, մայր
 սիրելի: Ամէն:

Երեք ողջոյն:

Շ Ա. Բ Ա. Թ

ԱՂՕԹՔ

Առ արևելաստորք կոչուև Մա-
րիամ, իրեև պաշտպանութիւնը
խնդրելոք հարևար.

Ո՛վ ամենասուրբ մայր, կը
տեսնեմ շնորհքներդ, որ դու
ըրեր ես ինձ, և կը տեսնեմ ա-
պերախտութիւնս որ ես ըրեր
եմ քեզ. գիտեմ որ ապերախտ
մարդն արժանի չըլլար բարե-
րարութեան, բայց անանկ ալ
չեմ կարեր յոյսս քու ողորմու-
թենէդ, որ ապերախտութենէս
մեծ է: Ո՛վ հզօր փաստաբան
իմ, նայէ ողորմէ վրաս. դու
ես գանձապետ ամեն շնորհաց

որ Աստուած կու տայ մեզի
խեղճ մեղաւորացս. այս բանիս
համար Աստուած զքեզ ասանկ
կարող, ասանկ առատաձեռն ու
բարերար ըրաւ, որպէս զի հաս-
նիս մեզի: Ես կ'ուզեմ փրկ-
կուիլ, անոր համար քու ձեռ-
քըդ կը յանձնեմ իմ յաւի-
տենական փրկութիւնս, քու
ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս,
քու առանձին ծառաներուդ
մէջ կ'ուզեմ գրուիլ. զիս դուրս
մի՛ հաներ: Ողորմելիները կը
փնտռես դու մխիթարելու հա-
մար, ապա զիս ողորմելի մեղա-
ւորս մի ձգեր երեսէդ, որ առ
քեզ եմ ապաւինած. ինձ հա-
մար բարեխօս եղիր. դու ինչ
որ ուզես կը կատարէ որդիդ,
ան զիս քու պաշտպանութեանդ
տակ՝ հերիք է ինձ այսչափս.
Թէ որ դու զիս պաշտպանելու
ըլլաս՝ ես բանէ մ'ալ չեմ վախ-
նար, ոչ իմ մեղքերէս, որով-

հետև կը յուսամ թէ դու ա-
 նոնց համար թողու թիւն կ'առ-
 նուս Աստուծմէ. ոչ սատանա-
 ներէն, որովհետև դու բոլոր
 դժոխքէն ալ զօրաւոր ես. եւ
 ոչ արդար դատաւորէն Յիսու-
 սէ, որ քու մէկ խնդիրքդ լսե-
 լու ըլլայ՝ կը զիջանի կը հաշ-
 տուի: Ասլա պաշտպան եղիր
 ինձ, մայր սուրբ. թողու թիւն
 առ իմ մեղացս համար, սէր առ
 Յիսուս, սուրբ յարատեւութիւն,
 բարի մահ, ետքն ալ արքայու-
 թիւն. մասնաւորապէս շնորհք
 առ ինձ համար՝ միշտ զիս քեզի
 յանձնելու: Իրաւ է որ ես շեմ
 արժանի այս շնորհաց. բայց թէ
 որ դու խնդրելու ըլլաս Աս-
 տուծմէ ինձ համար՝ այն ա-
 տեն կ'առնում. ասլա խնդրէ
 Յիսուսէն. ինձ համար, ո՛վ
 սուրբ կոյս Մարիամ թա-
 գուհի. քեզի եմ ասպաւիներ,

քու վրայդ յոյսս գրած կեցեր
 եմ, եւ այս յուսովս մեռնիլ
 կ'ուզեմ: Ամէն:

Երեք Ողջոյն՝ ինչպէս վերը. եւ
 շաբաթ ըլլալով՝ լիթանիան ալ ըսէ,
 որուն համար 500 օրուան ներողու-
 թիւն կայ.



ԱՂՕԹԻՔ

ԾԱՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Տ. ՎԻՆԿԵՆՏԻՈՍԻ ՊՈԼԼՈՏԵՍԱՅ

Աստուած պաշտոնքեան և հա-
շատոց աճման հարմար.



այր երկնաւոր, բու-
անբաւ ողորմու-
թեանդ, և Յիսուս
որդւոյդ անհուն
արդեանց համար,
ճանչցուր և սիրցը-
նել տուր զքեզ ա-
մենունս որովհետե
ամենուն փրկու-
թիւնը կ'ուզես:
Փառք Հօր:

Բան յաւիտենական, մարմնա-
ցեալ Փրկիչ աշխարհի, դարձուր
առ քեզ դամենքը, վասն զի ա-
նոնց համար ինչուան խաչ ել-
լալու հնազանդ եղար: Փառք
Հօր:

Սուրբ Հոգիդ երկնային, Յի-
սուսի չարչարանաց և մահուան
անբաւ արդեանց համար, լեղ
ցուր բու ջերմ և ամենակարող
սիրովդ ամենուն սիրար, որով
բոլոր աշխարհ մէկ հօտ և մէկ
հովիւ ըլլայ, որպէս զի ամեն-
քնիս ալ արժանի ըլլանք գալ
երկինքն օրհնել յաւիտեան բու
ողորմութիւններդ. Ամէն: Փառք
Հօր:

Ա Ղ Օ Թ Զ

Առ արևելաստորք կոչսն

Մարիամ քաղաքի Առաքելոց.

Անարատ կոչս Մայր Աստու-
 ծոյ Թագուհի Առաքելոց, կը
 ճանչնամ որ աստուածային պա-
 առէրն որ կ'ապսպրէ ինձ սի-
 րել զընկերն իբրև զանձն, կը
 պարտաւորէ միանգամայն ըն-
 կերսջս փրկութեան համար ալ
 ամեն կերպով աշխատիմ: Բայց
 կը խոստովանիմ որ իմ մեղացս
 համար, անարժան եմ հարկա-
 ւոր եղած շնորհքներն ընդու-
 նելու. որպէս զի աւելի լաւ և
 հաստատուն կերպով թէ իմ,
 թէ ազգականացս, թէ մերձա-
 ւորացս հոգւոյն յաւիտենական
 փրկութեանն համար աշխատիմ,
 և մանաւանդ բարի գործոց օգ-
 նելով, և հաւատաքը կենդանա-

ցնելու և քրիստոնէից մէջ սէրը
 վառելու հոգևոր և նիւթական
 միջոցներն աճեցնելով և այդ
 երկնային սէրը բոլոր աշխարհ
 տարածելով: Իսկ ապա մայր
 իմ, ան ինձ համար այս շնորհ-
 քս Աստուծմէ իր ողորմու-
 թեան և Յիսուսի անհուն ար-
 դեանց համար, և քեզ և բոլոր
 երկնից արքունեաց եւ ամեն
 արդարոց հեա՛ որ են ու պիտի
 ըլլան սուրբ եկեղեցւոյ մէջ, կը
 նուիրեմ միշտ Յիսուսի ար-
 դիւնքներն ի շնորհակալու-
 թիւն՝ իբրև թէ արդէն իսկ ըն-
 դունած ըլլայիր թէ ինձ, թէ
 ամենուն համար: Ուստի ես քու
 հզօր միջնորդութեանդ վստա-
 հացած, կը խոստանամ այս
 վայրկենէն որ եթէ պարգևէ
 ինձ Աստուած իշխանութիւն,
 հանձար, դիտութիւն, երկրա-
 ւոր բարիք, արուեստ, առող-
 ջութիւն, ցաւ և նեղութիւն,

ասոնց ամենէն ալ մեծ օգուտ
 հանեմ Աստուծոյ փառաց եւ
 իմ հոգւոյս եւ ընկերացս փրկ-
 կութեան համար, մասնաւորա-
 պէս աստուածապաշտութիւնն ու
 հաւատքը բոլոր աշխարհ տա-
 րածելու աշխատիմ: Եթէ գոր-
 ծել չկարենամ, գոնէ աղօթե-
 լէն պիտի չգաղբիմ որ բոլոր
 աշխարհ մէկ հօտ եւ մէկ հովիւ
 ըլլայ, եւ այնպէս կը յուսամ որ
 գամ արքայութիւնն ու յաւի-
 տեան վայելեմ զՅիսուս քարո-
 ցելուն արգիւնքը. Ամէն: Երեք
 Ողջոյն եւ Փառք Հօր:

Չերսկեռասնիսկանի դիտաւորու-
 քիչնք օրոշան մեջ առեպ կրկնե-
 շոշ հարնար.

Աստուած իմ, քու սիրոյդ
 համար ամբաւ բարի գործեր
 եւ այնչափ առաքինութիւն ը-

րած կը համարիմ եւ յաւի-
 տեանս յաւիտենից ընել կ'ու-
 զեմ՝ որչափ որ դու արժանի
 ես. եւ ամեն բան անանկ կա-
 տարեալ ընել կ'ուզեմ ինչպէս
 որ դու կ'ուզես. ասոր համար
 կ'ընծայեմ քեզ նաև Յիսուսի
 պատուական արիւնը, շնորհա-
 կալ ըլլալով որ անով իբրեւ
 հիմակուրնէ սուրբ եւ կատա-
 րեալ ըրեր ես զիս՝ նման Հօրն
 երկնաւորի, իբրև հիմակուրնէ
 արքայութիւնը սարգիւեր եւ
 ինձ առանց քաւարան երթալու,
 իբրև հիմակուրնէ ամեն բան
 շնորհեր ես ամենուն, այժմ
 եւ յաւիտեան:



Ա Ղ Օ Թ Ք

ԾՍՌԱՅԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Տ. ԲԵՌՆԱՐԴՈՍԻ ԿԼԱԻՍԵԱՅ

Առ ամենասուշրք Երրորդու-
րիշննն.

Հայր յաւիտենական, ահա-
ւասիկ խեղճ ողորմելի արարած
մը անկարող ամենայնի՝ կը ճանչ-
նայ իւր յետին անկարուծիւնը
և քու անհուն կարողուծիւնդ.
և այս իրեն պիտոյից համար
քու կարողուծեանդ կ'իյնայ, կը
յուսայ և կը վստահի: Դու
հոգա զինքը: Փառք Հօր:

Որդիդ յաւիտենական, ահա-
ւասիկ խեղճ ողորմելի արարած
մը անկարող ամենայնի՝ կը ճանչ-
նայ իւր յետին անկարուծիւնը
և քու անհուն իմաստուծիւնդ,
և այս իւր պիտոյից համար քու
իմաստուծեանդ կը զիմէ, կը
վստահի և ինքզինքը կը յանձնէ:
Փառք Հօր:

Հոգիդ սուրբ յաւիտենական,
ահաւասիկ ողորմելի և ապե-
րախտ արարած մ'որ բանի
մ'արժանի չէ, կը ճանչնայ իւր
յետին ապերախտուծիւնը եւ
քու անհուն ողորմուծիւնդ, քու
ողորմուծեանդ կը զիմէ ու կը
պղնուի, առ քեզ կ'ապաւինի,
քեզի կը վստահի, դու զինքն
հոգա: Փառք Հօր:

Հոգւոյ մը կատարեալ սրբուծիւ-
նը և կատարեալ ըլլալը՝ զՅիսուս
մեր Աստուածը, մեր անհուն բարին,
մեր Փրկիչը՝ սիրելուն մէջն է: Ուս-
տի բոլոր մեր հոգը պէտք է ըլլայ
ստանալ ճշմարիտ սէր առ Յիսուս
(Ս. Լեկտորէ):

Ա Ղ Օ Թ Զ

Նա առ օգտակար է ամեն օր ըստ-
լու, մանաւանդ բարեկենսւանի մէջ
ի փոխարէն մարդկանց մեղքերուն:

Հայր յաւիտենական, քեզ կը
մատուցանեմ Յիսուսի ամենա-
սուրբ սրտին սէրը, փառքը,
վշտերը, խղճերը և բոլոր փա-
փաքները, ի փոխարէն մարդ-
կանց մարմնաւոր և երկրաւոր
մեղաց և քեզի դէմ ուղածնե-
րուն համար: Հայր սէր: Ող-
ջոյն: Փառք Հօր:

Հայր յաւիտենական, քեզ կը
մատուցանեմ Յիսուսի անմեղ
բերնին բոլոր կրթութիւնները,
իւր զգուշաւորութիւնը, կե-
րակութիւնը և խօսելու չափաւո-
րութիւնը, իւր աղօթքը և քա-
րոզութիւնը, որոնցմով այնչափ
աշխատեցաւ մարդուս փրկու-
թեան համար՝ ի փոխարէն այն

մեղաց՝ որ բոլոր Եկեղեցւոյ մէջ
կ'ըլլան, բերանով, խմելով,
հայնոյութեամբ, և այնչափ
դատարկ և փոստակար խօսքե-
լով: Հայր սէր, Ողջոյն: Փառք
Հօր:

Հայր յաւիտենական, քեզ կը
մատուցանեմ Յիսուսի ամենա-
սուրբ մարմնոյն բոլոր կրթու-
թիւնները և բոլոր կրած դառն
չարչարանքներն ու մահը, ի
փոխարէն այն ամեն մեղաց որ
կ'ընեն մարդիկ չար սովորու-
թեամբ մարմնոյ, քու աստուա-
ծային օրինացդ և իրենց յա-
ւիտենական փրկութեան դէմ:
Հայր սէր, Ողջոյն: Փառք Հօր:

Ա Ղ Օ Թ Ք

Մաստիկ վշտաց և նեղոռ-
թեանց միջոց
հաշատքնիս աշելի բորբորելոռ
հարևար:

Աստուած իմ, Հայր ողորմու-
թեան և աղբիւր մշանջենաբուխ
ամենայն միսթարու թեան, ես
թէպէտ անանկ սաստիկ դժուա-
րութեանց, նեղութեանց եւ
փորձութեանց ծովի մէջ կը
գանուիմ, որ ընկղմելու մօտ
եմ, սակայն չեմ ուզեր յուսա-
հատիլ կամ լքանիլ, այլ արիու-
թիւնը և վստահութիւնը ձեռք
սուած՝ յուսալ բոլորովին եւ
յանձնել զիս քու ամենաբաղցր
ողորմութեանդ, որ անսպառ-
է. և գիտեմ թէ անհուն բա-
րերար և գթած ես:

Անանկ որ եթէ տեսնեմ զքեզ

որ սուր մը ձեռքդ զիս սպան-
նելու և կտոր կտոր ընելու կու
գաս, սակայն և այնպէս կը
յուսամ ի քեզ, որ զիս անանկ
կտրտելէդ ետքն ալ, կ'ողջնցնես
քու կարողութեամբդ: Եւ թէ-
պէտ բիւր անգամ դարձեալ
կտրտես ու կտոր կտոր ընես,
բիւր անգամ ի քեզ կը յու-
սամ, որ յետ զիս կտրտելուդ
ու ոչնչացնելուդ, դարձեալ կը
յարուցանես. վասն զի դու կը
մեռցնես ու կ'ողջնցնես, կը խո-
նարհեցնես ու կը բարձրացնես,
կը թողուս որ ինչուան դժոխ-
քին սահմանը մօտենայ մարդ և
կտքը դժութեամբդ արքայու-
թեան ճամբան զինքը կը մըտ-
ցընես, և ալեկոծութենէ ետ-
քը՝ ի քեզ կը հանդարտեցնես,
Աստուած իմ, Հայր, Արդի եւ
Սուրբ Հոգի, ի քեզ Տէր յու-
սացայ, մի՛ ամաչեցից յաւի-
տեան:

ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱԶԻ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԼԷՈՆԱՐՏՈՍԻ
Ի ԲՈՐԴՈՅ-ՄԱԽՐԻՑԻՈՅԷ

Ճանապարհ խաչի ընողները նոյն
ներողութիւնները կ'առնուն՝ ինչ որ
Երուսաղեմայ սուրբ տեղեաց այցել-
ութիւն ընողները :

ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԶՂԶՄԱՆ

Փրկիչ իմ գթած, որովհետև
ամենաբարի ես և ողորմած,
ամեն բանէ վեր զքեզ կը սիրեմ,
և կը զղջամ բոլոր սրտանց իմ
բարերարս յշտացնելուս համար,
ընծայելով այս սուրբ խաչին
ճանապարհն ի պատիւ այն կրս-
կըծելի ճանապարհին, որ գու-
րրիբ անարժան մեղաւորիս հա-
մար, և յուսամ որ կ'ընդունիմ
սուրբ ներողութիւնները, եւ

կ'աղօթեմ միայն այն վախճա-
նաւ ու պատճառաւ՝ որուն
համար որ շնորհուած է այս-
պիսի մեծ գանձ մը. դարձեալ
խոնարհաբար կ'աղաչեմ զքեզ
որ օգտակար ըլլայ ինձ այս աշ-
խարհիս վրայ քու գթութեանդ
հանգիստելու, և անգին՝ յաւի-
տենական փառաց: Ամէն:





Ա .

Հ Ա Ն Ք Ի Ս Ս

Յիսուսս մահոռասն կը դատու-
պարտոռի .

Երկրպագեմք քեզ Քրիստոսս և
օրհնեմք զքեզ , որ խաչիւղ քով
սրբով փրկեցեր զաշխարհ :

(Այսպէս զուրցէ ամեն հանգստեան
սկիզբը) :

Ո՛վ սիրելիդ իմ Յիսուս , ի՞նչ
անբաւ սէր է քու ունեցածդ ,
որ անարժան ստեղծուածոյ մը

համար կը համբերես բանտի ,
կապանաց , ձաղանաց և ինչուան
այն աստիճան անարդ մահուան
դատապարտուելու : Ա՛հ , քա-
ւական է այսչափը սիրտս վի-
րաւորելու , և ատել տալու ինձ
մեզքերս , որ այդ քաշածներուդ
պատճառ եղան . անանկ որ կը
զղուիմ անոնցմէ և դառնապէս
կու լամ . և բոլոր այս ճանա-
պարհը պիտի կատարեմ լալով ,
հաւաչելով՝ պաղատելով , Յի-
սուսս ողորմեա ինձ , ողորմեա ինձ
Յիսուս : — Հայր մեր , Ողջոյն :
Ողորմեա մեզ Տեր , ողորմեա
մեզ :

(Այսպէս ըսէ ամեն հանգստեան
վերջը) :



վառուած բիւր ու բիւր անգամ
կրկնեմ Ս. Թերեղայի հետ.
« Կամ կրել, կամ մեռնիլ. կամ
կրել, կամ մեռնիլ »:

Բ

Յիսուս խաչը ոչար կ'առնու.

Փրկիչ իմ Յիսուս, ինձ ար-
ժանի է այդ խաչը, ոչ թէ բեղ:
Ո՛վ ամենածանր խաչ, զոր իմ
անբաւ ծանր ծանր մեղքերս
չինեցին: Հնազանդ Փրկիչ իմ սի-
րելի, տո՛ւր ինձ զօրութիւն ամեն
խաչի սիրով պըլլուելու՝ որոնց
արժանի եմ ամենածանր մե-
ղքս. մանաւանդ թէ տո՛ւր որ
սուրբ խաչին պըլլուած հոգիս
աւանդեմ, եւ խաչին սիրով



Գ.

Յիսուս իսաչր ոչսն առաջին
անգամ գետին կ'իյնայ .

Փրկիչ իմ ամենասիրելի, ա-
հաւասիկ ոտքդ ինկած աշխար-
հիս ամենէն կորուսեալ մեղա-
ւորն: Ա՛հ, ս՛րչափ անգամ ին-
կերս ս՛րչափ անգամ մեղաց ան-
գուցի մէջ գլորեր եմ: Ա՛հ,
տմբ ինձ սուրբ ձեռքդ, օգնէ
ինձ. Յիսուս, օգնէ ինձ, որպէս
զի ալ կենացս մէջ մահուչափ
մեղաց մէջ չիյնամ, և մահուանս
ատեն ապահով ըլլայ յաւիտե-
նական փրկութիւնս:



Դ.

Յիսուս իր ամենասուրբ մօրը
կը հանդիպի .

Ա՛վ երկնաւոր Արդիտ Մա-
րիամու, ո՛վ ամենասուրբ մայր
փրկչին իմոյ Յիսուսի, ահաւա-
սիկ ես խոնարհաբար և զղջա-
ցեալ ձեր ոտքն ինկած. ես եմ
այն մատնիչն որ մեղօքս ցաւոց
սուրը շինեցի, որ ձեր փափուկ
սիրտը մտաւ: Ա՛հ, ս՛րչափ սըր-
տանց կը ցաւիմ, և երկուքէդ
ալ գթութիւն և թողութիւն
կը խնդրեմ. գթութիւնս Փրկիչ

իմ, գթութիւն, ամենասուրբ
 կոյս Մարիամ, գթութիւն. ու
 ձեր գթութեամբն ալ չմեղան-
 չեմ և գիշեր ցորեկ ձեր ցա-
 ւերն ու կսկիծները մտածեմ:



Ե.

Միւռնի կիշրեւացիի Յիսուսի

կ'օգնի.

Ո՛վ ամենասիրելիդ իմ Յի-
 սուս, շնորհակալ եմ այնչափ ա-
 ղէկ աղէկ առիթներ տալուդ՝
 որ քեզի համար համբերեմ, եւ
 ինձ համար արդիւնք չահիմ:
 Տո՛ւր, Տէր, որ համբերու-
 թեամբ կրելով աշխարհիս վրայ
 չար երեւցածներն, անդին յա-
 ւիտենական բարիք գիշեմ.

և այս աշխարհիս վրայ քեզի
հետ լալով, արժանի ըլլամերկ-
նից արքայութեան մէջ քեզի
հետ մէկտեղ թագաւորել:



2.

Վերոնիքա Յիսուսի քրտինքը
կը սրբէ.

Փրկիչ իմ չարչարեալ, տպա-
ւորէ, կ'աղաչեմ, այդ սրբազան
դէմքդ սրտիս մէջ, որ գիշեր
ցորեկ զքեզ մտածեմ, և քու դառ-
նակսկիծ տանջանքներդ աչքիս
առջև դրած՝ լամ միշտ իմ ծանր
ծանր մեղքերս, խոստանալով որ
ինչուան ի մահ ցաւով ու ա-
պաշաւանօք ապրիմ, ասելով
միշտ իմ գէշ վարքս:



Է.

Յիսուս երկրորդ անգամ կ'իյնայ

Ո՛վ ամենասուրբ Փրկիչ իմ,
Թէպէտ ընկած զքեզ կը տես-
նեմ, բայց կը խոստովանիմ որ
ամենակարող ես, կ'աղաչեմ
զքեզ, խոնարհեցուր իմ հպարտ
ամբարտաւան և ինքնահաւան
մտածութիւններս, որպէս զի
միշտ գլուխս գետին խոնարհած
բալելով, սրտանց ընդգրկեմ
նախատինք ու արհամարհանք,
և այս ճշմարիտ ու անկեղծ
խոնարհութեամբս որ շատ սի-
րելի է քեզ, այդ ցաւագին անկ-
մանէդ վեր հանեմ զքեզ:



Ը.

Յիսուս կը մխիթարե

զկանայս.

Փրկիչդ իմ ամենասիրելի, ին-
չո՛ւ բոլոր սիրտս ճշմարիտ ա-
պաշխարութեան արցունքով չի
լեցուիր: Արցունք կը խնդրեմ
քեզմէ Յիսուս, ցաւոց և կա-
րեկցութեան արցունքներս որ-
պէս զի արտօսրալից աչքերով
և ցաւագին սրտիւ արժանի
ըլլամ այն գթութեանդ՝ զոր
ցուցիր այն խեղճ կանանց: Ո՛հ,
տու՛ր ինձ այս մէկ հատիկ մը-

խիթարուծիւնը , որ ողջու-
ծեանս ատեն գորովալից աչօք
վրաս նայելովդ՝ ապահով ըլլամ
մեռած վայրկեանս զքեզ տես-
նելու :



Թ .

Յիսուս երրորդ անգամ
կ' իյնայ .

Աստուած իմ ամենակարող ,
որ մէկ նայուածքով երկինքն
ու երկիրս հաստատուն կը բռն-
նես , ո՞վ զքեզ ատանկ խեղճ
կերպով գետին կը ձգէ , վայ
ինձ . իմ անգագար մեղաց մէջ
գլորելներս ու անօրէնութիւն-
ներս . և մեղք մեղքի վրայ գի-
զելով չարչարանքներդ աւել-
ցուցի : Բայց արդ ցաւոց մէջ
ընկղմած ոտքդ կ' իյնամ . հաս-

տատապէս խոստանալով ա՛լ
 դագրիւ մեղքէ, և լացովս եւ
 հաւառանքներովս՝ բիւրիցս բիւր
 անդամ կը կրկնեաս, ա՛լ չեմ մե-
 դանչեր: Աստուած իմ, ա՛լ չեմ
 մեղանչեր:



Ժ.

Կը հասնոշեցնէն զՅիսուսս
 ոչ շեղի կը խմցնէն.

Փրկիչ իմ տառապեալ, ինչ ա-
 հաւոր տարբերութիւն է այս ։
 Գու բովանդակ արեան մէջ
 թաթխուած, բովանդակ վէրք,
 բովանդակ լեղի, ես բոլորովին
 ուրախութեանց, զուարճու-
 թեանց ու քաղցրութեանց մէջ ։
 Ա՛հ, չէ, քայլերս աղէկ չեն.
 ա՛հ, փոխէ վարքս. և անանկ
 դառնացուր ինձ ապագայ կե-
 նացս քաղցրութիւնները, որ

տատապէս խոստանալով ա՛լ
 դագրիւ մեղքէ, և լացովս եւ
 հաւաչանքներովս՝ բիւրիցս բիւր
 անգամ կը կրկնեայ, ա՛լ չեմ մե-
 դանչեր, Աստուած իմ, ա՛լ չեմ
 մեղանչեր :



Ժ.

Կը հանոշեցնեն զՅիսուս
 ոչ շեղի կը խմցնեն.

Փրկիչ իմ տառապեալ, ինչ ա-
 հաւոր տարբերութիւն է այս :
 Գու բովանդակ արեան մէջ
 թաթխուած, բովանդակ վէրք,
 բովանդակ լեղի, ես բոլորովին
 ուրախութեանց, զուարճու-
 թեանց ու քաղցրութեանց մէջ :
 Ա՛հ, չէ, քայլերս աղէկ չեն.
 ա՛հ, փոխէ վարքս, և անանկ
 դառնացուր ինձ ապագայ կե-
 նացս քաղցրութիւնները, որ

այս օրէս սուրիչ բանէ ախորժ
չառնելով, բաց ի բու ամենա-
սուրբ չարչարանքներէդ, ար-
ժանի ըլլամ հասնիլ քեզի հետ
արբայութեան զուարճութիւն-
քը վայելելու:



ԺԱ.

Յիսուս խաչին վրայ կը
գամոռի.

Փրկիչ իմ Յիսուս ամենողորմ,
որ ինձ համար խաչուեցար և
զա՛րկ ու զարկ այս իմ խըս-
տացեալ սիրտս սուրբ սիրովդ
ու վախով. և որովհետև մեղ-
քերս եղան այն անգութ գա-
մերն որ ծակեցին զքեզ, տո՛ւր
որ ցաւս ալ՝ իմ դահիճս ըլլայ
որ ծակէ ու գամէ բոլոր իմ
անկարգ կիրքերս. որպէս զի

այլէկ ասորելով և քեզի հետ
մէկտեղ խաչեալ մեռնելով աշ-
խարհիս վրայ, կարենամ գալ ու
Թագաւորել քեզի հետ մէկտեղ
յերկինս :



ԺԲ.

Յիսուս խաչիև վրայ կը
բարձրասևայ ոչ կը մեռնի .

Փրկիչ իմ ամենասիրելի, կը
ճանչնամ որ իմ ծանր ծանր մեղ-
քերս եղան քու ամենէն ան-
դուծ դահիճներդ՝ որ կեանքդ
վերուցին քեզմէ. անանկ որ
Թողուծեան իսկ արժանի չեմ,
ես ըլլալով այն մատնիչն որ
զքեզ խաչեցի. բայց երբ կը
լսեմ որ զքեզ խաչողներուն
համար կ'աղօթես, ո՛հ, որչափ
կը մխիթարուի սիրտս : Ի՞նչ

ուրեմն կրնամ ընել քեզի, որ
 ինձ այսչափ շնորհք ըրիր: Ահա-
 ւասիկ, կը ներեմ ես այ՛ ո՛վ
 որ ինձ չարիք մը ըրեր է: Այո՛,
 Աստուած իմ, քու սիրոյդ հա-
 մար ամենուն կը ներեմ, զա-
 մենքը կը սիրեմ, ամենուն քա-
 ըիքը կ'ուզեմ. որով կը յուսամ
 վերջի վայրկենիս լսել քեզմէ.
 Այսօր ընդ իս իցես ի գրախ-
 տին:



ԺԳ.

Յիսուս խաչեմ վար
 կ' առնուի .

Ո՛վ Թագուհի մարտիրոսացի
 էրբ պիտի արժանի ըլլամ ըմ-
 բրունել քու վշտերդ ու ցաւա-
 կից ըլլալ քեզ, միշտ աչքիս
 առջև ու սրտիս մէջ ունենալով
 զանոնք: Տո՛ւր, հզօր Տիրուհի,
 որ գիշեր ցորեկ լամ այնչափ
 ծանրակշիռ մեղքերս, որ քեզի
 աստնկ ցաւ պատճառեցին, որ-
 պէս զի լալով, սիրելով, յու-
 սալով ու վրադ ցաւակցելով
 մեռնիմ, քեզի հետ յաւիտեան
 ապրելու համար:



ԺԴ.

Յիսուսս սուրբ գերեզմանիս
մէջ կը դրուէի.

Յիսուս իմ գթած, որ իմ սիրոյս համար միայն յանձն առիր այսպիսի ցաւալից ճամբայ մը ըմբռնեալ, քեզ երկիր պագանեմ թաղեալ և եղեալ ի սուրբ գերեզմանի. բայց կ'ուզէի միանգամայն որ իմ սրտիս մէջ ամփոփուէիր, որպէս զի քեզի հետ միացեալ՝ այս սուրբ կրթութենէն ի նոր կեանս շնորհաց վերագառնամ, և սուրբ յարա-

տեղութեամբ կարենամ շնորհաց մէջ մեռնիլ: Տուր ինձ ապա որ քու ամենասուրբ չարչարանացդ արդեամբք՝ որ ինչուան հիմամտածեցի, իմ յետին կերակուրս վերջի վայրկենիս քու աստուածային մարմինդ ըլլայ. իմ վերջի բառերս, Յիսուս և Մարիամն ըլլան. վերջի շունչս խաչին վրայէն ինձ համար աւանդածիդ հետ միաւորի: Այս կերպով՝ կենդանի հաւատքով՝ հաստուն յուսով և վառ սիրով մեռնիմ քեզի հետ ու քեզի համար, որ գամ քեզի հետ թագաւորեմ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



ԱՂՕԹՔ

Ս. Բռնաշէնի դռնաշի.

Ապա ուրեմն Յիսուս, որ ինձ
համար և ոչ իսկ քեզի ներեցիր,
տալաւորէ՛ յիս քու չարչարանք-
ներդ, որպէս զի ո՛ւր որ դառ-
նամ քու վէրքերդ տեսնեմ, և
ուրիշ տեղ հանգիստ չգտնեմ՝
բայց ի քեզ և քու քաշած վըշ-
տացդ մտածման մէջ:



ԿՐԹՈՒԹԻՒՆ

ՋԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԵԱՆ

ՍՐՏԻՆ ՅԻՍՈՒՍԻ

Ամեն օր առաւօտ, ցորեկ, իրի-
կուն երբոր Հրեշտակ Տե՛ւն աղօթքը
կ'ընենք, սրտիւ Յիսուսի սիրոյն հետ
միաւորեալ՝ ըսենք.

Վառեալդ ի մեր սէր՝ սիրտ
առտուածեղէն,

Ի սէր քո վառեա ըզսիրտս
համօրէն:

ՎԱՐԴԱՐԱՆ

Ի պատիշ սրտին Յիսուսի.

300 օրուան ներողութիւն կը վառ-
տըկի ամեն անգամ ըսողը, և լիա-
կատար՝ ամիս մը ըսողը:

Ա.



Իրեւիդ իմ Յիսուս, երբոր քու ազնիւ սիրտդ կը մտածեմ եւ կը տեսնեմ զքեզ լի գթութեամբ ու քաղցրութեամբ առ մեղաւորս, ուրախութիւն կը զգամ սրտէս, և վստահութեամբ կը լեցուիմ որ զիս սիրով կ'ընդունես: Այն ինձ, սրչափ մեղք եմ ըրեր: Բայց հիմա Պետրոսի ու Մագդաղենացւոյ պէս կու լամ դառնապէս ու կ'ատեմ, որովհետեւ քեզի՝ անհուն բարւոյդ դէմ են: Այո՛, այո՛, տակը ինձ թողութիւն, և ո՛հ, մեռնիմ նախ այս կը խնդրեմ ազնիւ սրտիդ

Թեամբ կը լեցուիմ որ զիս սիրով կ'ընդունես: Այն ինձ, սրչափ մեղք եմ ըրեր: Բայց հիմա Պետրոսի ու Մագդաղենացւոյ պէս կու լամ դառնապէս ու կ'ատեմ, որովհետեւ քեզի՝ անհուն բարւոյդ դէմ են: Այո՛, այո՛, տակը ինձ թողութիւն, և ո՛հ, մեռնիմ նախ այս կը խնդրեմ ազնիւ սրտիդ

համար, մեռնիմ նախ քան թէ սիրտդ վիրաւորեմ, և զքեզ սիրելու համար միայն ապրիմ:

Մէկ Հոյս Դր և հինգ Փոքր հօր՝ Յիսուսի հինգ վիրաց և սրտին դիտման զուրթէ:

Ո՛վ քաղցրագուծ սիրտ Յիսուսիս,

Վառեա ի սէր քոյին եւ զիս:

(Այսպէս ըսէ ամեն հանգստեան վերջ):

Բ. Կ'օրհնեմ ու կը փառաւորեմ, Փրկիչ իմ Յիսուս, քու խոնարհ սիրտդ, և շնորհակալ կ'ըլլամ որ ինձ զայն օրինակ տալովդ, չէ թէ միայն ամեն փութով կը յորդորես անոր նմանիչ այլ և անհուն խոնարհութեամբ ճամբան ալ կը ցուցնես, կը շտկես ու կը դիւրա-

ցընեալ Կրչափ յիմար և ապե-
 րախա գտնուեր եմ և Մ՛հ, արչափ
 մուշտեր եմ. թող ինձ և Ոչ եւս
 հպարտութեամբս այլ խոնարհ
 սրտիւ ու խոնարհ գործովք
 կ'աւղեմ ետեւէդ գալ և խաղա-
 զութիւն և փրկութիւն ստա-
 նալ Գաւ զիս զօրացուրս որ օրհ-
 նեմ յաւիտեանքու սուրբ
 սիրտդ ։ Հայր մեր, Փառք ։ Ով
 քաղցրագոյն ։

Գ. Ար հիանամ Յիսուս համ-
 բերող սրտիդ, և շնորհակալ եմ
 այնչափ հրաշալի օրինակներուն
 համար՝ որ թողուցիր մեզ ան-
 յաղթ համբերութեամբ ։ Ար
 ցաւ իմ որ պարաստակ կը յան-
 դիմանեն անոնք իմ շափաղանց
 փափկութիւնս՝ սրով պղտի նե-
 զութեան մ'ալ չեմ համբերեր ։
 Ա՛վ սիրելի Փրկիչ իմ Յիսուս,
 լեցուր սիրտս վառ և հաստա-
 տուն սէր՝ նեղութիւն քաշելու,
 խաչ կրելու, մահանալու և ա-

պաշխարելու, որպէս զի Գող-
 գոթա քեզի հետ մեկտեղ ելնե-
 լով՝ հասնիմ քեզի հետ ի փառս
 և յերկնից ուրախութիւն ։ Հայր
 մեր, Փառք ։ Ով քաղցրագոյն ։

Գ. Բաւ ամենագթած սիրտդ
 աննեղով, սիրելի Փրկիչ իս
 կը սոսկամ իմ սրտէս, որ բռն-
 րովին քուկինիդ հակառակն է ։
 Թեթեւ բան մը կերայ մը, պըզ-
 տի հակառակ խօսք մը զիս մե-
 կեն կը խռովեն ու անհանգիստ
 կ'ընեն և Մ՛հ թող իմ յանցանքներս,
 և աուր ինձ շնորհքդ որ ասկէ
 ետեւ ս'ը և իցէ դժկամակու-
 թեանցս մէջ քու անխռով հե-
 զութեանդ հետեւ իմ և անան-
 կով յաւիտեանական սուրբ խա-
 զազութիւնը վայելեմ ։ Հայր
 մեր, Փառք Հօրս Ով քաղցրա-
 գոյն ։

Ե. Թող նաւագներ երգուին,
 Յիսուս, քու ամենառատ սրտիդ,
 որ յաղթող է մահու և գը-

Ժոխոցս վասն զի արժանի է և
 Նակ ես իմ երկչոտութիւնս
 տեսնելով՝ շփոթած մեացեր եմ,
 որ ամեն խօսքէ, ամեն մարդ-
 կային նկատմունքներէ կը վա-
 խեմ. բայց ալ ասանկ պիտի
 չըլլամ: Ար խնդրեմ քեզմէ ա-
 նանկ արիութիւն մը, որ աշ-
 խարհիս վրայ պատերազմելով
 ու յաղթելով, ուրախութեամբ
 յերկինս քեզի հետ պատկուիմ:
 Հայր մեր, Փառք, Ով ըստ-
 ցրասգոչք սիրտ:

Գարձիր առ Մարիամ, և զքեզ
 աւելի կերպով մը իրեն նուիրելով,
 և իւր մայրենի սիրոյն վաստակացած,
 ըսէ:

Քու ամենաբաղցր սրտիդ մե-
 ծամեծ արդեանց համար, տներ
 ինձ, ո՛վ մայր Աստուծոյ եւ
 մայր իմ, ճշմարիտ և հաստա-
 տուն սէր և ջերմեռանդութիւն
 Յիսուս որդւոյդ սրտին, որուն

մէջ ընկզմած բոլոր իմ խոր-
 հուրդներովս և իղձերովս, լաւ
 կատարեմ ամեն պարտքերս, և
 զուարթ սրտով միշտ ծառայեմ
 Յիսուսի, մանաւանդ այսօր:

Ա. Ղ. Օ Թ Զ

Առ սուրբ սիրտն Յիսուսի.

Ինչուն ո՛ւր հասաւ քու
 անհուն գթութիւնդ, Փրկիչ
 իմ ամենասիրելիդ Յիսուս: Ան-
 գին արեամբդ ու մարմնովդ
 երկնային սեղան մը պարզեւեւ-
 ցիր ինձ, զքեզ բոլորովին ինձի
 տալու համար: Ո՛վ զքեզ ստի-
 պեց այս աստիճան սիրոյ, բայց
 եթէ քու անբաւ սէրդ: Ո՛վ
 երկրագեղի սիրտ Փրկչին իմոյ
 Յիսուսի, վառարան մշտավառ
 աստուածային սիրոյն, ընդունէ

Հոգիս ամենասուրբ վերացդ մէջ,
որպէս զի այն սիրոյ դարոցին
մէջ սորվիմ սիրել նորէն այն
Աստուածն, որ հրաշալի նշան-
ներ տուած է ինձ իր սիրոյն.
Ամէն:

100 օրուան ներողութիւն շնորհուած
է Պիոս է սրբազան պապէն:

Հինգ Փառք. ամեն Փառք
Հօրին պետք է կրկնել. Ո՛վ
քաղցրագուծ սիրտ Յիսուսիս,
վառեա ի սէր քոյին և զիս:



ԵՕԹՆ ՆՈՒԷՐՔ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆԳԻՆ ԱՐԵԱՆ

500 օրուան ներողութիւն կ'առնու
ամեն անգամ ըսողը, և լիակատար
ամիս մը ըսողը:

Ա. Ո՛վ Հայր յաւիտենական
ես կը մատուցանեմ Յիսուսի
պատուական արեան արգիւնքը,
որ քու սիրական որդիդ է եւ
իմ աստուածային Փրկիչս, սի-
րելի մօրս սուրբ եկեղեցւոյ
տարածման ու փառաւորու-
թեան համար, և անոր երևե-
լի գլխոյն՝ Յիսուսի փոխանոր-
դին կենաց և յաջողութեան
համար, նոյնպէս եկեղեցական

իշխանաւորաց, եպիսկոպոսաց, հոգւոց հովիւներուն և ամեն սրբութեան պաշտօնէից համար: **Փառք Հօր.** Օրհնեալ և բարեբանեալ ըլլայ միշտ Յիսուս, որ իւր արեամբն զմեզ փրկեց:

Բ. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արգիւնքը, որ քու սիրական որդիդ է եւ իմ աստուածային Փրկիչս, թաղաւորաց և ուղղափառ իշխանաց խաղաղութիւն և միաբանութիւն պարգեւելու, սուրբ հաւատոյ թշնամեաց ճնշուելուն և քրիստոնէից երջանկութեանն համար: **Փառք. և այլն:**

Գ. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արգիւնքը, որ քու սիրական որդիդ է եւ իմ աստուածային Փրկիչս, անհաւատները լուսաւորելու, հերետիկոսները դարձնելու և մե-

ղաւորաց ալ դարձ տալու համար: **Փառք. և այլն:**

Դ. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արգիւնքը, որ քու սիրական որդիդ է եւ իմ աստուածային Փրկիչս, անոնց ամենուն համար՝ որոց համար որ պարտական եմ եւ կ'ուզես որ աղօթեմ: **Փառք:**

Ե. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արգիւնքը, որ քու սիրական որդիդ է եւ իմ աստուածային Փրկիչս, այս օրուան ամեն մեռնողներուն համար, որպէս զի փրկես գժախոց պատժէն և ընդունիս քու փառաց գառանգութեան մէջ: **Փառք:**

Զ. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արգիւնքը, որ քու սիրական որդիդ է և

իմ աստուածային Փրկիչս, անոնց համար՝ որ այս անգին գանձը կը սիրեն, և ինձ հետ երկրպագութեամբ կը պատուեն զնոյն, և կ'աշխատին անոր ջերմեռանգութիւնը տարածելու:
Փառք:

է. Ո՛վ Հայր յաւիտենական, ես կը մատուցանեմ Յիսուսի պատուական արեան արդիւնքը, որ քու սիրական որդիդ է եւ իմ աստուածային Փրկիչս, իմ ամեն հոգեւոր և ժամանակաւոր պիտոյիցս համար, քաւարանի հոգւոց օգնութեան համար, և աւելի անոնց՝ որ մեծապէս ջերմեռանգ եղեր են Յիսուսի սուրբ արեան՝ որ մեր փրկութեան գինն է և սուրբ Աստուածածնայ եօթը խոյինս:
Փառք:

Օրհնեալ ըլլայ արիւնն Յիսուսի, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Ս. Ղ. Օ. Թ. Բ.

Ս. Օ. Գ. Ո. Ս. Տ. Ի. Ն. Ո. Ս. Ի.

Առ սուրբ Հոգին.

Ե՛կ արդ, ո՛վ աստուածային Ս. Հոգի, միսիթարութիւն տրրամեցելոց, ուրախութիւն սրբտից և թեթևութիւն ի նեղութեան: Ե՛կ, ո՛վ սրբութիւն մեղաւորաց, վարդապետ խոնարհաց, հայր գթած որբոց, ամբողջութիւն տկարաց և քաջալերութիւն աղքատաց: Քու շնորհացդ զօրութեամբ հոգւոյս խորերը թափանցէ, ձեռք տուր տկարութեանս քու ամենազօր ձեռօքդ, վառէ գաղջութիւնս քու սուրբ սիրովդ, փրկաւէտ կերպով խոցէ սիրտս քու ամենաքաղցր գթութեանդ նետով, տուր ինձ ճաշակել երկնաւոր

Քաղցրութեանդ մէկ կաթիլը,
որպէս զի ասկէ վերջ զգուծիմ
ամեն զգայական զուարճութիւն
ներէ և միայն հոգւոյ ուրա-
խութիւնները վայելեմ. Ամէն:

Եօթը Փար+ Հօր, որպէս զի Հո-
գին սուրբ իւր շնորհքները մեզի
պարգեւէ:



ՀԱՄԱՌՕՏ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ի պատիւ ցաւագին սրտին

Մարիամոյ:

500 օրուան ներողութիւն:

Ա. Յաւակից կ'ըլլամ քեզ, ցա-
ւագին Մարիամ, այն վշտաց
համար՝ որ քու փափուկ սիրտդ
կրեց Սիմէոն ծերունւոյն մար-
դարէութենէն: Սիրեցեալ մայր,
ասանկ ցաւագին սրտիդ համար՝
տուր ինձ խոնարհութեան ա-
ռաքինութիւնն և Աստուծոյ
սուրբ վախը: Ողջոյն:

Բ. Յաւակից կ'ըլլամ քեզ ,
 ցաւագին Մարիամ, այն վշտաց
 համարս որ քու զգայուն սիրտդ
 կրեց Յգիստոս փախչելուդ ու
 բնակութեանդ միջոց : Սիրեցեալ
 մայր, այդ ցաւագին սրտիդ
 համար՝ տուր ինձ առատաձեռ-
 նութեան առաքինութիւնը, մա-
 նաւանդ աղքատաց, և կարեկ-
 ցութեան շնորհքը : Ողջոյն :

Գ. Յաւակից կ'ըլլամ քեզ ,
 ցաւագին Մարիամ, այն վշտացդ
 համար, որ դիւրագորով սիրտդ
 կրեց՝ զՅիսուս սիրական որդիդ
 կորսնցուցած ատենդ : Սիրե-
 ցեալ մայրս ասանկ խռոված
 սրտիդ համար՝ տուր ինձ մա-
 քրութեան առաքինութիւնը ,
 և գիտութեան շնորհքը : Ող-
 ջոյն :

Դ. Յաւակից կ'ըլլամ քեզ ,
 ցաւագին Մարիամ, այն կսկը-
 ծիդ համարս որ զգաց քու մայ-
 րենի սիրտդ՝ երբոր հանդի-

պեցար Յիսուսի՝ որ խաչը ուսը
 կ'երթար : Սիրեցեալ մայրս քու
 աղնիւ սրտիդ համար՝ որ այդ-
 չափ վերաւորեցաւ, տուր ինձ
 համբերութեան առաքինու-
 թիւնը, և արիութեան շնորհ-
 քը : Ողջոյն :

Ե. Յաւակից կ'ըլլամ քեզ ,
 ցաւագին Մարիամ, այն մար-
 տիրոսութեանդ համարս որ քու
 մեծ սիրտդ կրեց Յեսուսի հո-
 դեվարութեան ներկայ եղած
 ժամանակդ : Սիրեցեալ մայր,
 քու ասանկ մարտիրոսացած
 սրտիդ համար ըլլայ, տուր ինձ
 զգաստութեան առաքինութիւ-
 նը, և խոհականութեան շնորհ-
 քը : Ողջոյն :

Զ. Յաւակից կ'ըլլամ քեզ , ցա-
 ւագին Մարիամ, այն խոցիդ
 համար, որ քու գլծած սիրտդ
 զգաց՝ երբոր տիգաւ խոցեցին
 զՅիսուս և իւր ամենասիրելի
 սիրտը վերաւորեցին : Սիրեցեալ

մայր , քու սրտիդ համար որ
անանկ վիրաւորեցաւ՝ տուր ինձ
եղբայրական սէր , և հանձարեղ
ըլլալու շնորհքը : Ողջոյն :

Է. Յաւակից կ'ըլլամ քեզ ,
ցաւագին Մարիամ , այն կսկը-
ծին համար , որ քու սիրելի
սիրտդ զգաց՝ Յիսուսի թաղման
ժամանակ : Սիրեցեալ մայր , քու
սրբազան սրտիդ համար՝ որ
չափազանց կսկիծներով լեցուե-
ցաւ , տուր ինձ ջանասիրու-
թեան առաքինութիւնը , և ի-
մաստութեան շնորհքը : Ողջոյն :

Մայր ցաւագին , աղաչեա՛ լման
մեր , զի արժանի լիցուք խոստ-
մանցն Քրիստոսի :

Եօթը Ողջոյն զուրցէ , ամեն Ողջոյն-
նէն ետքն աւելցնելով . Սրբոսկի մայր ,
Յիսուսի վերեւը սրտիս՝ եղբայրս :
500 օրուան ներողութիւն կ'առնու
անգամ մը ըսողը , իսկ ամիս մը ը-
սողը՝ լիակատար :

Ա Ղ Օ Թ Ք

Աս ամենասուշրբ կոյսն .

Կարելի՞ է արդեօք , թագուհի՛
սուրբ , սիրեցեալ մայր իմ Մա-
րիամ , որ քեզմէ շնորհք մը չըն-
դունիմ : Իո՞ւ չե՞ս , ո՞վ տիրուհի
որ Աստուծոյ մայր եղար եւ
թագուհի երկնից՝ որպէս զի
օգնես խեղճերուն , թշուառաց ,
տառապելոց և ամենէն մեծ մե-
ղաւորաց : Իո՞ւ չե՞ս փաստաբան
և ապաստան խեղճ մեղաւորաց ,
ով ամենասուրբ մայր : Ուրեմն
հաւատամ որ չես ուզեր ու
պիտի շուզես օգնել ինձ և ա-
զատել զիս ամեն նեղութիւն-
ներէս , խեղճութիւններէս ու
տառապանքներէս , և զիս իմ
անօրէնութեանս անդուհիւն մէջ
պիտի թողուս : Արչափ շնորհք ,
արչափ գթութիւն և հրաշքներ

ըրեր ես, կ'ընես ու պիտի ընես
 ինչուան վերջի գատասանանին
 ահաւոր օրը, ո՛վ ամենագլխած
 մայր իմ Մարիամն Արչափնե՛րը
 մեծամեծ վտանգներէ փրկեր
 ես, որչափները մահուընէ ազատեր
 ես, որչափներուն յարուժիւն
 պարգևեր ես, որչափները
 գժոխքէն խաչքներ ես, Ապա
 ինչպէս հաւատամ որ չես ուզեր
 օգնել ու ազատել զիս Ա՛հ, թագուհի
 ամենասուրբ ինչպէս հաւատամ
 թէ կ'ուզես որ այս ձայնն ըլլայ,
 թէ կը ձգես ու չես օգներ
 խեղճերուն նեղելոց ու
 տառապեալ մեղաւորաց: Ա՛հ,
 չըլլայ թէ այս բան ըսուի,
 թէ խեղճ ողորմելի, նեղեալ
 և յեանն տառապանաց մէջ,
 և ահաւոր փորձութիւններէ
 պաշարուած ին մէկը՝ անգամ
 մը անհամար արցունքով և
 ցաւով սրտի աղաչեց զքեզ,
 և չուզեցիր ազատել զինքը,
 և

ոչ իսկ ձայնին լսել: Ա՛հ, ամենասուրբ
 կոյս, ինչպէս հաւատամ թէ
 կ'ուզես որ ըսուի, թէ փոխուեր
 ես և անգթութեամբ հետս
 կը վարուիս և թէ անասկէ
 վերջը մայր ողորմութեան
 և գանձարան ամենայն շնորհաց
 չես: Ըսես պիտի թէ՛ թող ըսեն
 որ չուզեց ոչ մտիկ ընել
 ոչ ազատել՝ վասն զի ապերախտ
 ու մեղաւոր էր ինդրողն: Երաւ է
 և ամենաիրաւ, ո՛վ ամենագլխած
 մայր իմ Մարիամն որ ապերախտ
 եմ և ամապրիշտ և ամենէն
 գէշ մարդն որ աշխարհ
 եկեր է և կամ ասկից ետքը
 պիտի գայ, բայց դու Տիրուհի
 և մայր գթութեան, ըսէ՛ս ու
 բ՛ն զրոյ աւելի պէտք է գութ
 ցուցնես՝ թէ ոչ մեղաւորաց: Մանաւանդ
 թէ այս բանիս համար որ
 ապերախտ ու ամապրիշտ
 գանուեր եմ և որդիդ անհուն
 կերպով վշտացուցեր ես,

պէտք չէ՞ աղաչես ինձ համար
 և օգնես ինձ, և մայրենի եւ
 ողորմած պաշտպանութեանդ
 տակ զիս առնուս: Ա՛հ, մայր
 իմ գթած, պիտի երթամ առ
 կէ առանց քեզմէ խնդիրքս ըն-
 դունելու: Թողո՞ւս պիտի որ
 երթամ առջեւէդ՝ առանց մխի-
 թարելու զիս և ազատելու այս
 ահաւոր նեղութիւններէս եւ
 արտաքին ու ներքին փորձու-
 թիւններէս. ուրեմն պիտի՞ վառն-
 տե՞ս զիս երեսէդ առանց ա-
 ռատածեանութեամբդ ամեն շը-
 նորհք ամեն գթութիւն և ողոր-
 մութիւն ինձ համար առնելու,
 որոնց պէտք ունիմ: Է՛հ, չըլ-
 լայ երբէք այս բանս. բու և
 Յիսուս որդւոյդ սրտուոյն հա-
 մար կ'աղաչեմ, իրեն վիրաց,
 թափած անգին արեան, սիրե-
 լի և ողորմած սրտին, իրեն
 ձաղանաց, փշով պսակուելուն,
 ցաւաբին խաչելութեան, խաւ-

չին վրայի հոգեվարութեանն
 ու մեռնելուն համար ըլլայ:

Ազատէ զիս մայր գթու-
 թեան, տես տառապանքներս
 որ անանկ ծանր են՝ որ ալ չեմ
 կրնար վերցնել. ազատէ զիս,
 Մարիամ, ազատէ զիս, մայր
 իմ, դուստր հնազանդ երկնա-
 լոր Հօր, գերագոյն մայր
 յաւիտենական Բանին մարմնա-
 ցելոյ, հարսն ամենամաքուր Հօ-
 գւոյն սրբոյ, կենդանի տաճար
 ամենասուրբ Երրորդութեան,
 թագուհի կուսանաց, մեծափառ
 Տիրուհի երկնի և երկրի, մայր
 գթութեան, ապաստան ապա-
 հով, փաստաբան և նեցուկ Ա-
 դամայ տառապեալ խեղճ և մե-
 զաւոր որդւոց, գանձապետ ա-
 մենայն շնորհաց: Արդեն իսկ գի-
 տես, որ թէպէտ ուշանաս ա-
 զատել զիս, օրէ օր վստահու-
 թիւնս կ'աւելնայ վրագ. անոր
 համար կը յորդորեմ բոլոր ա-

րարածները շնորհակալ ըլլալ
քեզ այժմ և միշտ՝ իբրև ար-
դէն իսկ թէ ինձ թէ ուրիշնե-
րու համար առած ըլլայիր ա-
մեն հոգեւոր և ժամանակաւոր
շնորհքները, ի մեծ փառս Աս-
տուծոյ, և ի կատարեալ սըր-
բուծիւն իմ անձիս և ազգակա-
նացս և մտերմաց յաւիտեանս
յաւիտենից. Ամէն:

Ա Ղ Օ Թ Բ


Առ Միքայել հրեշտակապետ.

Փառաւորեալ սուրբ հրեշտա-
կապետ Միքայել, պաշտպանէ
զիս այս աշխարհիս մէջ, եւ
մահուանս ատեն սատանային
որոգայթներէն. ա՛ռ ինձ համար
շնորհք խոնարհութեան, որպէս
զի հպարտութիւնը զիս դժոխք
չտանի:

Ա Ղ Օ Թ Բ

Առ պահապան հրեշտակն.

Սուրբ հրեշտակդ իմ պահա-
պան ճշմարիտ բարեկամս, ա-
զատէ զիս զԱստուած վշտացը-
նելու վտանգներէն: Ո՛հ գթա՛
օգնէ ինձ և պատրաստէ զիս
աղէկ ընդունելու զսուրբ Հա-
ղորդութիւնը: Ընդունէ ինձ
համար շնորհք Հաւատոյ, Յու-
սոյ, Սիրոյ և խոնարհութեան
սրտի, որպէս զի գամ քեզի
հետ մէկտեղ օրհնեմ ու վայե-
լեմ յերկինս զԱստուած:



ՅԱԻՔ ԵՒ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆՔ

ՍՐԲՈՅՆ ՅՈՎՍԵՓ Ա. Յ

Ա. Յաւակից կ'ըլլամ քեզ,
 ո՛վ փառաւորեալ սուրբ Յովսէփ,
 մաքուր փեսայ սրբոյ կուսին
 Մարիամու. ինչպէս որ սաստիկ
 եղաւ սրտիդ հոգն ու նեղու-
 թիւնն երբոր կասկածի մէջ ին-
 կար արձակելու համար քու
 անարատ հարսդ, ասանկ ալ ան-
 սլառմէ լի եղաւ ուրախութիւնդ՝
 երբոր հրեշտակն յայտնեց քեզ
 մարդեղութեան գերագոյն խոր-
 հուրդը. կ'օրհնեմ ու կը փա-
 ռաւորեմ զամենասուրբ Երբոր-
 դութիւնը, աղաչելով զքեզ որ
 ընդունիս ինձ համար սուրբ
 մահ: Փառք Հօր: Սուրբ Յով-
 սէփ, հոգեարքիս ասե՛ն քովս

գանուէ Յիսուսի ու Աստուածածնայ հետ:

Բ. Յաւակից կ'ըլլամ քեզ, ով փառաւորեալ սուրբ Յովսէփ, մաքուր փեսայ սրբոյ կուսին Մարիամու, այն ցաւոցն համար՝ որ քաշեցիր այնչափ աղքատութեամբ ծնած տեսնելով զմանկացեալն Յիսուս, բայց կը մխիթարուիմ այն ուրախութեանդ համար որ ունեցար երբոր լսեցիր հրեշտակաց բաղմոնութեան երգը, ու երբ տեսար այն ամենապայծառ գիշերուան փառքը. կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ որ ընդունիս ինձ համար շնորհք որ ախաշխարհիս վրայ Յիսուսի սիրոյն համար վշտաց համբերելէս վերջ, գամ ընդ քեզ վայելեմ յերկինս. **Փառք Հօր. Մայրք Յովսէփ:**

Գ. Յաւակից կ'ըլլամ քեզ, ով մեծ նահապետ սուրբ Յով-

սէփ, այն ցաւոց համար՝ զոր զգացիր Սիմէոն ծերունւոյն մարգարէութեանէն՝ լսելով Յիսուսի ու Մարիամու կրեւիքները, բայց ուրախութեամբ լեցուեցար այնչափ բաղմոնութեան փրկութիւնը լսելով, կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կը խնդրեմ քեզմէ՝ որ ամենուս ինձ համար շնորհք ինչուան ի մահ յարատեւելու ապէկութեան մէջ: **Փառք Հօր. Մայրք Յովսէփ:**

Գ. Յաւակից կ'ըլլամ քեզ, հաւատարիմ պահապան Յիսուսի Ս. Յովսէփ, այն զգացած ցաւոցդ համար՝ երբ հարկ եղաւ որ յԵգիպտոս փախչիս, կը մխիթարուիմ այն ուրախութեամբդ որ ունեցաւ սիրտդ՝ տեսնելով Եգիպտոսացւոց կուսքերուն կործանիւը. կ'օրհնեմ ու կը փառաւորեմ զամենասուրբ Երրորդութիւնը, և կ'աղաչեմ

որ ընդունիս ինձ համար շը-
նորհք համակերպութեան ընդ
Աստուծոյ կամաց և այս աշ-
խարհիս բարեքներէն հրաժարե-
լու: **Փառք Հօր. Սոսրք Յով-
սեփ:**

Ե. Յաւակից կ'ըլլամ քեզ,
հրեշտակ ի յերկրէս սիրեցեալ
սուրբ Յովսէփ, այն ցաւոց հա-
մար՝ որ խռովեց սիրտդ Եզրայ-
ասուէն դառնալու ասենդ Ար-
քելայոսին վախէն. բայց հրեշ-
տակէն ապահովցած, Յիսուսի
ու Մարիամայ հետ Նազարէթ
գարձար մեծ ուրախութեամբ,
կ'օրհնեմ ու կը փառաւորեմ
զամենասուրբ Երրորդութիւնը,
և կը խնդրեմ քեզմէ՝ որ ըն-
դունիս ինձ համար խաղաղու-
թիւն խղճի թէ բոլոր կենացս
մէջ և թէ ևս առաւել մա-
հաւան վայրկենիս: **Փառք Հօր
Սոսրք Յովսեփ:**

Զ. Յաւակից կ'ըլլամ քեզ,


օրինակ ամենայն սրբութեան՝
նահապետդ փառաւորեալ սուրբ
Յովսէփ, այն ցաւոց համար՝ որ
խոցեց սիրտդ երբ Յիսուս ա-
ներեւութացաւ, բայց մեծա-
պէս ուրախացար երբոր երեք
օրէն տաճարին մէջ զինքը գտար.
կ'օրհնեմ ու կը փառաւորեմ
զամենասուրբ Երրորդութիւնը,
և կ'աղաչեմ քեզի՝ ընդունէ ինձ
համար աւելի մահ՝ քան թէ
Աստուծոյ շնորհքը մէյմ'ալ կոր-
սընցնեմ: Բայց թէ որ մեծ դըժ-
բաղդութեամբ մը կորուսանե-
լու ալ ըլլամ, տուր որ բարի
ու սուրբ խոստովանութեամբ
մը շուտով նորէն ձեռք ձգեմ,
որպէս զի ետքը քեզի հետ յեր-
կինս վայելեմ: **Փառք Հօր.
Սոսրք Յովսեփ:**

Է. Խոնարհութեամբ առջեւդ
ինկած, ո՛վ ամենամաքուր փե-
սայ աստուածամօր կուսին Մա-
րիամու, կը հիանամ գերազանց.

արքուժիւնդ տեսնելով: Գու,
 սի սուրբ Յովսէփ, շուշան ես
 ամենասպայծառ, դու ես սլա-
 հապան այն ախրոջ՝ որ յերկնից
 յերկիր իջաւ յանձն առնելով
 մարդ ըլլալ և իմ փրկիչս: Աս-
 րախանամ տեսնելով զքեզ այս-
 չափ ամենասուրբ Երրորդու-
 թենէն սլատուեալ և սիրելի
 եղած: Բոլոր սրտովս կը սի-
 րեմ զքեզ, զիս քեզ կ'ընծայեմ,
 ու քեզ կը յանձնեմ: Գու իմ
 փաստաբանս եղիր հրեշտակաց
 թագուհւոյն և քու անարատ
 հարսիդ առջև. ընդունէ անոր
 Որդիէն թողուժիւն իմ ամեն
 մեղացս. քովս գտնուէ մահուան
 վայրկենիս և առաջնորդէ ինձ
 երկնից արքայուժիւնը գալու
 վայելելու. Ամէն:

Աղաչեա վասն մեր սուրբ
 հայր Յովսէփ, զի արժանի լի-
 ցուք խոստմանցն Քրիստոսի:

Պիոս թ. սլապը 100 օրուան նե-
 րողուժիւն շնորհեց անոնց՝ որ հի-
 ւանդուժեան առեննին այս աղօթքը
 կ'ընեն, իսկ շորեքշաբաթի օրն ընո-
 ղին՝ 500 օրուան, և լիակատար
 ամիս մը և սրբոյն տօնին ընողին.
 քաւարանի հոգւոց զիտման համար
 ալ կրնայ ըլլուիլ:



Ա Ղ Օ Թ Ք

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՌԱՐԵԱԼՍ

Պետրոս և Պողոս .

Ո՛վ փառաւորեալ գլուխ աւաքելոց Պետրոս և Պողոս, մեծաւ ջերմեռանդութեամբ կ'ազաչենք ձեզ, որ ընդունիք մեզի համար ի Հոգւոյն սրբոյ կենդանի հաւատք, հաստատուն յոյս, և կատարեալ սէր առ Աստուած և առ մարդիկ: Ձեզ կը յանձնենք սուրբ եկեղեցին և անոր գլուխը, և հոգւոց դարձը, որպէս զի շուտով ըլլայ մի հօտ և մի հովիւ:

ԱՅ Ս. Ստանիսլաւոս .

Ծանր նեղութեանց, և ամենակարեւոր պիտոյից մէջ, և մանաւանդ խստացեալ մեղաւորները դարձընելու համար շատ օգտակար է սրբոյն Ստանիսլաւոսի պաշտպանութիւնը խնդրել. Պիոս է և Լեւոն ԺԱ քահանայապետները որպէս զի աւելի յորդորեն հաւատացեալները այս սրբոյն ջերմեռանդութեանը՝ ներողութիւններ դրին:



այր երկնաւորս երկնից արքունեացդ եւ ամեն արարածոց հետ

այժմ և միշտ և յաւիտեանս քեզ կը մատուցանենք Յիսուս

սի անդին արիւնն ի շնոր-
հակալութիւն այնչափ բարեաց՝
որ պարգեւեր ես քու հաւա-
տարիմ ծառայիդ և մեր պաշտ-
պանին սրբոյն Ստանիսլաւոսի,
և մանաւանդ այն կարողու-
թեանն համար՝ որով զօրացու-
ցիր զինքը և որով միշտ արիա-
բար յաղթող եղաւ ամեն անե-
րեւոյթ թշնամեաց, անանկ շը-
նորհակալ կ'ըլլանք իբրև թէ
մեզի ամենուս պարգեւած ըլ-
լայիր բոլոր այս շնորհքները :
Փառք Հօր :

Բան յաւիտենական մարդ ե-
ղեալ, բոլոր երկնից արքունեաց
և ամեն արարածոց հետ՝ այժմ
և միշտ և յաւիտեանս քեզ կը
մատուցանենք քու հարսիդ
սուրբ եկեղեցւոյ արդիւնքները
քու ամբաւ արդեանցդ հետ
խառնած՝ ի շնորհակալութիւն
այնչափ բարեաց՝ որ պարգեւե-
ցիր քու հաւատարիմ ծառայիդ

և մեր պաշտպանին սրբոյն Սա-
նիսլաւոսի, և մասնաւորապէս
այն իմաստութեանն համար՝ ո-
րով լուսաւորեցիր զինքը, որ-
պէս զի սիրով քու սրբազան
վարքիդ նմանի, որով եղաւ քու
կատարեալ պատկերդ, որ մեր
սիրոյն համար խաչեցար. ա-
նանկ շնորհակալ կ'ըլլանք իբրև
թէ մեզի ամենուս շնորհած ըլ-
լայիր նոյն պարգեւները : **Փառք
Հօր :**

Սուրբ Հօգի, բոլոր երկնից
արքունեաց և ամեն արարածոց
հետ՝ այժմ և միշտ և յաւի-
տեանս քեզ կը մատուցանենք
Յիսուսի տեառն մերոյ անհուն
արդիւնքն ի շնորհակալութիւն
այնչափ բարեաց՝ որ պարգեւե-
ցիր քու հաւատարիմ ծառայիդ
և մեր պաշտպանին սրբոյն
Ստանիսլաւոսի, մասնաւորապէս
այն սիրոյն համար՝ որով զինքը
վառեցիր, որով աշխարհիս վրայ

քու սիրովդ ապրելով՝ հասաւ
 երկնից արքայութիւնը կատա-
 րեալ սիրով միշտ զքեզ սիրելու.
 անանկ շնորհակալ կ'ըլլանք՝ իբ-
 րեւ թէ մեզի ամենուս շնորհած
 ըլլայիր նոյն պարգևները: Փառք
 Հօր:

Ո՛վ կատարեալ հեռեւօղ Յի-
 սուսի, ճշմարիտ ջերմեւանդ
 մեր մօրը Աստուածածնայ, եւ
 մեր փառաւորեալ փաստա-
 բանը սուրբ Ստանիսլաւոս, թէ-
 պէտ անարժան ենք մենք առ
 քեզ դիմելու, բայց քու կարեկ-
 ցութեանդ վրայ | վստահացած՝
 այժմ եւ միշտ կ'աղաչենք զքեզ
 որ սուրբ Աստուածածնայ ար-
 դեամբքն եւ միջնորդութեամբ,
 բոլոր հրեշտակայ եւ սրբոց, եւ
 մանաւանդ Յիսուսի տեառն մե-
 ռոյ անհուն արդեամբք, եւ քու
 ընդունելի միջնորդութեամբդ
 ընդունիս մեզի համար ամենայն
 շնորհք եւ կարեւոր պարգևները՝

ամենքնիս սուրբ եւ կատարեալ
 ըլլալու համար ինչպէս Հայրն
 երկնաւոր, եւ Հաղորդութեան
 գերագոյն պարգևէն օգուտ քա-
 ղելու, որով կարենանք գալ եր-
 գել երկինքն ի յաւիտեանս
 Աստուծոյ գերագոյն ողորմու-
 մութիւնը: Հայր մեր, Ողջոյն,
 Փառք Հօր:

Աղաչեա վասն մեր սուրբ
 Ստանիսլաւոս, զի արժանի լի-
 ցուք խոստմանցն Քրիստոսի:



Ա Ղ Օ Թ Ք

Առ սուրբ Լուսինի Կոնճակա.

Ո՛վ սուրբ Լուսինի հրեշտակային վարքով զարդարեալ, ես քու անարժան ջերմեռանդդ քեզ կը յանձնեմ մասնաւոր կերպով հոգւոյս ու մարմնոյս անբիծ մաքրութիւնը: Ա՛յդ ազգեմ քու հրեշտակային մաքրութեանդ համար՝ յանձնէ՛ զիս անարատ գաւառինն Յիսուսի, և իւր ամենասուրբ մօր՝ որ է կոյս կուսանաց, և պահէ զիս ամեն ծանր մեղքերէ: Մի՛ թողուր որ թեթեւ իսկ անմաքրութեան արամ՝ ըլլայ յիս, այլ երբ փորձութեանց մէջ զիս կը տեսնես կամ մեղանչելու վտանգի մէջ, հեռացո՛ւր սրտէս ամեն երկրաւոր խորհուրդներն, և յաւիտենականութեան ու Յիսուսի

խաչեցելոյ յիշատակը սիրտս զարթուցանելով՝ տպաւորէ սրբաթիւ մէջ Աստուծոյ սուրբ վախը ու վառէ զիս Աստուծոյ սիրով, որպէս զի քեզի նմանելով երկրիս վրայ՝ արժանի ըլլամ քեզի հետ վայելել զԱստուած յերկինս. Ամէն: Հայր մեր. Ողջոյն:

100 որումն ներողութիւն ունի:



ԽՈՐՀՈՒՐԴԻՔ ՎԱՐԴԱՐԱՆԻ

ԽՈՐՀՈՒՐԴԻՔ ՈՒՐՍԽՈՒԹԵԱՆ

Երկուշաբթի եւ Հինգշաբթի

Առաջին խորհուրդը ուրախութեանն է՝ թէ ինչպէս սուրբ Աստուածածին Գաբրիէլ հրեշտակէն աւետիս ընդունեցաւ թէ զՅիսուս պիտի ծնանի: — Պէտք է խնդրել Աստուածածնէն՝ որ մեզի համար Յիսուսի սէրն ընդունի:

Երկրորդը՝ թէ ինչպէս սուրբ Աստուածածին երբոր լսեց Ս. Եղիսաբեթի յղի ըլլալը՝ մէկէն դնաց առնաւ եւ հրեք ամիս անոր տունը կիցաւ: — Պէտք է խնդրել որ մեզի ալ այցելութիւն ընէ, եւ իր սէրը մեզի պարգևէ:

Երրորդը՝ թէ ինչպէս ծննդեան ժամանակը հասած ըլլալով Աստուածածին ծնաւ զՓրկիչն մեր Բեթլե-

հեմի մէջ կէս գիշերը եւ դրաւ զինքը ի խանձարուս: — Խնդրելու է արհամարհութիւն աշխարհի:

Չորրորդը՝ թէ ինչպէս Աստուածածին զՅիսուս մեր տէրը տաճար տարաւ, եւ Սիմէոն ծերունւոյն գիրկը յանձնեց: — Խնդրելու է խղճի մաքրութիւն:

Հինգերորդը՝ թէ ինչպէս Աստուածածին կորսնցնելով աստուածորդին՝ երեք օր փնտռելէն վերջը՝ տաճարին մէջ գտաւ զինքը որ քահանայից հետ կը վիճէր, դեռ աասնըմէկ տարեկան: — Խնդրելու է շնորհք շուտով խոստովանելու թէ որ մեղաց մէջ էյնանք:

ԽՈՐՀՈՒՐԴԷ ՅԱԻՈՑ

Երեքշաբթի և Ոչրբար

Առաջին ցաւոց խորհուրդն է՝ թէ ինչպէս Յիսուս ի պարտիզին աղօթելով արիւն քրտնեցաւ: — Խնդրելու է շնորհք աղօթից, և ցաւ գործած մեղքերուն համար:

Երկրորդը՝ Յիսուսի Պիղատոսին պալատը ծեծուիլը: — Մաքրութիւն, և մեռուցումն զգայարանաց:

Երրորդը՝ թէ ինչպէս Յիսուս սայրասուր փուշերով պսակուեցաւ: — Խոնարհութիւն ամենուն հետ:

Չորրորդը՝ թէ ինչպէս Յիսուս ի մահ դատապարտուեցաւ, և առաւելագոյն նախատանաց ու ցաւոց համար՝ խաչափայտը կոնակը ծանրաբեռնեցին: — Սէր խաչի:

Հինգերորդը՝ թէ ինչպէս Յիսուս Գողգոթա լեռան գլուխն ելլալով՝ խաչին վրայ դամուեցաւ տուրք եւեռնելով, ուր հոգին աւանդեց ցաւազին մօրն առջև: — Յիշել Յիսուսի և Աստուածածնայ քաջածներն, և ջանալ մեռնիլ աշխարհի:

ԽՈՐՀՈՒՐԴԷ ՓԱՌԱԽՈՐՈՒԹԵԱՆ

Չորեքշաբթի, Ծարար և

Կիրակի.

Առաջին փառաւորութեան խորհուրդն է՝ թէ ինչպէս Յիսուս իր շարշարուելէն ու մեռնելէն երեք օր ետքը՝ փառաւոր ու յաղթական կերպով յարութիւն առաւ: — Սուրբ կենօք կենդանանալ:

Երկրորդը՝ թէ ինչպէս Յիսուս յարութիւն առնելէն քառասուն օր վերջը՝ հրաշալի յաղթանակաւ երկինք վերացաւ, իր ամենասուրբ մօր և բոլոր աշակերտաց առջև: — Փափաք աշխարհէ բաժնուելու եւ արքայութեան հասնելու:

Երրորդը՝ թէ ինչպէս Յիսուս իր Հօրն աջակողմը նստելով խրկեց զսուրբ Հոգին վերնատունն, ուր ժողովուեր էին առաքեալք Աստուածածնայ հետ: — Հոգւոյն սրբոյ շնորհները:

Չորրորդը՝ թէ ինչպէս սուրբ Կոյ-
սըն Յիսուսի համբարձմանէն քանի
մը տարի ետքը կնքեց կեանքը և
հրեշտակներուն հետ երկինք վերա-
ցաւ: — Բարի մահ:

Հինգերորդը՝ թէ ինչպէս սուրբ
Կոյսը պսակուեցաւ երկինք իր ուր-
դիէն. և միանգամայն մտածելու է
ամենայն սրբոց փառքը: — Յարա-
տեալ թիւն ի բարին՝ յաւիտենական
փառաց հասնելու համար:



Պ Ա Ղ Ա Տ Ա Ն Ք

Ս Ռ Մ Կ Ո Յ Մ Ն

Մ Ա Ր Ի Ա Մ



էր ողորմեա:

Քրիստոս ողորմ:

Տէր ողորմեա:

Քրիստոս ողորմ:

Քրիստոս լուր մեզ:

Քրիստոս ունկն դիր մեզ:

Հայր երկնաւոր Աստուած. Ողորմեա մեզ:

Որդի փրկիչ աշխարհի Աստուած. Ողորմեա մեզ:

Հոգիդ սուրբ Աստուած, Ողորմեա մեզ:

Սուրբ Երրորդութիւն մի Աստուած. Ողորմեա մեզ:

Սրբուհի Մարիամ. Աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին. Աղաչ.

Սուրբ կոյս կուսանաց. Աղաչ.

Մայր Քրիստոսի. Աղաչ.

Մայր աստուածային շնորհաց. Աղաչ.

Մայր մաքրութեան. Աղաչ.

Մայր զգաստութեան. Աղաչ.

Մայր անարատ. Աղաչ.

Մայր անբիծ. Աղաչ.

Մայր սիրելի. Աղաչ.

Մայր սքանչելի. Աղաչ.

Մայր արարչին. Աղաչ.

Մայր Փրկչին. Աղաչ.

Կոյս իմաստուն. Աղաչ.

Կոյս գերլյարգոյ. Աղաչ.

Կոյս գերահռչակ. Աղաչ.

Կոյս կարող. Աղաչ.

Կոյս հաւատարիմ. Աղաչ.

Հայելի արդարութեան. Աղաչ.

Աթոռ իմաստութեան. Աղաչ.

Պատճառ մերոյ խնդութեան. Աղաչ.

Անօթ հոգեւորական. Աղաչ.

Անօթ պատուական. Աղաչ.

Անօթ շքեղ եռանդեան. Աղաչ.

Վարդ խորհրդական. Աղաչ.

Աշտարակ դաւթեան. Աղաչ.

Աշտարակ փղոսկրեայ. Աղաչ.

Տուն ոսկեղէն. Աղաչ.

Տապանակ ուխտի. Աղաչ.

Դուռն երկնից. Աղաչ.

Ասող առաւօտեան. Աղաչ.

Բժշկութիւն հիւանդաց. Աղաչ.

Ապաստան մեղաւորաց. Աղաչ.

Մխիթար վշտացելոց. Աղաչ.

Օգնական քրիստոնէից. Աղաչ.

Թագուհի հրեշտակաց. Աղաչ.

Թագուհի նահապետաց. Աղաչ.

Թագուհի մարգարէից. Աղաչ.

Թագուհի առաքելոց. Աղաչ.

Թագուհի մարտիրոսաց. Աղաչ.

Թագուհի վարդապետաց. Աղաչ.

Թագուհի կուսանաց. Աղաչ.

Թագուհի ամենայն սրբոյ. Աղաչ.

Թագուհի գերծ ի սկզբնական
մեղաց. Աղաչ.

Քառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի. Խնայեա ի
մեղ Տէր:

Քառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի. Լուր մեղ
Տէր:

Քառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի. Ողորմեա
մեղ:

Քրիստոս Լուր մեղ:

Քրիստոս ունկն դիր մեղ:



Ա. Ղ. Օ Թ. Ք.

Աստուած, որ անճառելի ուղորմութեամբ քո ոչ միայն մարդ, այլ և որդի մարդոյ լինել հաճեցար, և առ ի կուսէն ծնընդեամբ, անժամանակ ծնունդդ հօր ի յերկինս՝ ընտրեցեր քեզ մայր ի յերկրի: Տուր մեղ ազաչեմք սրտի մտօք փառաւորել զսխառակ նորա, և հրաշափառ մայրութեան նորա լինել գովաբանողք, և խոնարհութեամբ հպատակ կալ նորին գերահրաշմեծութեանն, որ զքեզ Հոգւով սրբով յղացաւ, և կուսութեամբ ծնաւ, որում հնազանդ կացեր յերկրի, տէր մեր Յիսուս Քրիստոս, որ Թագաւորես ի յերկինս ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն ի յաւիտեանս. Ամէն:

Երեք Փառք Հօր առ ամենասուրբ Երրորդութիւնն, երեք Ողջոյն քեզ

առ սուրբ Աստուածածին, և Հռէ-
րակ Տէառն. Հայր մեր մը պաշտ-
պան սուրբերուն. Հայր մեր մը քա-
ւարանի հոգւոց համար:

Անկողիս մտնէրէն առաջ.

Շնորհակալ եղիր Աստուծոյ՝ առած
շնորհքներուդ վրայ: Քննութիւն խըղ-
ճի մտաց ըրէ և զղջում, և ըսէ 11-15
երեսները դրուած Հաւատոյ, Յու-
սոյ, Սիրոյ և Զղջման ներգործու-
թիւնները:



Ա Ղ Օ Թ Զ

Բարի մահ ոչնեկաշոռ համար,

Անկողին երթալու ատեն ըսէ:

Տէր իմ Յիսուս, Աստուած
բարութեան, Հայր սղորմու-
թեան, քու առջեւդ կ'իյնամ
խոնարհ սրտիւ, զղջմամբ եւ
պատկառանօք, քեզ կը յան-
ձնեմ իմ ետքի օրս և ինչ որ
անոր ետեւէն կու գայ:

Երբ ստուերներս անշարժ մնա-
լով՝ ինձ իմացնեն որ այս աշ-
խարհի կեանքս լմրննալու մօ-
տիկ է, սղորմած Յիսուս խղճա
վրաս:

Երբ ձեռուրներս դողդղալով

Թմբեկով ալ չկարենան խաչե-
լուծիւնը բռնել, եւ ակամայ
ձեռքէս իյնայ ցաւոց մահճիս
վրայ, ողորմած Յիսուս խղձա
վրաս:

Երբ աչուրներս մթընցած ու
այլայլած մեռնելու վախէն՝ քու
վրադ դարձրնեն իրենց խեղճ
ու կիսամեռ նայուածքը, ողոր-
մած Յիսուս խղձա վրաս:

Երբ շրթուներս պաղած՝
դողդոջելով քու սուրբ անունդ
վերջի անգամուն գուրցեն, ո-
ղորմած Յիսուս խղձա վրաս:

Երբ երես դեղընցած ու կա-
պուտացած քովի եղողներու ցաւ
ու վախ բերէ, մաղերս ալ մա-
հուան քրտինքով թրջած արն-
կուլին գլխուս վրայ, մահուանս
մօտիկնալը հասկըցնելով, ողոր-
մած Յիսուս խղձա վրաս:

Երբ ականջներս գոցուելու
ըլլան, մարդու խօսք չլսեն, այլ
քու ձայնդ լսելու բացուին՝ որ

անդառնալի վճիռը սխալի տայ,
որով սխալ որոշուի յաւիտե-
նական վիճակս, ողորմած Յի-
սուս խղձա վրաս:

Երբ միտքս տակնուվրայ ե-
ղած ահուելի ու զարհուրելի
մտածմունքներով՝ մահաբեր
տրամուծեան մէջ իյնայ, եւ
հոգիս ալ ալէկոծեալ ըրած յան-
ցանքներու համար և քու ար-
դարուծեանդ վախէն, խաւա-
րային հրեշտակին հետ կռուը-
տի՝ յուսահատուծեան ան-
գունդը չիյնալու համար, ողոր-
մած Յիսուս խղձա վրաս:

Երբ խեղճ սիրտս հիւանդու-
թեանս ցաւերէն ճնշուած՝ մեռ-
նելու վախով բռնուելի և յոգնի
թշնամեոյս գէմ պատերազմե-
լէն, ողորմած Յիսուս խղձա
վրաս:

Երբ վերջի արցունքս, թա-
փեմ՝ նշան մեռնելուս, քաւու-
թեան զոհի տեղ ընդունէ՝ որ-

պէս զի իբրեւ ողջակէզ մը ա-
պաշխարու թեան աւանդեմ հո-
գիս. և այն ահաւոր վայրկենին՝
ողորմած Յիսուս խղճա վրաս:

Երբ աղգականներս ու սիրելի
բարեկամներս քովս շարուած՝
խղճան ցաւագին վիճակիս վրայ,
և պաղատին առ քեզ ինձ հա-
մար, ողորմած Յիսուս խղճա
վրաս:

Երբ ամեն զգայարանքներս
կորսնցնեմ, բոլոր աշխարհ աշ-
քիս առջև աներևոյթ ըլլայ, ես
ալ վերջի հոգեւարու թեան մէջ
և մահուան տաղնապով տան-
ջուիմ տքամ, ողորմած Յիսուս
խղճա վրաս:

Երբ սրախ ետքի հառաչանք-
ները բռնադատեն հոգիս մար-
մնէս ելլելու, ընդունէ իբրեւ
նշան մը իմ կարօտիս՝ որ ու-
նիմ առ քեզ գալու, և գու ո-
ղորմած Յիսուս խղճա վրաս:

Երբ հոգիս մարմնէս բաժնուի

և զմարմինս թողու գեղնած,
պաղած, անկենդան, այս իմ
քայքայումս ընդունէ իբրեւ
նուէր մը՝ որ ես կ'ընծայեմ աս-
տուածու թեանդ, և այն ատեն
ողորմած Յիսուս խղճա վրաս:

Վերջասպէս, երբ հոգիս երև-
նայ քու առջիդ, ու տեսնէ աս-
տուածու թեանդ անմահ փառ-
քը մի՛ ձգեր զիս քու երեսէդ.
արժանի ըրէ ողորմութեան
թեւերդ տարածել ինձ, սրպէս
զի յաւիտեան երգեմ գովա-
սանքդ, ողորմած Յիսուս խղճա
վրաս:

Ա Ղ Օ Թ Ք

Տէր Աստուած, որ մեզի մեռ-
 նելու վճիռ տալով՝ ծածկեցիր
 մեզմէ վայրկեանն ու ժամը,
 առնոր որ կենացս ամեն օրը ար-
 դարու թեամբ ու սրբու թեամբ
 անցնելով՝ արժանի ըլլամ քեզ
 սիրելի եղած ելլել այս աշխար-
 հէս, արդեամբք տեառն մերոյ
 Յիսուսի Քրիստոսի. որ կեայ և
 թագաւորէ ընդ քեզ և ընդ
 Հոգւոյդ սրբոյ: Ամէն:

100 օրուան ներողութիւն մէկ
 անգամ ըսողին. լիակատար ներո-
 ղութիւն՝ ամիս մը ամբողջ ըսողին:

Հայր յաւիտենական, քեզ կը
 մատուցանեմ Յիսուսի անգին
 արիւնն ի պէտս սուրբ եկեղեց-
 ւոյ:

100 օրուան ներողութիւն ունի
 իւրաքանչիւր անգամ ըսողը:

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒ-
 ԹԻԻՆ



Հ.
 Վ ստեղ-
 ծ եր է
 զքեզ ու
 աշխարհ
 գրեր:
 Պ. Աս-
 տուած:

Հ. Աստուած ո՞վ է:
 Պ. Տէր և արարիչ երկնի և
 երկրի:
 Հ. Ի՞նչ վախճանաւ ստեղծե՞ր
 է զքեզ Աստուած:
 Պ. Այս աշխարհիս մէջ զինքը

Ճանչնալու, սիրելու և ծառայելու համար, և յետոյ արքայութեան մէջ զինքը վայելելու:

Հ. Աստուած ո՞ւր է:

Պ. Երկինքը, երկիրս ու ամէն տեղ է:

Հ. Աստուած մէկ է թէ շատ:

Պ. Աստուած մէկ է, բայց անձինքն երեք. Հայր, Արդի եւ Հոգի սուրբ, Երրորդութիւն անուամբ:

Հ. Այս երեք անձինքն երեք Աստուած են:

Պ. Ո՛չ, այլ մէկ Աստուած. վասն զի երեքն ալ նոյն աստուածային էութիւնն ու գոյութիւնն ունին:

Հ. Այս երեք անձանց մէջէն ո՞րն աւելի մեծ է և ամենակարող:

Պ. Ըստ ամենայնի երեքն ալ հաւասար են:

Հ. Երեք անձանցմէ ո՞րը մարդ եղաւ:

Պ. Երկրորդն, որ է Արդին:

Հ. Մարդ ըլլալու համար ի՞նչ ըրաւ:

Պ. Մեզի պէս մարմին և հոգի առաւ յարգանդի սրբոյ կուսին Մարիամու՝ Հոգւով սրբով:

Հ. Ի՞նչ անուն առաւ Արդին Աստուծոյ՝ երբ մարդ եղաւ:

Պ. Յիսուս Քրիստոս փրկիչ մեր, Ճշմարիտ Աստուած եւ Ճշմարիտ մարդ:

Հ. Ինչո՞ւ մարդ եղաւ:

Պ. Իր մահուամբն զմեզ կորստենէ ազատելու և յաւիտենական կենաց արժանի ընելու համար:

Հ. Հիմայ ո՞ւր է Յիսուս:

Պ. Իբրև Աստուած ամէն տեղ է, իսկ իբրև Աստուած ու մարդ երկինքն ու ամենասուրբ Հաղորդութեան մէջ է:

Հ. Ի՞նչ է սուրբ Հաղորդութիւնը:

Պ. Հացի և գինւոյ տեսակաւ՝

Քրիստոսի մարմինն ու արիւնն,
հոգին և աստուածութիւնն է:

Հ. Ի՞նչ կը հասկընաս հացի
և գինւոյ տեսակ ըսելով:

Պ. Այս ինքն՝ արտաքին տես-
քը, գոյնը, համը, հոտն և քա-
նակը:

Հ. Սրբագործած նշխարին մէջ
հացի էութիւն կա՞յ:

Պ. Ո՛չ, որովհետև Առէք կե-
րայք խօսքերով բոլորովին փո-
խուած ու Յիսուսի մարմին ե-
ղած է:

Հ. Հաղորդութիւնը կտարե-
լով՝ Յիսուսի մարմինն ալ կը
բաժնուի՞:

Պ. Ո՛չ, այլ միայն հացին տե-
սակը կամ երեւոյթը կը կո-
տորուի:

Հ. Եթէ մարմինը չի բաժ-
նուիր, ո՞ր կտորին մէջ կը
մնայ:

Պ. Ամէն մասին մէջ ալ կա-
տարեալ կը մնայ:

Հ. Աղէկ կերպով հաղորդուե-
լու համար ի՞նչ պէտք է:

Պ. Ս. Հաղորդուողը ծով
պէտք է ըլլայ կէս գիշերէն:
Բ. Թէ որ մահու չափ մեղք ու-
նի՝ խոստովանի: Գ. Հաւատոյ,
յուսոյ, խոնարհութեան եւ
սիրոյ ներգործութիւններն ընէ
առ սրբագործեալն Յիսուս:

Հ. Աղէկ խոստովանելու հա-
մար քանի՞ բան պէտք է:

Պ. Հինգ. Ս. Պէտք է լաւ մը
քննել խիղճը: Բ. Զղջալ զԱս-
տուած վշտացնելուն համար:
Գ. Խոստանալ ա՛լ չվշտացնելու
զԱստուած: Դ. Պարզ զուրցել
խոստովանա՜օր բոլոր մեղքե-
րը: Ե. Խոստովանա՜օր դրած
ապաշխարանքը կատարել:

Հ. Ով որ առանց զղջման խոս-
տովանի կամ ամչնալէն մահու-
չափ մեղք մը պահէ, ի՞նչ մեղք
ըրած կ'ըլլայ:

Գ. Սրբապղծութիւն. այնպէս

որ եթէ նորէն շխտատովանի
նոյն խոստովանանքը, դժոխք
կ'երթայ:

Հ. Ո՞վ կ'երթայ դժոխք:

Պ. Ով որ մահուչափ մեղաց
մէջ կը մեռնի:

Հ. Ի՞նչ կ'ընեն դժոխքին մէջ:

Պ. Ահաւոր տանջանքներ կը
քաշեն, Աստուծոյ զրկեալ, եւ
գեւերուն հետ մէկտեղ յաւի-
տեան կրակի մէջ կ'այրին:

Հ. Որո՞նք արքայութիւն կ'եր-
թան:

Պ. Անոնք որ Աստուծոյ շնոր-
հաց մէջ կը մեռնին եւ քաւա-
րանին մէջ քաւելու մեղք մը
չունին:

Հ. Ի՞նչ կ'ընեն արքայութեան
մէջ:

Պ. Հրեշտակաց եւ սրբոց հետ
յաւիտեան զԱստուած կը վայ-
լեն:

Հ. Արքայութիւն երթալու
համար ի՞նչ բանի պէտք է հա-
ւատայ բրիստոնեայ մը:

Պ. Այն ամէն բանին՝ որ կը
հաւատայ կաթողիկէ ուղղա-
փառ սուրբ եկեղեցին:

Հ. Ի՞նչ բաներ պարտական է
սորվիլ:

Պ. Ինչ որ Հաւատամքին, Աս-
տուծոյ եւ Եկեղեցւոյ պատուի-
րանաց եւ Հայր մերին մէջ կայ:

Հ. Ի՞նչ պարտական է ընել:

Պ. Աստուծոյ եւ Եկեղեցւոյ
պատուիրանները պահել:

Հ. Քանի՞ եւ որո՞նք են Աս-
տուծոյ պատուիրանները:

Պ. Տասն են. Ա. Ես եմ քու
տէր Աստուածդ, չըլլայ թէ
ինծմէ զատ ուրիշ Աստուած ու-
նենաս: Բ. Կուռք չչինես եւ
պաշտես: Գ. Պարտաւ տեղ Աս-
տուծոյ անունը բերանդ չաւ-
նուս: Դ. Տօները սուրբ պահէ:

Ե. Հայրդ եւ մայրդ պատուէ:

Զ. Մի՛ սպանաներ: Է. Մի՛ շնար:

Ը. Մի՛ գողանար: Թ. Մի՛ սուտ
վկայեր: Ժ. Մի՛ ջանկար ըն-

դիլ:

կերիգ կնոջ և անոր ունեցած
բաներուն:

Հ. Քանի՞ և որո՞նք են Եկե-
ղեցւոյ պատուիրանները:

Պ. Վէց են. Ս. Ամէն կիւրա-
կէ և ասն օրեր պատարագ
տեսնել: Բ. Հրամայեալ պահ-
քերն ու ծովերը պահել: Գ.
Տարին գոնէ մի անգամ խոս-
տովանիլ: Դ. Գոնէ մի անգամ
Ջատկի տօնին հաղորդուիլ: Ե.
Ընչից տասանորդը տալ եկեղեց-
ւոյ: Զ. Արգելեալ ժամանակ-
րուն հարսնիք չկատարել:

Հ. Ի՞նչ պէտք է ընէ բրիս-
տոնեայն սուրբ ըլլալու համար:

Պ. Պէտք է իւր կրկն յաղթէ
Հոգւոյն սրբոյ շնորհօք. և ա-
նոնց հակառակ առաքինու-
թիւնները գործէ Յիսուսի օրի-
նակին նման միայն Աստուծոյ
շնորհօք, որ շարունակ աղօթ-
քով և սուրբ Հաղորդութեան
ստէպ մօտենալով կրնանք ստա-

նալ: Պէտք է յաղթէ, նախ հը-
պարտութեան՝ Աստուծոյ վա-
խովը եւ խոնարհութեամբ. Բ.
ազահութեան՝ խորհրդոց շնոր-
հօք և առատաձեռնութեամբ.
Գ. անառակութեան՝ շնորհիւ
իմաստութեան եւ մաքրու-
թեամբ. Դ. բարկութեան՝ շնոր-
հիւ գիտութեան և համբերու-
թեամբ. Ե. որկրամոլութեան՝
շնորհիւ մտաց առաջնորդու-
թեան և սակաւասկտութեամբ.
Զ. նախանձու՝ գթութեամբ և
եղբայրական սիրով. Է. ծուլու-
թեան՝ արիութեամբ և ջանա-
սիրութեամբ:

Հ. Քանի՞ են սուրբ խորհուրդ-
ները, և ի՞նչ արգիւնք ունին:

Պ. Եօթն են. Ս. Մկրտու-
թիւնը բրիստոնեայ կ'ընէ զմարդ:
Բ. Իրոշմը շնորհք կու տայ կա-
տարեալ բրիստոնեայ ըլլալու:
Գ. Հաղորդութիւնը հոգին կը
անուցանէ, և Աստուծոյ շնոր-
հաց մէջ կը պահէ: Ասլաշխա-

բուժիւնը մեղքերը կը բաւէ:
 Ե. Հիւանդաց օժումն ոյժ կու
 տայ աղէկ մեռնելու, և շատ
 անգամ մարմնոյ առողջութիւն
 ալ կը շնորհէ: Զ. Քահանայու
 թեան կարգն իշխանութիւն
 կու տայ աստուածային սաշ-
 տամունքը կատարելու: Է. Պը-
 սակը շնորհք կու տայ խա-
 ղաղութեամբ և սրբութեամբ
 ապրելու, եւ քրիստոնէաբար
 որդիները մեծցնելու:

Հ. Ի՞նչ պէտք է ընել Աս-
 տուծոյ ողորմութեան արժա-
 նի ըլլալու համար:

Պ. Պէտք է ողորմութեան
 գործերը կատարել, որովհետեւ
 այսպէս կ'ըսէ Յիսուս. Երանի՛
 ողորմաց, զի նոքա ողորմու-
 թիւն գտցեն: Այս գործերէն
 եօթն մարմնաւոր են, եօթն ալ
 հոգեւոր: Մարմնաւորներն են.
 Ա. անօթիներու հաց տալ. Բ.
 ծարաւներու ջուր տալ. Գ.
 զգեստ չունեցողները հագուե-

ցընել. Դ. օտարներու բնակու-
 թիւն տալ. Ե. հիւանդաց այ-
 ցելութիւն ընել. Զ. բանտար-
 գելոց այցելել. Է. մեռեալ-
 ները թաղել: — Հոգեկաններն
 են. Ս. խորհուրդ տալ տարա-
 կուսելոց. Բ. ագիտաց սորվե-
 ցընել. Գ. մէղաւորները խրա-
 տել. Դ. վշտացեալները մխի-
 թարել. Ե. անիրաւութանց
 համբերութեամբ տանիլ. Է.
 աղօթել առ Աստուած կենդա-
 նեաց և մեռելոց համար:

Հ. Ի՞նչ պէտք է ընել շմեղան-
 ջելու համար:

Պ. Նախ պէտք է առիթնե-
 րէն փախչիլ, պահել զգայա-
 րանքները, և ստէպ խոստովա-
 նիլ: Բ. Ստէպ աղօթել, մանա-
 ւանդ փորձութեանց մէջ: Գ.
 Մահ, գատաստան, դժոխք ու
 արքայութիւն մտածել, և այս
 մտածութեամբք բոլոր գոր-
 ծերն ընել:

Ի Ղ Ձ Ք

Առ Մարիամ կոյս անարատ

Ո՛վ սիրելիք Մարիամ,
Իմ բերկրութիւն եւ հեշտանք,
Յամենայն ժամ զքո զանուէն
Կամիմ կոչել անմոռաց:

Կամիմ կըրել զայդ անուէն
Ըզցանկալին Աստուծոյ
Տըստաւորեալ ի հոգիս,
Տըստաւորեալ ի սըրտիս:

Կամիմ կարգալ Մարիամ
Յայգուն յերկինքս ծագել,
Եւ յարեւուն մըտանել
Կամիմ կարգալ տակաւին:

Ո՛վ անուշակ Մարիամ,
Ի ու ես դու իմ մայր քաղցրիկ,
Եւ ես զանուէն քո կալայց
Յամենայն ժամ ի շըրթունս:

Եթէ անձն իմ վըշտահար
Կայցէ ի բիւր տառապանս,
Բոլոր բարիքս եւ հանգիստ
Քո սուրբ անուէնդ եղիցի:

Թէ թողու թեան են յերկուանք
Ահ եւ դողումն ի սըրտիս,
Ինձ յանուանէ՞դ եկեացէ
Անդորր եւ ջեր դեղեցիկ:

Իր թոխային թէ սսոխ
Ձանձն իմ մարտիւ փորձեացէ,
Ձայնեալ ըստէս Մարիամ՝
Հալածեցից ի փախուստ:

Եւ յամենայն ի վըտանդս
Յեղյեղեցից Մարիամ,
Մայր է ինձ նա, ես որդի,
Ըզնա երբեք թողից ոչ:

Արիագոյն իմ խրատոյս
Յետին ոգւոյս տագնապի
Լիցի գոչել Մարիամ,
Ձայն կարգալով մեռանել:

Ըզսիրատարփ զայն անուէն
Յամենայն ժամ կարգալով
Ուրախ եղէց կենդանեալս,
Ուրախութեամբ և մեռայց:

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ

Հայոց կաթողիկոսի ողբեր-
գոչքիչն անձին գղջացելոյ, եւ
բողոք իշրաքանչիւրոյ դիմի
խոստովանաբար:

Աշխարհ ամենայն,
Առ իս նայեցեալ
Ախտակից լերուք:
Բանամ ըզըրթուհս,
Բարբառեմ լեզուաւս,
Բողոքեմ զանձնէս.
Տէր ողորմեա. տէր ողորմեա.
տէր ողորմեա:
Գող եղէ մեղաց,
Գրառլ կորըստեան,
Գուբ ինձ փորեցի:
Դաւեցի զանձն իմ,
Դաւաճանեցի,
Դարան գործեցի. տէր ողորմեա:

Երբեմն էի լոյս,
Եւ այժմ եմ խաւար
Եւ ըստուեր մահու:
Զիարդ պատմեցից
Զթիւ մեղաց իմոց,
Զի բազում են յոյժ. տէր ող:
Երկինք և երկիր,
Եկայք ողբացէք
Եղկելի զանձն իմ:
Ընտրեցի ըզչարն,
Ընկալայ կամաւ
Ըզհոյլըս մեղաց. տէր ողորմեա:
Թաթաւիմ արլմով,
Թաւալիմ ի մեղս,
Թօթափել չկարեմ:
Ժանտ ախտիւ լըցեալ
Ժահահոտ եղէ
Ժամանակ բազում. տէր ողորմ:
Ի բաց մեկնեցայ
Ի սուրբ խորհրդոց,
Ի բարեաց գործոց:
Լաւ վարկաւ անձն իմ
Լուսոյն հեռանալ,
Լինել ընդ խաւար. տէր ողորմ:

Խորհուրդըք չարին
 Խաբեն ըզհոգիս :
 Խորասոյց առնեն :
 Ծածկեն անգընդօք :
 Ծիծաղին դէորմամբս :
 Ծանակ զիս առնեն, տէր ողորմ :
 Կամաւ կորացայ
 Կարկամեալս անձամբ ,
 Կանգնել ոչ կարեմ :
 Հուր մեղաց կիզող
 Հըրդեհեաց որ յիս
 Հոգեւոր բարիս, տէր ողորմ :
 Զաղկեցայ մեղօք ,
 Զաղեցին տեսողք :
 Զանձրացաւ հոգիս :
 Դեղի դառնու թեան
 Դողեալ ի սըրտիս՝
 Դամբար իմ շիջաւ, տէր ողորմ :
 Զաշակմամբ մեղաց
 Զաշեցի ըզմահ :
 Զոխս աղքատացայ :
 Մեռեալ եմ հոգւով ,
 Մոլորեալ մըտօք :
 Միայն կամ մարմնովս տէր ող :

Յորոգայթ մահու
 Յորսողին անկայ :
 Յաղթեցայ յախտից :
 Նետից թըշնամւոյն
 Նըշաւակ եղէ ,
 Նոր միշտ խոցոտիմ, տէր ողորմ :
 Շուրջ պատեալ զինև
 Շունք բազում եղեն ,
 Շաղախին արեամբս :
 Որս եղէ չարին :
 Ուռկանաւ մեղաց
 Որսացաւ զանձն իմ, տէր ողորմ :
 Զարաչար վըշտօք
 Զարչարի անձն իմ :
 Զունիմ դադարու մն :
 Պարտապան գըտայ
 Պարտուց յանցանաց
 Պարտեալս ի մեղաց, տէր ողորմ :
 Զանամ զըղջանալ ,
 Զերանիմ դարձեալ :
 Զեռնում հրով մեղաց :
 Ռաբբի կոչեցայ ,
 Ռակայ անուանիմ
 Ռամկական վարուք, տէր ողորմ :

Սիրով ցանկութեամբ,
 Սաստիկ բարկութեամբ,
 Սիրտ իմ խոցեալ է:
 Վիրօք յանցանայ
 Վըշտանայ հոգիս,
 Վարանեալ շըրջիմ, տէր ողորմ:
 Տիրեցին ինձ չարք,
 Տարագիր հանին
 Տիրական գըրկացն:
 Բաբունւոյն բարւոյ
 Բախճական ձայնին
 Բոտինս ոչ լուայ, տէր ողորմեա:
 Ցանկութիւն չարեաց
 Ցանկալի դիմօք
 Ցաւեցոյց զաչս իմ:
 Խիւրաբանչիւրոց
 Խիւամամբ խուռն ախաից
 Խիւծեալ է հոգիս, տէր ողորմ:
 Փութացիր անձն իմ
 Փախչել ի չարեաց,
 Փափաքել բարեաց:
 Քեզ միշտ մերձ ծանիր
 Քուն մահու եկեալ,
 Քըննող դատաւոր, տէր ողորմ:

Աստուածածնին բարեխօսու-
 թեամբն, յիշեա տէր և ողոր-
 մեա:

ՏԵԱՌԵ ՆԵՐՍԵՍԻ

Հայոց կաթողիկոսի երգ աղօ-
 քական ի դեմս արքոյ երրորդոշ-
 քեան, և իշրաքանչիշրոյ դիմի
 երրորդոշքեանն առանձնակի:

Աւաւօտ լուսոյ
 Արեգակն արդար,
 Աւ իս լոյս ծագեա:
 Բըղխումն ի հօրէ,
 Բըխեա ի հոգւոյս
 Բան քեզ ի հաճոյս:
 Քանձդ ողորմութեան,
 Քանձիդ ծածկելոյ
 Քըտող զիս արա:

Գուռն ողորմութեան
 Գաւանողիս բաց,
 Գասեցո վերնոցն:
 Երբեակ միութիւն,
 Եղեւոց խնամող,
 Եւ ինձ ողորմեա:
 Զարթիր տէր յօգնել,
 Զարթո ըզթըմբրեալս,
 Զուարթնոց նրմանել:
 Էդ հայր անըսկիղբն,
 Էակից որդի,
 Է միշտ սուրբ հոգի:
 Ընկալ զիս գըթած,
 Ընկալ ողորմած,
 Ընկալ մարդասէր:
 Թագաւոր փառաց,
 Թողութեանց տուող,
 Թող ինձ ըզյանցանս:
 Ժողովող բարեաց,
 Ժողովեա և զիս
 Ժողովս անգրանկաց:
 Ի քէն տէր հայցեմ
 Ի մարդասիրէդ
 Ինձ բըթըշկութիւնս:

Լեր կեանք մեռելոյս,
 Լոյս խաւարելոյս,
 Լուծանող ցաւոյս:
 Խորհըրդոց գիտող,
 Խաւարիս շնորհեա
 Խորհուրդ լուսաւոր:
 Ծընուեդ հօր ծոցոյ,
 Ծածկելոյս ստուերաւ
 Ծագեա լոյս փառաց:
 Կենարար փըրկիչ,
 Կեցո ըզմեռեալս,
 Կանգնեա զգըլորեալս:
 Հաստեա հաւատով,
 Հաստատեա յուսով,
 Հիմնեցո սիրով:
 Զայնիւս աղաչեմ,
 Զեռօքս սլաղաախմ,
 Զիր բարեաց շնորհեա:
 Ղամբարմամբ լուսոյ,
 Ղեկավար ճարտար,
 Ղօղեալս ամրացո:
 Ճառագայթ փառաց,
 Ճանասարհ ինձ ցոյց
 Ճեմել ի յերկինս:

Միածինըդ հօր,
 Մոյժ զիս յառադասա
 Մաքուր հարսանեացդ:
 Յորժամ գաս փառօք
 Յահագին աւուրն,
 Յիշեա զիս Քրիստոս:
 Նորոգող հնութեանց,
 Նորոգեա և զիս,
 Նորոգ զարդարեա:
 Ենորհատու բարեաց,
 Ենորհեա զքաւութիւն
 Ենորհեա զթողութիւն:
 Աւրախացո տէր
 Ազւոյս փրկութեամբ,
 Այր վասն եմ ի սուգ:
 Զար մըշակողին
 Զար սերմանցն որ յիս
 Զորացո զպրտուղն:
 Պարգևիչ բարեաց,
 Պարգեւեա իմոց
 Պարտեացս թողութիւն:
 Զուր շնորհեա աչացս,
 Զերմ հեղուլ արտօսր՝
 Զընջել ըզյանցանս:

Ռե տինըդ քաղցու,
 Ռամ հոգւոյս արբո,
 Ռահ ցոյց ինձ լուսոյ:
 Սէր անուն Յիսուս,
 Սիրով քով ճըմլեա,
 Սիրա իմ քարեղէն:
 Վասըն գըթութեան,
 Վասն ողորմութեան,
 Վերըստին կեցո:
 Տենչալի տեսլեամբ
 Տուր ինձ յագենալ
 Տէր Յիսուս Քրիստոս:
 Բաբունդ երկնաւոր,
 Բոտեա զաշակերտս
 Բամից երկնայնոց:
 Յօղ արեան քոյ տէր
 Յօղեա ՚ի հոգիս,
 Յընծասցէ անձն իմ:
 Իիւծեալըս մեղօք
 Իիւծեալ աղաչեմ՝
 Իիւսեա յիս բարիս:
 Փըրկիչ բոլորից,
 Փութա զիս փրկել
 Փորձութեանց մեղաց:

Քաւիչ յանցանաց,
Քաւեա զօրհնաբանս
Քեզ երգել ըզփառս:

Աստուածածնին բարեխօսու-
թեամբն, յիշեա տէր և ողորմեա:



ՄԱՂԹԱՆՔ

զօրաշորք ընդդէմ արհաշրաց
գիշերայնոյ՝ սրբոյն Գրիգորի
նարեկացոյ:

Ընկալ քաղցրութեամբս տէր
աստուած հզօրս զդառնացողիս
ղաղաչանս: Մատիր գթութեամբ
առ սլատկառեալս դիմօք: Փա-
րատեա ամենապարգև զամօ-
թական տխրութիւնս: Բարձ
յինէն ողորմած զանբերելի ծան-
րութիւնս: Անշրպետեա հեա-
րաւոր զմահացու կրթութիւնս:
Աւարեա միշտ յաղթող պիա-
բողին հաճութիւնս: Բացա-
դրեա վերնային զմոլելոյն մա-
ռախուղ: Կնքեա կեցուցիչ

զկորուսչին ընթացմունս : Տը-
 րուեա ծածկատես զըմբռնողին
 չար գըտմունս : Խորտակեա ան-
 քընին զմարտողին գիմեցմունս :
 Տեառնագրեա քո անուամբդ
 զլուսանցոյց երդ յարկիս : Պար-
 փակեա քո ձեռամբդ զառա-
 սաղ տաճարիս : Գծագրեա քո
 արեամբդ զմուտ սեմոց սենե-
 կիս : Աերպացո զքո նշանդ ի
 հետս ելից մաղթողիս : Ամլացո
 քո աջովդ զհանգստեանս խշտի :
 Մաքրեսցես ի հաղբից զծածկա-
 րան անկողնոյս : Պահեսցես քո
 կամօքդ զտառասլեալ անձն ոգ-
 ւոյս : Անխարդախ արասցես
 զքո շնորհեալ շունչ մարմնոյս :
 Աացուցես շրջափակ զպար զօ-
 րուդ երկնայնոյ : Աարգեսցես ի
 գիմի ընդդէմ գիւացն դասու :
 Տուր հանգիստ բերկրութեան
 մահահանգոյնս նիրհման ի խո-
 րութեան գիշերիս բարեխօսու-
 թեամբ հայցուածոց սրբոյ աս-

տուածածնիդ և ամենայն ըն-
 տրելոց : Ամփոփեալ պարուրեա
 զպատուհան տեսութեանց զգա-
 յարանացս իմաստից անզար-
 հուրելի զետեղմամբ՝ ի ծփա-
 կան խռովութեանց կենցաղա-
 կան զբաղմանց, անըջական ե-
 րազոց, խօլականաց ցնորից,
 յիշատակաւ քոյ յուսոյդ՝ ան-
 վնասելի պաշտպանեալ : Եւ
 սթափեալ վերստին ի ննջմանէ
 ծանրութեան ամենազգաստ ար-
 թնութեամբ, հոգենորոգ զուար-
 թութեամբ՝ ի քեզ արձանա-
 ցեալ, զայս ձայն մաղթանաց
 բուրմամբ հաւատոց քեզ ամեն-
 օրհնեալ թագաւոր փառաց
 անձառից՝ փառաբանողաց եր-
 կնագուամար խմբից երգակցեալ
 յերկինս առաքել : Զի դու փա-
 ռաւորեալ ես յամենայն արա-
 րածոց յաւիտեանս յաւիտե-
 նից, ամէն :

Աղօթք զօրաշարք

արքայն Գրիգորի նաբեկացոյ :

Որդի աստուծոյ կենդանւոյ
 օրհնեալ յամենայնի, հօրդ ա-
 հաւորի անքնին ծնունդ: Որ
 տկարանայ առ ի քէն և ոչ ինչ:
 Որ ի ծագել անասուեր նշուլից
 ողորմութեան քոյ փառաց՝ հա-
 լին մեղք, հալածին դեք, ջնջին
 յանցանք, խղին կապանք, խոր-
 տակին շղթայք, կենդանաճնին
 մահացեալք, բժշկին հարուածք,
 ողջանան վերք, բառնին ապա-
 կանութիւնք, տեղի տան ար-
 խորութիւնք, նահանջին հեծու-
 թիւնք, փախնու խաւարն, մե-
 կնի մէգն, մերժի մառախուղն,
 փարատի մռայլն, սպառի աղ-
 ջամուղջն, վերանայ մութն,
 գնայ գիշերն, տարագրի տաղ-

նապն, չքանան չարիքն, հալածին
 յուսահատութիւնք, եւ թա-
 գաւորէ ձեռն քո ամենակար,
 քաւիչդ ամենայնի: Որ ոչ եկիր
 կորուսանել զմարդկան ոգիս,
 այլ կեցուցանել. թող ինձ զան-
 թիւ չարիսն իմ՝ բազում՝ ողոր-
 մութեամբդ. զի դու միայն ես
 յերկնի անձառ և յերկրի անզը-
 նին, ի տարր գոյի՝ յելս ծա-
 գաց աշխարհի. սկիզբն ամենայ-
 նի եւ յամենայնի, ամենայն
 լրամամբ օրհնեալ ի բարձունս:
 Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ
 սրբոյ փառք յաւիտեանս. ա-
 մէն :



Ա Ղ Օ Թ Ք

իշրաքանչիշր ասե՞իև հաշատա-
ցելոյ ի քրիստոս, զոր արա-
րեալ է տեսան Ներսէսի Հայոց
կաթողիկոսի:



աւատով խո-
ստովանիմ
եւ երկ ի ր
պագանեմ
քեզ Հայր
և որդի և
սուրբ Հոգի, անեղ եւ անմահ
բնութիւն, արարիչ հրեշտա-
կաց և մարդկան և ամենայն

եղելոց, ողորմեա քո արարա-
ծոց:

Հաւատով խոստովանիմ եւ
երկիր պագանեմ քեզ անբա-
ժանելի լոյս, միասնական սուրբ
երրորդութիւն և մի աստուա-
ծութիւն, արարիչ լուսոյ եւ
հալածիչ խաւարի, հալածեա ի
հոգւոյ իմմէ զխաւար մեղաց և
անգիտութեան, և լուսաւորեա
ղմիտս իմ ի ժամուս յայսմիկ
աղօթել քեզ ի հաճոյս և ըն-
դունել ի քէն զխնդրուածս իմ,
և ողորմեա քո արարածոց և
ինձ բաղմամեղիս:

Հայր երկնաւոր աստուած
ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ
քո սիրելի ի խնդիր մոլորեալ
ոչխարին, մեղայ յերկինս և ա-
ռաջի քո, ընկալ զիս որպէս
զանառակ որդին, և զգեցո ինձ
զպատմուճանն առաջին, զոր
մերկացայ մեղօք, և ողորմեա:

Որդի աստուծոյ աստուած
ճշմարիտ, որ խոնարհեցար ի

հայրական ծոցոյ, և առեր մարմինն ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց և համբարձար առ հայր, մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով, և ողորմեա:

Հոգի աստուծոյ աստուած ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան և ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին, մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քո որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն, և ողորմեա:

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ, և ողորմեա:

Տեսող ամենայնի, մեղայ քեզ

խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուէն իմ ի դպրութեան կենաց, և ողորմեա:

Քննող գաղանեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ի ծննդէնէ աւազանին մինչեւ յայսօր մեղուցեալ եմ առաջի աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք և ամենայն անդամօք մարմնոյս, և ողորմեա:

Ամենախնամ տէր, գիր սրահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յարատ, և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, և բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զաստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, և ոտից իմոց՝ ոչ գնալ ի ճանա-

պարհս անօրէնութեան . այլ
ուղղեա զշարժումն սոցա լինել
ըստ պատուիրանաց . քոց յա-
մենայնի . և ողորմեա :

Հուր կենդանի Քրիստոս ,
զհուր սիրոյ քոյ զոր արկեր
յերկիր՝ բորբոքեա յանձն իմ ,
զի այրեացէ զախտ հոգւոյ ի-
մոյ , և սրբեացէ զխիղճ մտաց
իմոց , և մաքրեացէ զմեղս մար-
մնոյ իմոյ , և վառեացէ զլոյս
գիտութեան քո ի սրտի իմում .
և ողորմեա :

Իմաստութիւն հօր Յիսուս ,
տուր ինձ իմաստութիւն զբա-
րիս խորհել և խօսել և գործել
առաջի քո յամենայն ժամ . ի
չար խորհրդոց և ի բանից և ի
գործոց վրկեա զիս . և ողոր-
մեա :

Կամեցող բարեաց Տէր կա-
մարար , մի՛ թողուր զիս ի կամս
անձին իմոյ գնալ , այլ առա-
ջնորդեա ինձ լինել միշտ ըստ

կամաց քոց բարեսիրաց . և ո-
ղորմեա :

Արքայ երկնաւոր , տուր ինձ
զարքայութիւն քո զոր խոստա-
ցար սիրելեաց քոց , և զօրացո
զսիրտ իմ ատել զմեղս եւ սի-
րել զքեզ միայն և առնել զկամս
քո . եւ ողորմեա :

Խնամող արարածոց , պահեա
նշանաւ խաչի քո զհոգի եւ
զմարմին իմ ի պատրանաց մե-
ղաց , ի փորձութեանց դիւաց
եւ ի մարդոց անիրաւաց , եւ
յամենայն վտանգից հոգւոյ եւ
մարմնոյ . եւ ողորմեա :

Պահապան ամենայնի Քրիս-
տոս , աջ քո հովանի լիցի ի վե-
րայ իմ ի տուէ և ի գիշերի՝
ի նստել ի տան , ի գնալ ի
ճանապարհի , ի ննջել եւ ի
յառնել , զի մի՛ երբէք սասանե-
ցայց . եւ ողորմեա :

Աստուած իմ , որ բանաս
զձեռն քո , և ընուս զամենայն

արարածս ողորմութեամբ քովս
 քեզ յանձն առնեմ զանձն իմ,
 դու հոգա եւ պատրաստեա
 զպէսս հոգւոյ եւ մարմնոյ իմոյ,
 յայսմ հետէ մինչեւ յաւիտեան,
 եւ ողորմեա :

Գարձուցիչ մոլորեւոցս գարձո
 զիս ի շար սովորութեանց ի-
 մոյ ի բարի սովորութիւնս եւ
 բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի
 օր մահուն եւ զերկիւղ գեհե-
 նոյն եւ զսէր արքայութեանն,
 զի զլլայոցս ի մեղաց, եւ գոր-
 ծեցից զարգարութիւնս եւ ո-
 ղորմեա :

Աղբիւր անմահութեանս աղ-
 բերացո ի սրտէ իմմէ արտա-
 սուս աստաշխարութեան որպէս
 պոռնկին, զի լուացից զմեղս
 անձին իմոյ յառաջ քան զեւա-
 նեղն իմ յաշխարհէս, եւ ողոր-
 մեա :

Պարգևիչ ողորմութեանս, պար-
 գեւեա ինձ ուղղափառ հաւատով

եւ բարի գործով, եւ սուրբ
 մարմնոյ եւ արեան քո հաղոր-
 դութեամբ զալ առ քեզ, եւ
 ողորմեա :

Բարերար Տէր, հրեշտակի
 բարւոյ յանձն արասցես զիս,
 քաղցրութեամբ աւանդել զհո-
 գի իմ, եւ անխռով անցուցանել
 ընդ շարութիւն այսոցն՝ որ են
 իներքոյ երկնից, եւ ողորմեա :

Լոյս ճշմարիտ Քրիստոս, ար-
 ժանաւորեա զհոգի իմ ուրա-
 խութեամբ տեսանել զլոյս փա-
 սաց քոց ի կոչման աւուրն, եւ
 հանգչել յուսով բարեաց յօթե-
 վանս արդարոյ մինչեւ յօր մե-
 ծի գալստեան քո, եւ ողոր-
 մեա :

Գատաւոր արդար, յորժամ
 գաս փառօք հօր դատել զկեն-
 դանիս եւ զմեռեալսս մի մտաներ
 ի գատաստան ընդ ծառայիս
 քոս այլ փրկեա զիս ի յաւի-
 տեանական հրոյն, եւ լսելի արա

ինձ զերանաւէտ կոչումն ար-
դարոց յերկնից արքայութիւնդ.
եւ ողորմեա :

Ամենողորմ Տէր ողորմեա
ամենայն հաւատացելոց ի քեզ,
իմոց եւ օտարաց, ծանօթից եւ
անծանօթից, կենդանեաց եւ
մեռելոց. շնորհեա եւ թշնա-
մեաց իմոց եւ ատելեաց զթո-
ղութիւն որ առ իս յանցանաց.
եւ դարձո զնոսա ի չարեացն՝
զոր ունին վասն իմ, զի ողոր-
մութեան քում արժանի եղի-
ցին. եւ ողորմեա :

Փառաւորեալ Տէր, ընկալ զա-
ղաչանս ծառայիս քո, եւ կա-
տարեա ի բարի զխնդրուածս
իմ, բարեխօսութեամբ սուրբ
Աստուածածնին եւ Յովհաննու
Մկրտչին եւ սրբոյն Ստեփանոսի
նախավկային եւ սրբոյն Գրիգո-
րի մերոյ Լուսաւորչին, եւ
սրբոց առաքելոց եւ մարգա-
րէից եւ վարդապետաց և մար-

տիրոսայ, եւ սրբոց հայրապե-
տաց եւ ճգնաւորաց եւ կու-
սանաց, եւ ամենայն սրբոց քոց
երկնաւորաց եւ երկրաւորաց :
Եւ քեզ փառք եւ երկրպագու-
թիւն անբաժանելի սուրբ Եր-
րորդութեանդ, այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտեանից .
ամէն :



Աղօրք Մանասէի քաղաւորին:



էր ամենակալ,
Աստուած Աբ-
րահամու, Իսա-
հակայ, Յակո-
բայ և զաւակի
նոցա արգարոց.
ամենակալ Տէր,
Թող զմեզս իմ:

Որ արարեր
զերկինս եւ զերկիր
եւ զամենայն զարդ նոցա. ա-
մենակալ:

Որ կապեցեր զծով բանիւ
հրամանաւ քո, փակեցեր զխորս,
կնքեցեր ահաւոր և փառաւո-
րեալ անուամբ քով սրբով. ա-
մենակալ:

Որ ամենայն ինչ սարսէ եւ
գողայ յերեսաց ահի զօրութեան
քոյ. ամենակալ:

Անբաւ է մեծվայելչութիւն
փառաց սրբութեան քոյ, եւ
սաստիկ է բարկութիւն սպառ-
նալեաց քոց ի վերայ մեղաւո-
րաց. անչափ և անքնին են ողոր-
մութիւնք աւետեաց քոց. ա-
մենակալ:

Իսկ Տէր բարձրեալ, գթած,
երկայնամիտ, բազումողորմ, և
զղջանաս ի վերայ չարեաց մարդ-
կան, ամենակալ:

Իսկ Աստուած, ոչ եղեր ա-
պաշխարութիւն վասն արդա-
րոցն Աբրահամու, Իսահակայ
և Յակոբայ, որք ոչ մեղան քեզ.
ամենակալ:

Այլ եղեր ապաշխարութիւն
վասն իմ մեղաւորիս. զի մե-
ղայ աւելի քան զաւաղ ծովու
և բազմացան անօրէնութիւնք
իմ. ամենակալ:

Չեմ արժանի հայել և տե-
սանել զբարձրութիւնս երկնից
ի բազմութենէ անօրէնութեան
իմոյ. ամենակալ:

Կորացեալ եմ ես ի բռնու-
թենէ կապանաց երկաթից, եւ
ոչ գոյ ինձ հարգիստ. ամենա-
կալ:

Բարկացուցի զսրամտութիւն,
և զչար առաջի քո արարի.
կանգնեցի պատկեր՝ և բազմա-
ցուցի զցասումն քո. ամենա-
կալ:

Եւ արդ տէր, խոնարհեցու-
ցանեմ զծունր սրաի իմոյ, եւ
հայցեմ ի քաղցրութենէ քու-
մէ. ամենակալ:

Մեղայ Տէր, մեղայ, և զա-
նօրէնութիւնս իմ ես ինձէն
գիտեմ. ամենակալ:

Աղաչեմ և խնդրեմ ի քէն,
թող ինձ Տէր, թող ինձ, և մի՛
կորուսաներ զիս ըստ անօրէ-
նութեան իմոյ. ամենակալ:

Մի՛ յաւիտեան բարկանար
ինձ, Տէր, և մի՛ յիշեր զչարիան
իմ, և մի՛ պարտաւորեր զիս
ընդ իջեալս ի ներքոյ երկրի
չարեօք. ամենակալ:

Զի դու Աստուած՝ Աստուած
ապաշխարողաց ես, և յիս ցոյց
զբարերարութիւնդ քո, զի ա-
նարժան եմ. ամենակալ:

Կեցուցես զիս ըստ բազում
ողորմութեան քում, և ես օրհ-
նեցից զքեզ զամենայն աւուրս
կենաց իմոյ. ամենակալ:

Զքեզ, Տէր, օրհնեն ամե-
նայն զուարթունք երկնից, եւ
քո են փառք յաւիտեանս. ա-
մէն:

Փառք հօր և որդւոյ: Այժմ:

Աղաչեմ և խնդրեմ ի քէն,
Տէր թող ինձ զմեղս իմ:

Բազումողորմ Տէր, ողորմեա
ինձ:

Աստուած, քաւեա զիս զմե-
ղաւորս:

Արարիչ իմ և յոյս Աստուած,
գթա յիս ի մեղուցեալ ծա-
ռայս, և ողորմեա ինձ բազմա-
մեղիս:

Ամենօրհնեալ Արբուհի՛ եւ

միշտ կոյս Աստուածածին Մա-
րիամ, բարեխօսեա առ Տէր
վասն իմ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ,
բարեխօսեցէք առ Հայր յեր-
կինս վասն մեր մեղաւորացս:

Քրիստոս որդի Աստուծոյ ա-
նօխակալ, ընկալ զաղաչանս մեր,
զի ի քեզ են ապաւինեալ ան-
ձինք մեր:

Յաղթող զօրութեամբ սուրբ
և կենդանարար և պատուական
խաչիւ քով Տէր, պահպանեա
զմեզ:

Առաքեա, Տէր, զհրեշտակ
խաղաղութեան քոյ, որ եկեալ
պահեսցէ զմեզ անխռովս ի
տուէ և ի գիշերի:

Եւ մարդասիրութեամբ քո
յիշեա զմեզ, Տէր, յիշեա զմեզ,
յորժամ գաս արքայութեամբ
քով, և ողորմեա մեզ:

Տ Ե Տ Ր Ա Կ

Ս Ո Ւ Ր Բ Վ Ա Ր Դ Ա Ր Ա Ն Ի Ն

ՈՐ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՅ ՊԱՏՈՒՈՅՆ ՀԱՄԱՐ

Կ' Ը Ս Ո Ւ Ի :

Խորհրդածոչքիչն արևնաստորք

Վարդարանիս վրայ:

Վարդարանը՝ ուղղափառաց
մէջ ուրիշ բան չէ, եթէ ոչ
պսակ մը կամ հոգեւոր հիւ-
սուածք մը, որ քաղուած է
Աւետարանէն խորհրդաւոր խօս-
քեր՝ ինչպէս թէ վարդերէ կաղ-
մուած ըլլայ, զոր կը մատու-
ցանենք կուսանաց կուսին Աս-

առւծոյ մօրը, որովհետեւ հիւստեաճքը կամ սրտակը յասուկ կերպով կոյսերուն գլուխը կը դրուի զարդի համար: Արդ, վարդարանը կը հիւսուի հինգ անգամ տէրունական աղօթքը կրկնելով, և յիսուն անգամ ալ հրեշտակին ողջունատուութիւնը կրկնելով:

Ուստի վարդարանը երեք անգամ կրկնուելով կը կազմէ հարիւր յիսուն ողջունատուութիւններու թիւը, Գաւթի Սաղմոսներու թուոյ չափ. որոյ համար այս երեք անգամ վարդարանը՝ կոչեցին երանելի կուսին Սաղմոսարանը:

Հինգ անգամ վարդարանին մէջ կը կրկնենք տէրունական աղօթքը, որպէս զի նորոգենք Քրիստոսի հինգ վիրայ յիշատակը: Եւ հրեշտակին տասը ողջունատուութիւնը կը միացնենք ամէն մի Հայր մերին հետ,

որպէս զի յիշենք Աստուծոյ տասնաբանեայ սատգամները, և իսկ բոլոր վարդարանին մէջ՝ ողջոյնը յիսուն անգամ կը կըրկնենք, որպէս զի Սուրբ Գրոց մէջ նշանակուած յոբելեան յիսուն թուովը, երանուհի կուսին բարեխօսութեամբը, տէրունական չարչարանաց արդիւնքով՝ ընդունինք մեզաց լիակատար ներումը: Բայց որպէս զի աղօթողին միտքը ասոր պտուղը չկորսնցնէ, որովհետեւ դժուարին կ'երեւի, որ առանց զբաղելու մտադիր ըլլայ՝ նոյն խօսքերուն այնչափ կրկնութիւններուն, բարեպաշտութեամբ որոշուեցաւ, որ ամէն մի վարդարան կատարուի հինգ խորհրդածութիւններով, զորս մտածելով միտքը զբաղի՝ երբոր բերանը բառերը կ'արտասանէ:

Առաջին վարդարանին համար՝ նշանակուած են ամենասուրբ

Տիրամօր հինգ ուրախութիւն-
ները, հինգ անգամ աստերէ
կազմուած, որով Քրիստոսի ու-
րախալի տնօրէնութեանց ժա-
մանակ Երանուհին լեցուեցաւ
որոնք՝ ասոնք են.

Տէրունական մարդեղութեան
(Աւետումը.

Եղիսաբէթի այցելութիւնը.

Քրիստոսի ծնունդը.

Քրիստոսի ընծայումը տաճա-
(ըին մէջ.

Յիսուս մանկան դանուելը վար-
(դապետներու մէջ).

Երկրորդ վարդարանին մէջ
Քրիստոսի չարչարանացը հինգ
տնօրէնութեանը յիշատակը
կ'ըլլայ, որ ասոնք են.

Յիսուսի աղօթք ընելը եւ բըռ-
(նուելը պարտիզին մէջ.

Յիսուսի ձաղկուելը.

Քրիստոսի փշերով պսակումը.

Քրիստոսի խաչը վերցնելը.

Քրիստոսի խաչելութիւնը.

Երրորդ վարդարանին մէջ
հինգ փառաւոր տնօրէնութիւն-
ները առաջ կը բերուին, որ
կատարուեցան Քրիստոսի մա-
հուանէ վերջը, որ են ասոնք.

Յիսուսի յարութիւնը.

Յիսուսի երկինք համբարձումը,

Հոգւոյն սրբոյ գալուստը Մա-
րիամու եւ աշակերտաց վրայ.

Երանուհի Աուսին Աերափո-
խումը.

Իրեն պսակումը:

Աստուծոյ մէջ յայտնի է վարդապարտ
 նիս գործածութեան ամենամեծ
 օգուտը, այսինքն, որ ասով կը
 նորոգուի Քրիստոսի կենաց ամէն
 տնօրէնութիւններուն եւ
 երանութիւնը և հաւատոյ
 գլխաւոր մասերուն յիշատակը:
 Ու այս համառօտ կը թուի թիւնը
 այնչափ աւելի օգտակար է ամէն
 ունեւն համար, որչափ որ աւելի
 գիւրին է ասոր գործածութիւնը
 քան գրոցը, որովհետեւ
 զայս գործածելը կարելի է նաև
 անոնց, որ կարգալ չեն գիտեր,
 կոյր են, կառք և ձի կը հեծնան,
 ու խաւարի մէջ կը նստին:
 Բայց պէտք չէ, որ մէկը մոռանայ
 տնօրէնութիւնները, որոնց վրայ
 միտքը և ուշադրութիւնը պիտի
 զբաղի. թէ և ի սկզբան գթութեան
 պիտի երևի միշտ մտաց մէջ
 ունենալը զանոնք,
 բայց քիչ օրուան վարժութիւնը
 ամէն քան կը

գիւրացնէ: Այս թեթեւ քան
 մ'է ասոր անգամ կրկնութիւնը,
 բայց շատ մտաց պատճառ կ'ըլլայ
 ցնդման և ձանձրութեան,
 թէ որ ամէն մի տասնեակի
 տնօրէնութիւններէն մին չձեռնարկէ:
 Եւ թէ որ դանց ընեա
 անոնց խորհրդածութիւնները,
 Քրիստոսի և Մարիամու կենաց
 տնօրէնութիւններուն փրկարար
 և քաղցր յիշատակէն վերջացած
 պիտի ըլլաս:

Վարդապարտը ըսելու դիւրին

եղանակ:

Որպէս զի բարեպաշտները կարող
 ըլլան գիւրին և զգուշագոյն
 կերպով պահել միտքերնին
 ներկայ խորհրդածութիւնները
 վարդապարտ ըսած ժամանակ

նակն օրինակ մը դնենք այս
տեղ շատ գիւրին և պատշա-
ճաւոր: Տասնեակ մը սըկ-
սելէն առաջ, ինչ անօրէնու-
թիւն որ պիտի մտածես անոր
մէջ, համառօտ միտքդ բեր. որ-
պէս զի յեաոյ միտքդ բերես
մինչև տասնեակին վերջը: Եւ
զարձեալ երբ սկսիս տէրունա-
կան աղօթքը, համարէ թէ կը կե-
նաս ինչպէս հօր Աստուծոյ ա-
ռաջ. և երբ կը սկսիս հրեշտա-
կական ողջոյնատուութիւնը՝
ինչպէս մօր՝ երանուհի կուսին
առջեւն ես. որպէս զի խոր-
հուրդդ անոնց վրայ զբաղելով՝
չցրուի հոս ու հոն: Ամ
մտածէ, թէ կը շրջիս այն տե-
ղերը, ուր կատարուեցան այն
անօրէնութիւնները, և դիր թէ
հոն ես, ինչպէս թէ այդ բա-
ները աչացդ առջև ըլլային:

Եւ այս գիւրին բան մ'է հո-
գւոյ և զգայութեան ախորժե-

լով ընե, ինչպէս երբեմն երբոր
պարապ կը գտնուինք, կը կար-
ծենք թէ կը պատինք բոլոր Եւ-
րոպայ ու կը տեսնենք զարմա-
նաշիջներս կամ կը շրջինք
Զմիւռնիայ, Բիւզանդիայ, Ամիթ,
Բերիա կամ ուրիշ հեռաւոր
տեղեր ուր մեր միտքը կ'եր-
թայ:

Իմաստուն ու բարեպաշտօն
մարդ մը, որ վաթսուն տա-
րիներէ աւելի սովոր էր ամէն
օր վարդարան ըսել, իրեն հա-
մար կ'ըսէ թէ՝ ասկէ լաւագոյն
եղանակ չգտաւ՝ ինչ որ հիմակ
ըսինք: Ար ամէն տասնեակին
լմննալուն՝ ինչպէս թէ սրտին
զուարթութենէն՝ բերկրու-
թեան այս խօսքերով կը լեցը-
ւէր: Այսինքն՝ առաջին տաս-
նեակին վերջանալուն, կ'ըսէր, Տա-
ւր հագար անգամ զքեզ օրհնեց
ն'վ կոյս մայր, փառաշնորհաւ
Մարիամ, եւ այլն: Երկրորդ

տասնեկէն վերջը կ'ըսէր. Քսասն
 հագար անգամ գրեզ օրհնեցն,
 և այլն: Այնպէս երրորդէն,
 չորրորդէն եւ հինգերորդէն
 վերջն ալ կ'ըսէր, զորս պիտի
 գանես իւր կարգին մէջ՝ պատ-
 շաճ, վայելուչ, օգտակար եւ
 ուրախալիւր խօսքերով շինուած:

Խորատ սուրբ վարդարանը

ըսելոք կերպիւն համար:

Արդ սուրբ վարդարանը սկը-
 սելէն առաջ, կը գրեմ զիս կար-
 գացողաց համար՝ որ գիտնան,
 թէ ամէն ոք՝ որ սուրբ վարդա-
 րանի եղբայրակցութեանը գը-
 րուած է, պէտք է ամէն օր սուրբ
 վարդարանը ըսէ. եւ թէ որ
 սչ ամբողջ հարիւր յիսուներ, գո-
 նէ պիտի ըսէ միայն յիսուներ՝

ամէն օրուան խորհրդոյն և խը-
 րատուն համեմատ. զոր հիմակ
 պիտի գրեմ: Իսկ եթէ մէկը
 ամէն օր շկարեկայ ըսել, գոնէ
 սուրբաթ, շաբաթ եւ կիրակի
 պէտք է ըսէ, որովհետեւ գը-
 րուաց է սուրբ վարդարանին ըն-
 կերակցութեան, որպէս զի
 չզրկուի անոր շահէն:

Եւ դարձեալ, վարդարանը ըս-
 կըսելէն առաջ՝ պիտանի խրատ
 մը պիտի ըսեմ ասոր նկատ-
 մամբ՝ թէ ինչպէս պէտք է սուրբ
 վարդարանը ըսել. թէ որ ըսող-
 ները եղբայրներ ըլլան, եւ
 կամ բոյրեր, երկու դաս ըլ-
 լան: Եւ յետոյ ով որ խոհեմ
 կը համարուի և հմուտ պա-
 տրաստ գտնուած եղբայրներուն
 մէջ, նա՝ օրուան պատշաճին
 համեմատ՝ անոր խորհուրդը
 ըսէ, թէ ինչ իրաց վրայ պէտք
 է մտածել, և միւսները ջեր-
 մեռանդութեամբ թող խոկան

անոր ըսած խօսից վրայ: Եւ
 յեւոյ թող սկսի խոհեմ եղ-
 բայրը իր գասակիցնէրով և ըսէ
 Հայր մեր որ յերկիևս, մինչև
 այն ատեղը, որ կ'ըսէ, որպէս
 յերկիևս և յերկրի, և ապա միւս
 գասակիցնէրն ալ սկսին ըսել.
Չհաց մեր հանապազորդը,
 մինչև վերջը՝ ուր որ արեւն ը
 կ'ըսուի:

Եւ յեւոյ ով որ Հայր մերը
 սկսաւ, թող սկսի նաև Ողջոյն
 քեզ Մարիամը և ըսէ մինչև
 այն ատեղը, որ կ'ըսէ, և օրհնեալ
 է պտոշոյ որովայնի քո՝ Յիսուս:
 Ու միւս կողմն ալ թող ըսեն.
Սրբոշի Մարիամ, մայր Աս-
 տուծոյ, մինչև վերջը, որ է՝ և
 ի ժամոշ մահոշան մերոյ, արեւն:
 Ու այսպէս ըսելով այն տասը
 ողջոյնները շինցնեն: Եւ յեւոյ
 սկսին երկրորդ տասնեակը, եւ
 ով որ առաջ խորհուրդը ըսաւ,
 կրկին՝ մտածելու խորհուրդը

զուրյէ, բայց Հայր մերը թող
 նա ըսէ, որ առաջ **Չհաց մերը**
 ըսաւ: Ու Ողջոյնն ալ այն սկսի,
 որ նախ **Սրբոշի** ըսաւ: Ու
 այսպէս գաս գաս ըսեն մինչև
 որ աւարտի վարդարանը:

Ապա թէ որ միայնակ է ա-
 ղ թողը, այնպիսին՝ ինչպիսի
 մէկն ալ ըլլայ, պէտք է որ ամէն
 բան ինքը ըսէ:

Նաև գիւրապոյն կերպով մը-
 տածելու համար սուրբ խոր-
 հուրդները, զիտուն և բարե-
 պաշտ անձ մը՝ կը սորվեցնէ
 գերազանց եղանակ մը, զոր
 ջերմեռանդ մէկը եթէ կամե-
 նայ կրնայ ընել. այսինքն, ամէն
 տասը ողջոյններուն մէջ՝ երբ
 օրհնեալ է պտոշոյ որովայնի քո՝
 Յիսուս հասնի, թող մտածէ
 բաներ մը, զոր օրինակ՝ ուրա-
 խու թեան խորհրդոյ մտածու-
 թեան մէջ առաջին տասնեկին
 ատեն թող մտածէ այս. զոր

կոյսդ յդացար: Երկրորդին մէջ,
 գոր յայցելոնքիւն տարար: Եր-
 րորդին մէջ, գոր կոյսդ ծնար:
 Չորրորդին մէջ, ի տաճարին
 ընծայեցեր: Հինգերորդին մէջ՝
 գոր ի տաճարին գտեր:

Նոյնպէս չարչարանաց խոր-
 հուրդը մտածելու ատեն՝ առա-
 ջին տասնեկին մէջ զայս խոկա,
 որ վասն մեր գրքտոռնու արեան
 հոսեաց: Երկրորդին մէջ, որ
 վասն մեր ճաղկեցաւ: Երրոր-
 րդին մէջ, որ վասն մեր փշօք
 պսակեցաւ: Չորրորդին մէջ, որ
 վասն մեր զիսաչն երարձ: Հին-
 գերորդին մէջ, որ վասն մեր
 խաչեցաւ:

Նոյնպէս փառաւորութեան
 խորհուրդը խորհելու ատեն՝
 առաջին տասնեկին մէջ մտածե-
 զայս որ յարեաւ ի մեռելոց:
 Երկրորդին մէջ, որ հարկար-
 ձաւ յերկիւն: Երրորդին մէջ, որ

զհոգին Սոչրք առաքեաց: Չոր-
 րորդին մէջ, որ զքեզ վերափո-
 խեաց: Հինգերորդին մէջ, որ
 զքեզ ի յերկիւն պսակեաց:





ԱՂՕԹՔ

Վ Ա Ր Դ Ա Ր Ա Ն Ի Ն

Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՈՒՐԱԽՈՒԹԷՍԱՆ ՍՈՒՐԲ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Յաշուշեր Երկոշարաթի,

Երեքշարաթի և Շարաթոշ:

Մի Հայր մեր և տասն ողջոյն ասասցուք, զմտաւ ածելով զառաջին խորհուրդ ուրախութեան Սուրբ Աստուածածնին. զի յորժամ ամենակայն Աստուած գթացեալ ի վերայ մեր՝

հաճեցաւ փրկել զմեզ, առաքեաց զհրեշտակապետն Գաբրիէլ առ ամենասուրբ կոյսն, որ ողջունաբեր աւետեօքն յղացաւ ի Հոգւոյն Սրբոյ:

Հայր մեր:

Ընդ տասանց ողջունիցս՝ բիւրրս մատուցեն քեզ օրհնութիւնս, փառաւորեալ սուրբ կոյս աստուածածին Մարիամ, ամենայն հրեշտակք և հրեշտակապետք և ամենայն հոգիք երկնաւորք. ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:



Մի հայր մեր և տասն ողջոյն
 ասասցուք, զմտաւ ածելով զեր-
 կրորդ խորհուրդ ուրախու-
 թեան Սուրբ Աստուածածնին,
 զի իբրև լուաւ զբանս հրեշտա-
 կապետին և յղացաւ ի Հոգւոյն
 Սրբոյ, փութապէս գնաց ի քա-
 ղաքն Յուդայ, և եմուտ ի տունն
 Զաքարիայ և ետ ողջոյն Եղի-
 սաբեթի:

Հայր մեր:

Ընդ քսան ողջունիցս բիւրս
 մատուցեն քեզ օրհնութիւնս,
 փառաւորեալ սուրբ կոյս Աս-
 տուածածին Մարիամ, ամենայն

սուրբ նահապետք և մարգա-
 րէք, անմեղ մանկուհիք, Մկրտիչն
 Յովհաննէս և ամենայն սուրբք
 հնոյ ուխտին. ընդ որս յու-
 սամք տեսանել և վերօրհնել
 զքեզ յերկինս: — Ամէն:



Թիւնս, փառաւորեալ սուրբ
 կոյս Աստուածածին Մարիամ,
 ամենայն սուրբ առաքեալք եւ
 աշակերտք Տեառն եւ աւետա-
 րանիչք եւ ամենայն լուսապը-
 սակ վկայիցն դասք. ընդ որս
 յուսամք տեսանել եւ վերօրհ-
 նել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր եւ տասն ողջոյն
 ասասցուք, զմասաւ ամեւնով
 զերրորդ խորհուրդ ուրախու-
 թեան Սուրբ Աստուածածնին,
 որ իբրև ծնաւ անձառաքար
 զտէրն մեր Յիսուս Քրիստոս ի
 Բեթղէհէմ Հրէաստանի՝ ի քա-
 ղաք Բաւթի, ի մսուրն անբա-
 նից, հրեշտակք յերկնից իջեալ
 երգեցին՝ Փառք ի բարձունս
 Աստուծոյ եւ յերկիր խաղաղու-
 թիւն:

Հայր մեր:

Ընդ երեսուն ողջունիցս՝
 բիւրս մասուսցեն քեզ օրհնու-



Ընդ քառասուն ողջունիցս
 բիւրս մատուցեն քեզ օրհնու-
 թիւնս, փառաւորեալ սուրբ
 կոյս Աստուածածին Մարիամ,
 ամենայն սուրբ խոստովանողք,
 հայրապետք, վարդապետք, մի-
 անձուք, անապատականք, կու-
 սանք, այրիք և արամբիք. ընդ
 որս յուսամք տեսանել և վեր-
 օրհնել զքեզ յերկինս : —
 Ամէն :

Մի հայր մեր և տասն ող-
 ջոյն ասացուք, զմտաւ ածելով
 զչորրորդ խորհուրդ ուրախու-
 թեան Սուրբ Աստուածածնին.
 զի յորժամ փրկիչն մեր եղեւ
 քառասնօրեայ, և լցան աւուրքն
 սրբութեան, ըստ օրինացն Մով-
 սիսի էած զնա սուրբ կոյսն ի
 տաճարն՝ յանդիման առնել
 տեառն : Եւ ծերունւոյն Սի-
 մէոնի առեալ զնա ի գիրկս իւր՝
 օրհնեաց զԱստուած ասելով :
 Արդ արձակեա զծառայս քոյ
 Տէր, ըստ բանի քում ի խա-
 զաղութիւն :

Հայր մեր :



մատուցեն քել օրհնութիւնս,
 փառաւորեալ սուրբ կոյս Աս-
 տուածածին Մարիամ, սրբուհին
 Աննա մայր քո, և Մարիամանք
 ազգականք քո, Մագդաղենա-
 ցին և Մարթա, սիրողք և սի-
 րելիք քո, և ամենայն կուսանք,
 այրիք և արամբիք. ընդ որս
 յուսամք տեսանել և վերօրհնել
 զքեզ յերկինս: — Ամէն:
 Փարբ Հօր: Այժմ և միշտ:



Մի հայր մեր և տասն ող-
 ջոյն ասացուք, զմտաւ ածելով
 զհինգերորդ խորհուրդ ուրա-
 խութեան Սուրբ Աստուածա-
 ծնին. զի յորժամ Փրկիչն մեր
 եղև երկոտասանամեայ, տարան
 զնա ծնողքն ի տաճարն, և կո-
 րուսին զմանուկն. և յետ երից
 աւուրց գաին զնա, զի ընդ
 վարդապետս բազմեալ խօսէր
 ընդ նոսա. լսէր ի նոցանէ, եւ
 ուսուցանէր նոցա զարքայու-
 թիւնն Աստուծոյ:
 Հայր մեր:
 Ընդ յիսուն ողջունիցս՝ բիւրս



Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԶԱՐԶԱՐԱՆԱՅՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

Յաշուշր Զորեքչաբարի և Ոչր-
բարոշ:


Քրիստոս լեալ հնազանդ վասն
մեր մահու չափ եւ մահու
խաչի:

Մի հայր մեր և տասն ող-
ջոյն ասացուք, զմտաւ սօժելով
զառաջին խորհուրդ չարչարա-
նացն Քրիստոսի, զի յորժամ

մեր ձեցաւ ժամանակ չարչարա-
նաց իւրոց՝ առեալ ընդ իւր
զՊետրոս, զՅակովբոս և զՅով-
հաննէս՝ ել ի լեառն Զիթենեաց,
և մեկուսի ի նոցանէ սղօթէր
առ Հայր, ասելով. Հայր, եթէ
հնար իցէ անցն զբաժակս զայս
յինէն:

Հայր մեր:

Ընդ տասանց ողջուհիցս՝ բիւրս
մատուցեն քեզ օրհնութիւնս
փառաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, ամենայն
հրեշտակք և հրեշտակապետք և
ամենայն հոգիք երկնաւորք, ընդ-
որս յուսամք տեսանել և վեր-
օրհնել զքեզ յերկինս: —
Ամէն:




մատուցեն քեզ օրհնութիւնս,
 փառաւորեալ սուրբ կոյս Աս-
 տուածածին Մարիամ, ամենայն
 սուրբ նահապետք և մարգա-
 րէք, անմեղ մանկուկս, Մկրտիչն
 Յովհաննէս, և ամենայն սուրբք
 Հնոյ ուխտին. ընդ որս յու-
 սամբ տեսանել և վերօրհնել
 զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ող-
 ջոյն ասացուք, զմտաւ ածելով
 զերկրորդ խորհուրդ չարչարա-
 նացն Քրիստոսի. զի յորժամ
 Քրիստոս ի պարտիզին աղօթէր,
 Յուդաս մի յերկոսասանիցն
 չօքաւ մասնեաց զնա Հրէից:
 Իսկ նոյա առեալ զգունդս ի
 քահանայապետից՝ սուսերօք և
 բրօք եկին կալան և կապեցին
 զՅիսուս, և տարան յատեան
 առաջի Պիղատոսի, իսաչեւ զնա՝
 վասն մեղաց մերոց:

Հայր մեր:

Ընդ քսան ողջունիցս՝ բիւրս




տուածածին Մարիամ, ամե-
նայն սուրբ առաքեալք և աշա-
կերտք Տեառն և աւետարա-
նիչք, և ամենայն լուսապսակ
վկայիցն դասք. ընդ որս յու-
սամք տեսանել և վերօրհնել
զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն
ասասցուք, զմտաւ ածելով զեր-
րորդ խորհուրդ չարչարանացն
Քրիստոսի, զի յորժամ Քրիս-
տոս եկաց յատեանն Պիղատո-
սի, յետ բազում հարցափոր-
ձութեանց՝ պսակ ի փշոյ կազ-
մեալ զինուորացն՝ եգին ի
գլուխ նորա, և ի բոլորեւն
զայն՝ արիւն ընդ երեսան հո-
սէր, վասն մեղաց մերոց:

Հայր մեր:

Ընդ երեսուն ողջունիցս բիւրս
մատուցեն քեզ օրհնութիւնս,
փառաւորեալ սուրբ կոյս Աս-



հայրատակաք, վարդապետք, մի-
անձուկնք, անաստատականք, կու-
սանք այրիք և արամբիք. ընդ
որս յուսամք տեսանել եւ վեր-
օրհնել զքեզ յերկինս: — Ա-
մէն:

Մի հայր մեր և տասն ող-
ջոյն ասասցուք զմտաւ ածելով
զչորրորդ խորհուրդ չարչարա-
նացն Քրիստոսի. զի յետ բա-
զում գանից և ձաղանաց՝ բար-
ձեալ զծանրաբեռն խաչափայտն
յուս նորա՝ ածին զնա ի Գող-
գոթա, ի խաչ հանելչ վասն
մեզաց մերոց:

Հայր մեր:

Ընդ քառասուն ողջունիցս՝
բիւրս մատուցեն քեզ օրհնու-
թիւնս, փառաւորեալ սուրբ
կոյս Աստուածածին Մարիամ,
ամենայն սուրբ խոստովանողք:



Մի հայր մեր և տասն ողջոյն
 ասացուք, զմտաւ ածելով զհին
 գերորդ խորհուրդ չարչարա-
 նացն Քրիստոսի, զի յորժամ
 զՓրկիչն մեր ի վերայ խա-
 չին տարածեալ՝ զձեռսն և զու-
 սրն բեւեռեցին, և բարձրա-
 ցուցեալ կանգնեցին զնա, յայն-
 ժամ խաւար եղև ի վերայ ա-
 մենայն երկրի, արեգակն և լու-
 սին խաւարեցան, վէմք պատա-
 ռեցան, գերեզմանք բացան, և
 բազում մարմինք ննջեցելոց
 սրբոց յարեան, և յիններորդ
 ժամուն աղաղակեաց Յիսուս ի

խաչին Աստուած իմ, Աս-
 տուած իմ ընդէր թողեր զիս,
 և խոնարհեցուցեալ զգլուխն՝
 աւանդեաց զհոգին առ Հայր,
 և իջուցեալ զմարմինն նորա ի
 խաչէն՝ եղին ի գերեզմանի:
 Հայր մեր:

Ընդ յիսուն ողջունիցս՝ բիւրս
 մատուցեն քեզ օրհնութիւնս,
 փառաւորեալ սուրբ կոյս Աս-
 տուածածին Մարիամ, սրբու-
 հին Աննա մայր քո, և Մարիա-
 մանք ազգականք քո, Մագդա-
 ղենացին և Մարթա, սիրողք
 և սիրելիք քո, և ամենայն կու-
 սանք, այրիք եւ արամբիք. ընդ
 որս յուսամք տեսանել և վեր-
 օրհնել զքեզ յերկինս: — Ա-
 մէն:

Փառք հօր: Այժմ:



Ի ԽՈՐՀՈՒՐԴ

ՓԱՌՍԻՈՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Յաշոռք Կիւրակեի և Հիւզա-
բարոս:

Աստուած, յօգնել ինձ նա-
յեաց: — Եւ Տէր, յընկերել
ինձ փութա: Փառք հօր: Այժմ
և միշտ:

Մի հայր մեր և տասն ող-
ջոյն ասացուք, զմտաւ ածելով
զառաջին խորհուրդ փառաւո-

րութեանն Քրիստոսի. զի յեր-
րորդ աւուր թաղման իւրոյ՝
ընդ լուսանալ միաշաքաթին՝
իւրով աստուածային ամենակալ
զօրութեամբն յարուցեալ ի
մեռելոց, երևեցաւ Մարիամու,
և ապա առաքելոցն ամենեցուն,
և դրօքն փակելովք մտեալ առ
աշակերտան, ասէ. Խաղաղու-
թիւն ընդ ձեզ:

Հայր մեր:

Ընդ տասանց ողջունիցս՝ բիւրս
մատուցեն բեզ օրհնութիւնս
փառաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, ամենայն
հրեշտակք և հրեշտակապետք և
ամենայն հոգիք, երկնաւորք,
ընդ որս յուսամք տեսանել և
վերօրհնել զքեզ յերկինս: —
Ամէն:



սուրբ նահապետք և մարգարէք,
անմեղ մանկունք, Մկրտիչն
Յովհաննէս և ամենայն սուրբք
հնոյ ուխտին, ընդ որս յու-
սամք տեսանել և վերօրհնել
զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տանն ող-
ջոյն ասասցուք՝ զմտաւ ամելով
զերկրորդ խորհուրդ փառաւո-
րութեանն Քրիստոսի, զի յետ
յարութեան իւրոյ զաւուրս
քառասուն շրջեցաւ ի վերայ
աշխարհի, և ասլա իւրով աս-
տուածային ամենակալ զօրու-
թեամբ՝ համբարձաւ յերկինս,
և նստաւ ընդ աջմէ Հօր:

Հայր մեր:

Ընդ քսանն ողջունիցս՝ բիւրս
մատուցեն քեզ օրհնութիւնս,
փառաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, ամենայն



Աստուածածին Մարիամ, ամենայն սուրբ առաքեալք և աշակերտք տեառն և աւետարանիչք և ամենայն շուսապսակ վկայիցն դասք, ընդ որս յուսամք տեսանել և վերօրհնել զքեզ յերկինս: — Ամէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն ասասցուք, զմտաւ ածելով զերրորդ խորհուրդ փառաւորութեանն Քրիստոսի, զի իբրեւ համբարձաւ յերկինս՝ առաքեաց զխոստացեալ Հոգին սուրբ ի վերայ առաքելոյն, և նոյա լըցեալ Հոգւովն սրբով, երթեալ քարոզեցին ընդ ամենայն աշխարհ վասն արքայութեանն Աստուծոյ:

Հայր մեր:

Ընդ երեսուն ողջունիցս՝ բիւրս մատուցեն քեզ օրհնութիւնս փառաւորեալ սուրբ կոյս



ամենայն սուրբ խոստովանողք,
հայրապետք, վարդապետք, մի-
անձուներ, անապատականք, կու-
սանք, այրիք և արամբիք, ընդ-
որս յուսամք տեսանել և վեր-
օրհնել զքեզ յերկինս: — Ա-
մէն:

Մի հայր մեր և տասն ողջոյն
ասասցուք, զմտաւ ածելով զչոր-
րորդ խորհուրդ փառաւորու-
թեանն Քրիստոսի, զի իբրեւ
եհաս ժամանակ վախճանելոյ
Տիրամօրն՝ առաքեաց զՔաբրիէլ
հրեշտակապետն բերել նմա զյաղ-
թանակ, հրաւիրելով զնա ի վե-
րին առագաստն, յոր վերափո-
խեցաւ նա յերկինս:


Հայր մեր:

Ընդ քառասուն ողջունիցս՝
բիւրս մատուցեն քեզ օրհնու-
թիւնս, փառաւորեալ սուրբ
կոյս Աստուածածին Մարիամ,



Ընդ յիսուան ողջունիցս՝ բիւրս
մատուցեն քեզ օրհնութիւնս,
փառաւորեալ սուրբ կոյս Աս-
տուածածին Մարիամ, սրբուհին
Աննա մայր քո, և Մարիամանք
ազգականք քո, Մագդաղենացին
և Մարթա, սիրողք և սիրելիք
քո, և ամենայն կուսանք, այրիք
և արամբիք, ընդ որս յուսամք
տեսանել և վերօրհնել զքեզ
յերկինս: — Ամէն:

Փառք Հօր: Այժմ:



Միջայր մեր և տասն ողջոյն
ասացուք, զմտաւ ածելով զհին-
գերորդ խորհուրդ փառաւո-
րութեանն Քրիստոսի, զի յոր-
ժամ սուրբ կոյսն փոխեցաւ
յերկինս՝ Հայրն ամենակալ եւ
Որդին միածին և սուրբ Հոգին
Աստուած՝ պսակեալ զնա անմա-
հական թագիւն՝ բազմեցուցին
յաթոռն լուսեղէն, և եղև նա
գշխոյ երկնի և երկրի բարե-
խօս առ Տէր վասն մեր և վասն
ամենայն ուղղափառ հաւատա-
ցելոց:

Հայր մեր:

Ա Ղ Օ Թ Ք

Առ սուրբ Կոյսն Մարիամ



զի լեր թագու-
հի, մայր ո-
ղորմութեան,
կեանք, քաղ-
ցրութիւն եւ
յոյս մեր, ողջ

լեր: Առ քեզ կարգասք վտարան-
դեալ որդիքս Եւայի, առ քեզ
հառաչեմք միշտ հեծութեամբ և
լալագին ի հովտէ աստի տրու-
մութեան և արտասուաց: Եւ
արդ աղէ, ո՛վ բարեխօս մեր,
դարձո առ մեզ զգորովագութ
հայեցուածս աչաց քոց, եւ

զՅիսուս զօրհնեալդ պատուղ ո-
րովայնի քո յետ աստանօր
պանդխտութեանս ցոյց մեզ, ո՛վ
բարեբարոյ, ո՛վ գթած, ո՛վ քաղ-
ցըր և անոյշ կոյս Մարիամ: Լեր
բարեխօս վասն մեր սուրբ Աս-
տուածածին, որպէս զի արժա-
նաւորք եղիցուք խոստմանցն
Քրիստոսի:

Ընդ հովանեաւ պաշտպանու-
թեան քո ապաւինիմք, սուրբ
Աստուածածին, մի անտես առ-
ներ զաղաչանս մեր ի կարիս
մեր, այլ յամենայն վտանգէ ապ-
րեցո զմեզ, մշտակոյս փառա-
ւորեալ և օրհնեալ:

Ո՛վ տիրուհի մեր, ո՛վ միջ-
նորդ մեր, ո՛վ բարեխօս մեր,
ընդ որդւոյ քում հաշտ արա
զմեզ, որդւոյ քում յանձն ա-
րա զմեզ, և տարեալ կացո զմեզ
յանդիման որդւոյ քո:

Ա Ղ Օ Թ Ք

Առ սուրբ Գովհնիկոս

Ո՛վ սուրբ Գովհնիկէ, յիշեալիք զվաստակս քո առաջի Քրիստոսի, և աղաչեա զնա վասն թափուր 'ի բարեաց ժողովըրդեան քո: — Ամէն:

Արժանի արա զմեզ փառաւորել զքեզ Կոյս ամենօրհնեալ:

— Եւ տուր մեզ զօրու թիւն ընդդէմ թշնամեաց քոց:

Բարեխօս լեր վասն մեր, ո՛վ երանելի Գովհնիկոս:

— Զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Փրկեա, Տէր, զծառայս քո և զաղախնայս:

— Աստուած մեր, զյուսացեալքս ի քեզ:

Լեր մեզ, Տէր, աշաարակ հօր:

— Յերեսաց թշնամւոյն:

Տէր լուր աղօթից մերոց:

— Եւ աղաղակ մեր առ քեզ եկեսցէ:

Զմաղթանս ծառայից քոց, լուր մարդասէր Տէր, որպէս զի ժողովեալքս ի կատարել զյիշատակ Սրբուհւոյ Աստուածածնի, նորին բարեխօսութեամբն աղատեսցուք ի հասեալ նեղութեանէս: — Ամէն:

Աստուած ամենակալ, խընդրեմք ի քէն, տուր մեզ զի որ ծանրացեալքս եմք մեղօք մերձ յընկղմել, բարեխօսութեամբ երանելւոյ Հօրն մերոյ Գովհնիկոսի խոստովանողին քո, եւ սրբոյն Քրիզոստի Լուսաւորչին, յարուցեալ կանգնեսցուք: — Ամէն:

Ամենակալ և անսկիզբն Աստուած, որ տէրդ ես ամենայն

իշխանութեանց եւ պետութեանց, նայեա յօգնութիւն հաւատացելոց. զի ազգք անհաւատից եւ հերձուածողաց՝ որք սպառնացեալ ի վերայ մեր խրոխտան, ընդ ամենազօր աջովդ ընկճեսցին: — Ամէն:

Նայեա Տէր յաղօթս մեր, եւ ուղղեա զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան եւ փրկկութեան. որպէս զի ե յերս մեր յաստեաց՝ քե յերկնաչու ճանապարհին սաշտպանեալ լիցուք: — Ամէն:

Արձակեա, Տէր, զհոգիս ամենայն հաւատացեալ ննջեցելոց յամենայն կապանաց մեղաց, զի ընդ սուրբս քո յարուցեալ ցնծասցեն ի յաւիտենական փառսրն, Քրիստոսիւ Յիսուսիւ տերամք մերով: — Ամէն:

Օգնականութիւնն Աստուծոյ եղիցի ընդ մեզ հանապաղ: — Ամէն:

Աղջոյն ընդ բեզ Մարիամ, տիրուհի երկնաւորաց, մայր թագաւորին հրեշտակաց, ծաղիկ կուսանաց. որպէս զվարդ եւ զշուշան սփռեա զաղաչանս մեր առաջի որդւոյ քո վասն փրկութեան հաւատացելոցս: — Ամէն:

Օրհնեսցէ զմեզ սուրբ կոյս Մարիամ Աստուածածին, հանգերձ բարեգութ որդւովն իւրով: — Ամէն:

Մաղթանք լորետեան՝ Տէր Աղօրմեա տես 277:





Ե Ր Ե Ք Օ Ր Ե Ա Յ

ԿԱՄ

ԻՆՆՕՐԵԱՅ ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻԻՆ

ԱՌ Ս • ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ԼՈՒՐԴԻ

Աղօթք վասն հիշանդաց

Ո՛վ կոյս անարատ յղացեալ,
ահաւասիկ ես խոնարհ ու ջեր-
մեռանդ հոգւով քու սուրբ Սե-
ղանիդ սաքը ինկած ինչպէս
երբեմն Բեռնարդինէ այրին
առջեւը, ուր որ հաճեցար յայտ-
նի կերպով երեւնալ նմա,
որպէս զի քարոզես քու որդւո-
ցըդ ապաշխարու թիւն ու մե-

զայ թողու թիւն , պատրաստ
 եմ ես կրելու իմ և եղբարցս
 մեղքերը քաւելու համար . ուս-
 տի և այս հիւանդս՝ որուն հա-
 մար կ'աղօթեմ սիրով , յօժար
 է խմելու ապաշխարութեան
 դառն բաժակը . ու ես Աստու-
 ծոյ կը յանձնեմ , որ հաճի
 քու ամենազօրաւոր միջնորդու-
 թեամբդ , պահելով նորա հոգ-
 ւոյ առողջութիւնը , պարգեւէ
 նաև մարմնոյ առողջութիւնը :
 Ո՛վ կոյս Մարիամ , գիտենք որ
 ամենազօրաւոր է քու բարե-
 խօսութիւնդ յերկինս . արդ ո՞վ
 կրնայ ուրեմն քեզմէ աւելի զօ-
 րաւոր միջնորդ ըլլալ Աստու-
 ծոյ առջև : Իսկ ես պաշտպան
 խեղճերուն , դու ես օգնական
 տկարներուն , դու ես որ կը
 բժշկես հիւանդներ , դու ես որ
 կը մխիթարես տրամեալներ ,
 դու ես որ կու տաս շնորհք , և
 այնչափ աւելի առատ , որչափ

նսքա աւելի խեղճ են ու զուրկ
 մարդկային ամէն օգնութենէ :
 Ո՛վ կոյս Մարիամ , դու ես մեր
 հովանին և պաշտպան՝ Աստու-
 ծոյ բարկութեան դէմ , դու ես
 մեր լոյսը՝ մեղաց խաւարի մէջ .
 դու առաջնորդէ մեզի , դու
 սար զմեզ Հօր երկնաւորի ծա-
 ցը : Իսկ ես խնայութիւն ար-
 գիտին , քաջալերութիւն տկա-
 րին , խաղաղութիւն տարակու-
 սելոյն . դու ես աղբիւր անա-
 պատի մէջ , ապաւէն ալէկոծու-
 թեան մէջ . դու ես հանգիստ
 մեր , դու ես օղ , արիւն , սիրտ ,
 ջերմութիւն ու կեանք մեզի
 պէս խեղճերուս : Մի՛թէ դուն
 չէիր , ո՞վ կոյս Մարիամ , որ ի
 Լուրդ և ուրիշ տեղեր քու
 փառաւոր անունդ կանչելով , և
 խմցընելով այրին հրաշագործ
 ջուրը , առողջութիւն տուիր
 այնչափ հիւանդաց , մեծամեծ
 հրաշքներ գործելով : Արդ , չեմ

տարակուսիր, ո՛վ կոյս Մարիամ,
 որ կը լսես հիւանդիս հառա-
 ջանքները, որ ինքզինքը քեզի
 յանձնած է, կը լսես անտարա-
 կոյս նորա բարեկամաց ու ազ-
 գահանաց աղաչանքները, կը
 լսես քահանայից սուրբ աղօթ-
 քը, որոնք ամէնքն ալ կը յու-
 սան քու գթութենէդ եւ
 մէկ բերան կ'աղաղակեն օգնու-
 թիւն ու մխիթարութիւն: Ո՛վ
 կոյս Մարիամ, արտասուօք կ'ա-
 ղաչեմ, մի՛ թողուր ունայն ու
 պարասի մի՛ հաներ հիւանդիս
 յոյսը, որով քեզի կը դիմէ, քու
 մայրական գթութեանդ ասպա-
 լինած, ամէր, կ'աղաչեմ, կա-
 տարեալ առողջութիւն, որով
 շուտով դառնամ այս սուրբ
 սեղանիդ առջեւը շնորհակալու-
 թեան աղօթքս ճատուցանելու,
 ու յաւիտեանս յաւիտենից օրհ-
 նելու ու բարեբանելու զքեզ
 ամէն:

(Երեք ողջոյն զոչրցէ,
 Մաղրանք և սպս ետևի ա-
 ղօթքներն ալ կատարէ):

ՄԱՂԹԱՆՔ

Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԼՈՒՐԴԻ



էր ողորմեաց:
 Քրիստոս ող:
 Տէր ողորմեաց:
 Քրիստոս լուր
 մեզ:
 Հայր երկնաւոր
 Աստուած, ու-
 ղորմեա մեզ:
 Որդի Փրկիչ աշ-
 խարհի Աստուած, ողոր:
 Հոգիդ սուրբ Աստուած, ող:
 Սուրբ Երրորդութիւն մի Աս-
 տուած, ող:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
մայր Աստուծոյ, աղաչեա
վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ հաճեցար երեւել մինչեւ
ուրթ տասն անգամ, աղաչեա
վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ ասացեր՝ Ես եմ անարատ
յղութիւն, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ ընտրեցեր մանուկ մի ան-
շուք, որպէս զի և մեր ուս-
ցուք լինել պարզամիտ և ան-
մեղ, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ ընտրեցեր զլերինս, զի
յորդորեսցես զմեզ մերձենալ
յերկինս, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ հաճեցար ընտրել զերկիր
Գաղղիացոց, աղաչեա վասն
մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,

որ երեւեցար յայրի միում
իրեւ զաղաւնին խորհրդական
ի ծերպս վիմին, աղաչեա
վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ ժպտեցար՝ զի հրաւիրես-
ցես զմեզ ի յոյս ակնկալու-
թեան, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ կրէիր ի գօտեոջ քում
զվարդարան սուրբ, զի յոր-
դորեսցես զմեզ յաղօթս, ա-
ղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ ունելով ամբարձեալ զաշ-
տղ յերկինս, խրատէիր զմեզ
ուղղել զսիրտս մեր ի բար-
ձունս, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ կրէիր վարդս ի վերայ ո-
տից քոց, զի ուսուսցես մեզ՝
թէ եղբայրսիրութեան պարտ
է ուղղել զընթացս մեր, ա-
ղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ խրատեցեր զմեզ քապաշ-
խարել, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ խնդրեցեր սղօթս վասն
մեղաւորաց, աղաչեա վասն
մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ բղխեցուցեր աղբիւր ըս-
քանչելի, աղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որ յաղթող եղեր ամենայն
հակառակութեանց անհաւա-
տից և ամբարշտաց, աղաչեա
վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
որոյ այցելութիւն առ մեզ
նշան է՝ թէ չէ զմեզ Աստու-
ծոյ ի սպառ լքեալ, աղաչեա
վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
քաղցր ակնկալութիւն սրան-
դ ըխտաց, աղաչեա վասն
մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
բժիշկ ամենայն ախտից, ա-
ղաչեա վասն մեր:

Սուրբ Աստուածածին Լուրդի,
մխիթար վշտացելոց, աղա-
չեա վասն մեր:

Խնդրեմք ի քէն կատարել ի
մեզ զնպատակ տեսչեանց քոց.
Ս. Աստուածածին Լուրդի
լուր մեզ:

Տուր յաղթութիւն Ս. Եկե-
ղեցւոյ . Ս, Աստուածածին
Լուրդի լուր մեզ:

Պաշտպան լեր Սրբոյ Աթոռոյն,
որ հռչակեաց զքեզ անսրաս
յղացեալ. Ս. Աստուածածին
Լուրդի լուր մեզ:

Մի՛ հանդուրժեր զի դադարեա-
ցէ հայրենիքս մեր լինել քո
աշխարհ սիրելի, Ս. Աստուա-
ծածին Լուրդի լուր մեզ:

Տուր մեզ զհաւատս և զմեծա-
մեծ առաքինութիւնս . Ս.
Աստուածածին Լուրդի լուր
մեզ:

Չնչեա զոգի ապստամբութեան
և զապերասան ցանկութիւն
զբօսանաց, որք էն վիշտք ժա-
մանակիս. Ս. Աստուածածին
Լուրդի լուր մեզ:

Ունկնդիր լեր հեծութեան ա-
մենեցուն որ կարդան առ
քեզ Ս. Աստուածածին Լուր-
դի լուր մեզ:

Սրբեա և ջեռո զսիրտս մեր, զի
առաւելագոյն արժանի լիցուք
լինել լսելի. Ս. Աստուածա-
ծին Լուրդի լուր մեզ:

Վասն ծնողաց մերոց աղաչեմք,
Ս. Աստուածածին Լուրդի,
լուր մեզ:

Վասն բարեկամաց մերոց եւ
թշնամեաց աղաչեմք, Ս. Աս-
տուածածին Լուրդի, լուր
մեզ:

Վասն անհաւաստից և հերձուա-
ծողաց աղաչեմք. Ս. Աս-
տուածածին Լուրդի, լուր
մեզ:

Գառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի խնայեա ի
մեզ Տէր:

Գառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի, անսա մեզ
Տէր:

Գառն Աստուծոյ որ բառնաս
զմեղս աշխարհի, ողորմեաց
մեզ Տէր:

Քրիստոս լուր մեզ. Քրիստոս
անսա մեզ:

Լեր բիւրիցս բարեբանեալ, ո՛վ
Ս. կոյս Մարիամ, վասն ա-
նարաա յղութեան քո:





ԱՂՕԹԻՔ

Ո՛վ կոյս անարատ յղացեալ, մայր մեր, գուն որ արժանի ըրիր անծանօթ ու խեղճ աղջիկ մը քու հրաշալի տեսութեանդ, տներ աղաչեմք մեզի շնորհքը, որով ա-

պրինք այս անցաւոր աշխարհիս մէջ խոնարհութեամբ ու պարզութեամբ սրբոց նման, և այնպէս երկնային փառքին արժանանանք: Տուր աղաչեմք շնորհքը, որ կարենանք ապաշխարել մեր անցեալ մեղքերը, ու ապրինք այսուհետև հեռու ամէն տեսակ մեղքէ, որով միշ-

տը քրիստոնէական առաքինութեամբ զարդարուելով, քու քաղցրագութ սիրտդ բացուի միշտ մեր վրայ, ու կաթեցընէ մեր մեղօք մեռած սրտերու մէջ՝ այն սուրբ արիւնը՝ որ կը կենդանացընէ ու կը բորբոքէ աստուածային սիրով, արժանի ընելով յաւիտենական արքայութեան. ամէն:

ԱՂՕԹԻՔ

որ և իցե շնորհք խնդրելոս:

Ո՛վ կոյս անարատ յղացեալ, ահա քու սիրելի պատկերիդ առջեւը տմենայն շերմեռանդութեամբ ինկած, որ թէպէտ եւ չուենիմ ես այն գեղեցիկ բաղդը, որով կարենամ տեսնել քու կենդանի ու լուսաւոր գէմքդ, ինչպէս որ բաղդ ունեցաւ քու

սիրելի աղախինդ Բեռնարդե-
 նէ, որ զմայլած քու գեղեց-
 կութեան շուսէդ, յափշտա-
 կուած էր ամենաքաղցր սիրով,
 բայց ես ալ կը զգամ որ ինձի
 մօտ ես, ո՛վ կոյս Մարիամ, վասն
 զի ուր որ դառնամ՝ կը տես-
 նեմ շնորհք, ու հրաշք անթիւ,
 զոր կ'ընես խեղճմարդկութեան,
 հիւանդներու, թշուառներու,
 ցաւագարներու, որոնք ամէն
 կողմէն քեզի կը գիմեն հաւատ-
 քով: Ո՛վ Ս. Աստուածածին, իմ
 հաւատքս ալ մեծ է ու կեն-
 դանի՝ քու կարողութեան վրայ,
 որուն յայտնի ապացոյց կու-
 տաս ամէն օր, ամէն վայրիկեան:
 Ուստի խոնարհաբար և լի սիրով
 կ'աղաչեմ ու կը պաղատիմ,
 ցուցուր քու հրաշագործու-
 թիւնդ այս իմ հիւանդիս վրայ,
 որուն համար կ'աղօթեմ առ-
 քեզ: Հանա, ո՛վ Մայր սիրելի,
 մխիթարէ զինքը և պարգեւէ այն

շնորհքը, որուն մեծապէս կա-
 րօտ է: Ո՛վ Սրբուհի Մարիամ,
 իրաւցընէ մայր ես Աստուծոյ,
 բայց միանգամայն մեր մայրն
 ալ ես. թագուհի ես բոլոր
 տիեզերաց, որպէս զի ցուցընես
 ամենուն վրայ քու իշխանու-
 թիւնդ ու գթութիւնդ, ցու-
 ցուր ուրեմն, ո՛վ կոյս ամենա-
 սիրելի, իմ հիւանդիս վրայ,
 այս խեղճիս վրայ, որ բոլորո-
 վին քեզի ապաւինած է, քու
 կարողութեան նոր հրաշք մ'ալ:
 Ո՛վ Մարիամ, աստղ ծովային, և
 նաւահանդիստ նաւակոծելոց,
 մի՛ մերժեր զմեզ, որ ալէկոծու-
 թեան մէջ ենք ու քեզի կ'ա-
 պաւինինք. լսէ ուրեմն ո՛վ Մայր
 սիրելի, ու մխիթարէ զմեզ, ո՛վ
 քաղցր, ո՛վ անոյշ կոյս Մարիամ.
 Ամէն:

(Երեք Ողջունիւ՝ մաղթանքն ասա):

Ա Ղ Օ Թ Ք

Հրաշագործ ջոշրը խմողիև,
կամ ջոշրը հիշանդիև տոշողիև:

Աստուած իմ, ես խեղճ ու
ղոմելի մեղաւոր մի եմ, անար-
ժան ձայնս բարձրացնելու քե-
զի, և մօտենալու իսկ այս օրհ-
նեալ և հրաշագործ ջրոյն: Բայց
այս իմ խեղճութեանս համար,
ամենողորմ Աստուած, ողոր-
մեա ինձի: Աստուած իմ եւ
Տէր, լի հաւատքով կը գիմեմ
քեզի և ինքզինքս քեզի կը յան-
ձնեմ բողոքովին, աւելի ապահով
ըլլալու համար՝ միջնորդ կը
բռնեմ առ քեզ զամենասուրբ
Աստուածածին Մարիամ: Ի
խորոյ սրտի իմոյ և հեծու-
թեամբ, որուն մէջ ընկղմած
եմ, առ քեզ կը բարձրացնեմ

հառաչանքներս ու պաղատանքս,
և ամենայն հաւատքով կը խմեմ
այս ջրէն, զոր Բեռնարդինէ
աղախնայդ հրամայելով՝ բղխե-
ցուցիր հրաշափառապէս Լուր-
դի այրին ժայռերէն, և որով
այնչափ հրաշագործութիւններ
կատարեցիր ու կը կատարես
ամէն օր:

Մայր գթութեան, հաս ինձ
օգնութեան, աղատէ զիս իմ
ցաւերէս, որով կը նեղուիմ ու
կը տանջուիմ, ողորմէ ինձի ու
պարգեւէ փափաքած շնորհքս:

Ո՛վ Մարիամ անարատ յղա-
ցեալ, աղաչեա վասն իմ որ
քեզի կը գիմեմ:

(100 օրուան ներողութիւն ունի):

Ա Ղ Օ Թ Ք

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ



որ և իցե շնորհք
ընդոռնելի
վերջ :

Ո՛վ կոյս անա-
րատ յղացեալ,
որ ընտրուած
ես Աստուծմէ ի
յաւ ի տէն ից՝
մարդկան ազգի
փրկուածեան
գործակից ըլլա-
լու, աստուա-
ծային ի մաս-
տուածեան խոր-
հըրդոց մէջ խոր-
հըրդակից ըլ-
լալու, աստուա-
ծային շնորհաց

գանձարան ու բաշխող ըլլալու,
ահա եկեր եմ ես այսօր խո-
նարհաբար շնորհակալ ըլլալու
առաջի այն աստուածային մեծ-
փայելչութեան աթոռոյն, յո-
րում բարձրացուց զքեզ Հօր
Աստուծոյ բարութիւնը՝ որուն
ամենահնազանդ աղախին եղար.
միածին Արգւոյն՝ որուն մարդ-
կային բնութիւն հաղորդեցիր.
ու Հոգւոյն սրբոյ՝ որուն ան-
խոնջ գործիք մ'ես աստուա-
ծային սէր բաշխելու, ու կաթե-
ցընելու ճշմարիտ բարեպաշտից
սրտերու մէջ: Արդ, ո՛վ կրնայ
հասկընալ քու գեղեցիկ սրտիդ
փափկութիւնը, ո՛վ կոյս խոնարհ
և փառաւորեալ, քանի որ Աս-
տուած մը հաճեցաւ քեզի ու
սիրեց: Ա՛նուգեմ ու կը փափա-
քիմ ես ալ նմանելու քու այն
հրաշալի առաքինութեան զոր
ունիս դու առ Աստուած. բայց
ո՛վ կու տայ ինձի՝ սրտի այն
փափուկ սէրը: — Ա՛խ, Մա-

րիամ մայր Աստուծոյ և մայր
 իմ, դարձուր մէկ մը քու գը-
 թած աչքերդ իմ վրաս, ինչպէս որ
 երբեմն դարձուցիր քու խոնարհ
 աղախնոյդ Բեռնարդեատային
 վրայ, զոր և արժանի ըրիր քու
 հրաշալի տեսութեանդ, որպէս
 զի ես ալ կարենամ միշտ Աս-
 տուծոյ առատ բարիքներն ու
 օրհնութիւններն ընդունել .
 տուր ուրեմն կ'աղաչեմ, որ ես
 ալ վառուիմ այն բոցով, որով
 կը բորբոքէր Բեռնարդեատա,
 ու կարենամ ամբողջ սոխարհի
 յայտնել քու շնորհքներդ ու
 հրաշքներդ: Ահաւասիկ շատ ա-
 ղէկ կը տեսնեմ, ո՞վ Մարիամ,
 որ քաղցր ու հաճոյ է քե՛ն
 կոչուիլ Մայր Աստուծոյ եւ
 Մայր մեր գթած, Մայր մեր
 սիրելի, Մայր բարերար, որուն
 յայտնի ասպոցոյց տուիր ինձի:
 Ահա երախտագէտ սրտիւ կը
 դիմեմ Աստուծոյ ու քեզի. ե-
 կեր եմ մեծ շնորհակալութիւնս

մատուցանելու, լի սրտով ու
 զգացմամբ, այն մեծ շնորհքին
 համար, զոր քու հզօր միջնոր-
 դութեամբդ ընդունեցաւ հի-
 ւանդս, որուն յոյսը պարասի
 չելաւ, ո՞վ Մարիամ կոյս: Արդ,
 ինչ կրնայ ընել նա այնքան մեծ
 բարիքիդ փոխարէն: Նա սիրտ
 մը միայն ունի՝ որ կրնայ ար-
 ժանաւոր ըլլալ քեզի, և զայս
 քեզի կ'ընծայէ. սիրտ մը՝ որ
 շատ կը սիրէ զքեզ, ո՞վ կոյս
 Մարիամ, սիրտ մը որ Յիսուսի
 ու քեզի երդմամբ չափ կը խոս-
 տանայ հաւատարիմ և երախ-
 տագէտ մնալու մինչև ցմահ:
 Արդ, ո՞վ կոյս ամենագթած,
 մի՛ դադարիր աալու մեզի քու
 պարգեւներդ, որպէս զի բոր-
 բոքի մեր սիրտը՝ դեռ աւելի
 երախտագիտութեամբ ու սի-
 րով առ քեզ, և քու հրա-
 շալի սիրտդ ալ վառի բորբոքի
 դեռ աւելի սիրով առ մեզ,
 ամէն:

Տ Ե Ս Ի Լ Ք

ՍՐԲՈՒՀԻ ԵՂԻՍԱԲԵԹԻ

ԵԻ

ՍՐԲՈՒՀԻ ԲՐԻՃԻՏԱՅԻ

Սրբոզհիքն Եղիսաբէք և Բրի-
ձիտա փափաքելով իմանալ
Քրիստոսի Տեսան և երոյ չար-
չարանքները, շատ կերպ ջեր-
վեռանդոչքիւն և ջերմեռանդա-
կան աղօթքներ ըրին: Օր մը
գրաւով անոնց վրայ Յիսուս՝
իրենց երեւնալով՝ ըսաւ. « Ո՛վ
իմ սիրելիքս, որովհետև այդ-
չափ կը փափաքիք իմանալ իմ
չարչարանքս, ահա ես կը պատ-
վեմ ձեզի »:

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն



րեայք երբ բռնեցին
զիս պարտիզին
մէջ, հարիւր քսան
և երկու անգամ
զարկին գաւաղա-
նով, և երեսուն
անգամ երեսիս
զարկին ձեռքով՝
Պարտիզէն մինչև
որ տարին Աննայի
եւ Կայիափայի
տունը՝ եօթն ան-
գամ գետին ինկայ, եւ զիս
գետնէն վերցուցին, վերցուցած
ատեննին, երկու հարիւր հինգ
բռունց զարկին գլխուս, և քսան
եւ երկու անգամ սաներուս
զարկին գաւաղանով, մէջքիս ու

կանակիս զարկին քսան և ութ
անգամ:

Չուանով գետնին վրայ քա-
շեցին երեսուն անգամ. ա՛հ ը-
նելով՝ հառաչեցի հարիւր հինգ
անգամ:

Մօրուքէս բռնեցին, գետնին
վրայ քաշեցին երեսուն անգամ:

Սեանը կապեցին զիս ու զար-
կին հազար վեց հարիւր վաթ-
սուն և հինգ բռունց, գաւազան
ու խարազան, և զիս սեանը
կտալած առե՛ննին՝ հրեցին զար-
կին գլխուս հազար անգամ:

Երբ խաչը կանակս բարձին՝
երեք անգամ անխնայ գետինը
ձգեցին զիս՝ մեռցընելու հա-
մար: Շատ անգամ երեսս թքին՝
զիս բռնող և չարչարող դահիձ-
ները, որ էին հինգ հարիւր
հոգի:

Մարմնոյս վրայ շատ տեղ
վերքեր բացուեցան, և բոլոր
մարմնէս վազած արիւնին կա-
թիլներն 17002 կաթիլ է:

Ուստի, նախ, թէ որ մէկը
մինչև տասներկու տարի ըսէ
օրը եօթն Հայր մեր և եօթն
Ողջոյն, որ է իմ այս թափած
արեան կաթիլներուս թիւն,
կ'ընդունի լիակատար ներողու-
թիւն, թէ որ խոստովանի ու
որբուժիւն առնու, մաքրուելով
մեղքերէն: — Երկրորդ, կ'ա-
զատեմ զինքը քաւարանէն: —
Երրորդ, թէ որ տասներկու
տարին չլինցուցած՝ մեռնի, այս
ջերմեռանդութիւնը ամբողջա-
պէս կատարած կը համարուի:
— Չորրորդ, իմ անուանս հա-
մար արիւն թափող մարտիրո-
սաց վարձքը՝ կ'ընդունի: — Հին-
գերորդ, մեռնելու ժամանակն
ես կու գամ կ'առնում իր հո-
գին, և որչափ որ քաւարանին
մէջ ազգական ճուռի՝ մէկտեղ
կ'առնեմ Արքայութիւն կը տա-
նիմ: — Վեցերորդ, որ տան
մէջ որ գանուի այս ջերմեռան-

դուժիւնս ընողն, այն տանը
 մէջ ամենեւին սատանայական
 փորձուժիւն չըլլար, և գիշեր
 ատեն գէշ երազներ չի տես-
 ներ: — Եօթներորդ, յանկար-
 ծական մահուամբ չի մեռնիր՝
 այս աղօթքս ջերմեռանդու-
 թեամբ ընողն: — Ութերորդ,
 այս աղօթքը ընող կնիկ մար-
 գիկ առանց վտանգի կը ծնանին
 իրենց դաւակները: — Իննե-
 րորդ, ամենեւին սատանայական
 կախարդութիւններ չի անցնիր
 այս ջերմեռանդութիւնս ընո-
 ղին վրայ:

Այս աղօթքս ջերմեռանդու-
 թեամբ կատարողն՝ թող ինգրէ
 Աստուծմէ շնորհք և բարեխօ-
 սութիւն Մօր Տեառն, որ միշտ
 գթութիւնն անպակաս ընելով՝
 ջերմեռանդութիւնն աւելցնէ,
 վառէ միշտ սիրար սիրով եւ
 չհեռանայ ջերմեռանդութենէ:

Ա Ղ Օ Թ Ք

Քեզ կ'աղաչեմ, Յիսուս փր-
 կիչ, և զքեզ գովեմ ամենաս-
 տեղծիչ, ողորմեա ամենայն
 Քրիստոնէից և բովանդակ աշ-
 խարհի:

Ո՛վ գթած Յիսուս, կ'աղաչեմ
 քեզ, աւելցուր իմ ջերմեռան-
 դութիւնս, որ կարենամ միւս
 աշխարհի հանգստութիւն գրա-
 նել յաւիտեանս յաւիտենից:
 Ամէն:



Յ Ա Ն Կ

Խրատք քրիստոնէական կեննաց 3
Աղօթք առաւօտեան 11
Մտածութիւնք վասն աւուրց
եօթնեկի 17
Յիսուսի չարչարանաց վրայ
չարաթական մտածականներ 58
Աղօթք Պատարագի 112
Աղօթք խոստովանութեան և
հաղորդութեան 131
Աղօթք առաջի խաչելութեան 162
Աղօթք այցելութեան առ ամե
նասուրբ ճաղորդութիւնն . 166
Ներգործութիւն հոգևորական
հաղորդութեան 168
Այցելութիւն առ սուրբ Աս-
տուածածին 170

Աղօթք աստուածաշնորհութեան
և հաւատոց ամման համար. 192
Աղօթք առ սուրբ Կոյսն թա-
գուհի առաքելոց 194
Ջերմեռանդական դիտաւորու-
թիւնք 196
Աղօթք առ սուրբ Երրորդու-
թիւն 198
Աղօթք ի փոխարէն մարդ-
կանց մեղքերուն 200
Աղօթք վշտաց և նեղութեանց
միջոց 202
Ճանապարհ խաչի 204
Կրթութիւն ջերմեռանդութեան
սրտին Յիսուսի 231
Նօթն նուէրք քրիստոսի ան-
գին արեանը 239
Աղօթք առ սուրբ Հոգին . . . 243
Կրթութիւն ի պատիւ ցաւա-
գին սրտին Մարիամու . . 245
Աղօթք առ սուրբ Կոյսն . . . 249
Աղօթք առ Միքայէլ հրեշտա-
կապետ 254
Աղօթք առ պահապան հրեշ-
տակն 255
Ցաւք և ուրախութիւնք Ս. Յով-
սէփայ 257

Աղօթք առ Ս. Առաքեալս Պե-
տրոս և Պօղոս 264

Աղօթք առ Ս. Ստանիսլաւոս 265

Աղօթք առ Ս. Լուիճի կոմ-
ձակա 270

Խորհուրդք վարդարամի 272

Պաղատանք առ Ս. Կոյսն 277

Աղօթք բարի մահ ունենալու
համար 283

Համառօտ Քրիստոմէական
վարդապետութիւն 289

Իղծք առ Մարիամ կոյս անա-
րատ 300

Տեառն ներսեսի չայոց կաթո-
ղիկոսի ողբերգութիւնն ան-
ձին զղջացելոյ, և բողոք
իւրաքանչիւրոյ դիմի խոս-
տովանաբար 302

Տեառն ներսեսի չայոց կա-
թողիկոսի երգ աղօթական
ի դէմս սրբոյ Երրորդու-
թեան, և իւրաքանչիւրոյ
դիմի Երրորդութեան ա-
ռանձնակի 307

Մաղթանք զօրաւորք ընդդէմ
արհաւրաց գիշերայնոց՝ սրբ-
րոյն Գրիգորի մարեկացւոյ. 313

Աղօթք զօրաւորք սրբոյն Գրի-
գորի մարեկացւոյ 316

Աղօթք իւրաքանչիւր անձին
հաւատացելոյ՝ ի Քրիստոս,
զոր արարեալ է Տեառն ներ-
սեսի չայոց կաթողիկոսի 318

Աղօթք Մանասէի թագաւորին 328

Տետրակ սուրբ վարդարա-
նին. որ ասացեալ լինի ի
պատիւ ամենասրբուհւոյ
Աստուծածնին 333

Խորհրդածութիւն սուրբ վար-
դարամին —

Եղանակ դիւրին ասելոյ զվար-
դարանն 339

Խրատ յաղագս կերպի ասելոյ
զսուրբ վարդարանն. 342

Աղօթք վարդարանին ի խոր-
հուրդ ուրախութեան սուրբ
Աստուծածնի 348

Յաւուր Երկուշաբաթի, Երեք-
շաբաթի և Շաբաթու —

Ի խորհուրդ չարչարանացն
Քրիստոսի 358

Յաւուր Չորեքշաբաթի և Ուր-
բաթու —

Ի խորհուրդ վառաւորութեան
Քրիստոսի 368

Յաւուր Կիւրակէի և Տիմզաբա
թու —

Աղօթք առ սուրբ Կոյսն Մա-
րիամ 378

Աղօթք առ սուրբ Դոմինիկոս 380

Երեքօրեայ կամ իմնօրեայ
ջերմեռամդութիւն առ Ս.
Աստուածածին Լուրդի . . . 385

Աղօթք վասն հիւանդաց . . . —


Մաղթանք Ս. Աստուածածնի
Լուրդի 389

Աղօթք որ և իցէ շնորհք խըն-
դրելու 397

Աղօթք ով որ կ'առնու ու կը
խմէ հրաշագործ ջուրը կամ
ով որ կու տայ հիւանդիմ
այն ջրէն 400

Աղօթք շնորհակալութեան որ
և իցէ շնորհք ընդունելէ
վերջը 402

Տեսիլք սրբունի Եղիսաբեթի
և սրբունի Բրիճիտայի . . . 406



0014962

2013
2001

« Ազգային գրադարան



NL0014962

